



Center for European Studies



Global Campus
Caucasus

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ

**ԵԱՏՄ երկրների
ֆադաֆալկան
կայունության
մարտահրավերները.
Քաղաքական
գործոնների ինդեքսը**

ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



Global Campus
of Human Rights

This document has been produced with the financial assistance of the European Union and as part of the research activities of the Global Campus of Human Rights. The contents of this document are the sole responsibility of the authors and can under no circumstances be regarded as reflecting the position of the European Union or of the Global Campus of Human Rights.

POLITICAL STABILITY CHANGES IN THE EEU COUNTRIES: POLITICAL FACTORS INDEX

ARUSYAK ALEKSANYAN

ASHOT ALEKSANYAN

YEREVAN
YEREVAN STATE UNIVERSITY PRESS
2021

**ԵԱՏՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ**

ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

Հ ՏԴ 323
ԳՄԴ 66.3
Ա 296

*Հրատարակության են երաշխավորել
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
ու Եվրոպական ուսումնասիրությունների
կենտրոնի գիտական խորհուրդները*

Ալեքսանյան Ար. Ս., Ալեքսանյան Ա. Ս.

Ա 296 ԵԱՏՄ երկրների քաղաքական կայունության մարտահրավերները.
Քաղաքական գործոնների ինդեքսը: Ար. Ս. Ալեքսանյան, Ա. Ս. Ալեք-
սանյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2021, 116 էջ:

Աշխատության մեջ վերլուծված են Եվրասիական տնտեսական միության կայունության
և եվրասիական ինտեգրման ընթացակարգերը: Քաղաքական համակարգի կայունության
ինդեքսի մեթոդաբանության միջոցով համեմատական վերլուծության են ենթարկված ԵԱՏՄ
անդամ պետությունների քաղաքական կայունության և ինտեգրման նոր օրակարգի քաղա-
քական գործոնները՝ ուշադրություն դարձնելով անընդհատ կատարելագործվող իրավապայ-
մանագրային պարտավորությունների բովանդակությանն ու ներդաշնակեցվող միջպետա-
կան հարաբերություններին:

Աշխատությունն ընդգրկում է ԵԱՏՄ անդամ պետությունների քաղաքական կայու-
նությունը պայմանավորող մի շարք գործոնների համակողմանի ուսումնասիրությունները
2000-2019 թվականներին: Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբա-
նության շրջանակում կատարվել են ներերկրային և միջերկրային վերլուծություններ:

Սույն աշխատանքը նախատեսված է համալսարանների և գիտահետազոտական
կենտրոնների գիտնականների, փորձագետների և ուսանողների համար:

Հայաստանի ազգային գրադարանի համահավաք գրացուցակ:

*Այս գրքի փվյալները գրանցված են համահավաք գրացուցակում և հասանելի են Հայաստանի ազգային
և Երևանի պետական համալսարանի գրադարաններից:*

ՀՏԴ 323
ԳՄԴ 66.3

ISBN 978-5-8084-2510-1

DOI: <https://doi.org/10.46991/YSUPH/978580842510-1>

© Հեղինակներ, 2021

© ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, 2021

© ԵՊՀ հրատարակչություն, 2021

Հետազոտության մասնագիտական խմբագիր՝

Արուսյակ Ալեքսանյան

ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի դասախոս, փորձագետ, քաղաքական գիտությունների թեկնածու

ԵՈՒԿ գիտաշխատող՝

Աշոտ Ալեքսանյան

ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի փորձագետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հետազոտական խմբի խորհրդատու՝

Վլադիմիր Մարտիրոսյան

ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի փոխտնօրեն, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գրախոսներ՝

Գարիկ Քեոյան

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական հնստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալեքսանդր Մարգարով

ԵՊՀ պրոռեկտորի տեղակալ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Head of the Research, Editor

Arusyak Aleksanyan

Expert, Lecturer at Center for European Studies, YSU, Doctor of Philosophy in Political Science

CES Research fellow

Ashot Aleksanyan

Expert, Lecturer at Center for European Studies, YSU, Degree of Doctor of Sciences (Political Sciences), Professor

Research Adviser

Vladimir Martirosyan

Deputy Director of the Center for European Studies, YSU, Doctor of Philosophy in Political Science, Associate Professor

Readers

Garik Keryan

Head of Chair of Political Institutions and Processes, Degree of Doctor of Sciences (Political Sciences), Professor

Alexander Markarov

Deputy Vice-rector of YSU, Degree of Doctor of Sciences (Political Sciences), Professor

Aleksanyan, Arusyak and Ashot Aleksanyan. 2021. Political Stability Challenges in the EEU countries: Political Factors Index. Yerevan, YSU press, 116 p.

This book analyses procedures for ensuring Eurasian Economic Union political stability and promoting Eurasian integration. The political factors of stability and new integration agenda of the EEU member states have been comparatively analyzed by the application of the methodology of the Stability Index of Political System with careful consideration of continually improving the context of legal obligations and harmonizing interstate relations. The book covers a comprehensive study of a number of factors determining the political stability of the EEU member states within 2000-2019. In-country and Cross-country analyses have been conducted within the framework of methodology of the Stability Index of Political System. This book is intended to be used by scholars, experts and students at universities and research centers.

The National Library of Armenia Cataloging-in-Publication Data.

A catalog record for this book is available from the National Library of Armenia and Library of Yerevan State University.

Հապավումներ և համառոտագրություններ

Ա	Առևտրաշրջանառության ծավալ
ԱԳ	Արևելյան գործընկերություն
ԱԽ	Անվտանգության խորհուրդ
Ադք.	Ադրատության մակարդակ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԲԴ	Բյուջեի դեֆիցիտ
ԲՀ	Բելառուսի Հանրապետություն
Գ	Գնաճ
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԵՄ	Եվրոպական միություն
Զբ.	Զբաղվածության մակարդակ
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ԻԱ	Իրական աշխատավարձ
ԿԸԻ	Կոռուպցիայի ընկալման ինդեքս
ՀԱ	Հակամարտության առկայություն
ՀԱՊԿ	Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն
ՀԺԺ	Համաբելառուսական ժողովրդական ժողով
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՌԻ	Համաշխարհային ռազմականացման ինդեքս
ՀՔ	Հանցագործությունների քանակ
ՂԺՎ	Ղազախստանի ժողովրդի վեհաժողով
ՂՀ	Ղազախստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միացյալ ազգերի կազմակերպություն
ՄԳՄՃ	Մեկ գոտի, մեկ ճանապարհ
ՄԶՀ	Մարդկային զարգացման համաթիվ
ՆԱՏՕ	Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպություն
ՊՊԾ	Պարեկապահակային ծառայություն
ՋԻ	Ջինի ինդեքս
ՌԱԱԴ	Ռուսաստանի անկախ արհմիությունների դաշնություն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն

ԱԳԻ	Աղցիալական գործոնների ինդեքս
ՍԽ	Սահմանադրական խորհուրդ
Ստ.	Սովետային տնտեսության մակարդակ
ՏԱԻ	Տնտեսական ազատության ինդեքս
ՏԳԻ	Տնտեսական գործոնների ինդեքս
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏՎ	Տնտեսության վարկավորման ծավալ
ՔԱ	Քաղաքացիական անհնազանդություններ
ՔԱԻ	Քաղաքացիական ազատությունների ինդեքս
ՔԳԻ	Քաղաքական գործոնների ինդեքս
ՔԻԻ	Քաղաքական իրավունքների ինդեքս
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՔՀԿԻ	Քաղաքական համակարգի կայունության ինդեքս
ՕՈՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակների մասին.....	11
Ներածություն	12
<i>Արուսյակ Ալեքսանյան</i>	
Կարարման ամփոփագիր	15
<i>Արուսյակ Ալեքսանյան</i>	
1. Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանությունը.....	18
<i>Արուսյակ Ալեքսանյան</i>	
2. Կայունության ներքին և արտաքին քաղաքական օրակարգերի դիլեման Հայաստանում.....	29
<i>Արուսյակ Ալեքսանյան</i>	
3. Ռուսաստանի քաղաքական տարածության կառուցակցումը «կայունություն-անկայունություն» երկատման պայմաններում	40
<i>Աշոտ Ալեքսանյան</i>	
4. Քաղաքական տուրբուլենտության և ինտեգրացիոն գործընթացների հավասարակշռման Բելառուսի աշխարհառազմավարությունը	59
<i>Աշոտ Ալեքսանյան</i>	
5. Փափուկ և կոշտ ինտեգրման ընթացակարգերի համադրությունը Ղազախստանի կայունության ռազմավարություններում	74
<i>Աշոտ Ալեքսանյան</i>	

**6. Քաղաքական անկայունության գործոնները Ղրղզստանի
համակարգային կերպափոխումների պայմաններում 86**

Արուսյակ Ալեքսանյան, Աշոտ Ալեքսանյան

**7. ԵԱՏՄ երկրների քաղաքական համակարգի կայունության
ինդեքսի միջերկրային վերլուծություն 97**

Արուսյակ Ալեքսանյան

Անունների և հիմնաբառերի ցանկ108

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արուայակ Ալեքսանյանը քաղաքական գիտությունների թեկնածու է, Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի դասախոս և փորձագետ: Նա դասախոսում է նաև ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ամբիոնում: Նրա գիտական հետաքրքրությունների հիմնական թեմաներն են համեմատական քաղաքական վերլուծությունը, քաղաքական կայունության և ժողովրդավարության ինդեքսները և մեթոդները, քաղաքական տեխնոլոգիաները: 2009 թ.-ին Արուայակ Ալեքսանյանը թեկնածուական ատենախոսության շրջանակում մշակել է Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանությունը, իսկ 2012 թ.-ին ՀՌԿԿ-Հայաստան և Նյու Յորքի «Կարնեգի» կորպորացիայի հետազոտական ծրագրի շրջանակներում՝ Ժողովրդավարության մակարդակի ինդեքսը:

Աշոտ Ալեքսանյանը քաղաքական գիտությունների դոկտոր է, ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի դասախոս և փորձագետ, քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի պրոֆեսոր: Նրա գիտական հետաքրքրությունների հիմնական թեմաներն են քաղաքացիական հասարակությունը, սոցիալական գործընկերությունը, մարդու քաղաքական իրավունքներն ու ազատությունները: Նա եղել է ԳԱՓԾ-ի (DAAD) հրավիրված գիտնական Հաննովերի Լայբնիցի և Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլյանի համալսարանների քաղաքագիտության ինստիտուտներում ու Բեռլինի ազատ համալսարանի Արևելյան Եվրոպայի ուսումնասիրությունների ինստիտուտում, ինչպես նաև ԵՄ «Էրազմուս Մունդուս» ծրագրի հրավիրված գիտնական Բելգիայի Լյուվենի կաթոլիկ համալսարանի սոցիալական գիտությունների ֆակուլտետում և Յենայի անվան Ֆրիդրիխ Շիլլերի համալսարանի քաղաքագիտության ինստիտուտում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետխորհրդային երկրների վերջին շրջանի զարգացումները վկայում են տարածաշրջանի քաղաքական տուրբուլենտության և անցումային շրջանին բնորոշ քաղաքական կայունության տատանումների մասին: ԵԱՏՄ երկրների Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պետություններից յուրաքանչյուրում ներքին և արտաքին քաղաքական գործընթացներն ինքնատիպ են, ունեն իրենց առանձնահատկությունները՝ հետընթացի և առաջընթացի յուրահատուկ հարաբերակցությամբ: Միևնույն ժամանակ այդ ինքնատիպության մեջ օրինաչափորեն դրսևորվում են առանձին գործընթացներ, որոնք, ըստ էության, պայմանավորված են աշխարհաքաղաքական և անցումային փոխակերպումների ազդեցություններով: Հակամարտության տարաբնույթ գոտիները, ընտրական գործընթացները և դրան հաջորդող քաղաքացիական անհնազանդության ալիքների բարձրացումը, իշխանության հերթափոխության անհնարինությունը, հեղափոխություններն ու հեղաշրջումները կամ դրանց փորձերը, քաղաքական և տնտեսական ճգնաժամերը այն գործընթացներն են, որոնց տարածաշրջանի երկրները պարբերաբար առերեսվում են: Այս համատեքստում ԵԱՏՄ երկրների քաղաքական համակարգի կայունության ուսումնասիրությունները առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերում:

Այսօր ԵԱՏՄ-ն, որի հիմնադրման պայմանագիրն¹ ուժի մեջ է մտել դեռևս 2015 թվականին, միավորում է հետխորհրդային հինգ պետությունների և ձգտում դառնալ հետխորհրդային հասարակությունները համախմբող առանցքային նախաձեռնություն՝ ինտեգրելով սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքներն ու խորացնելով բազմաողորտ համագործակցությունը: ԵԱՏՄ-ն ունի ԵՄ-ի սկզբունքներին համահունչ նպատակներ, և կառույ-

¹ Պայմանագիր «Եվրասիական տնտեսական միության մասին» (ընդունման վայրը՝ Աստանա, ընդունման ամսաթիվը՝ 29.05.2014, ուժի մեջ է մտել՝ 02.01.2015): <https://www.arlis.am/documentview.aspx?docID=95203> (26.02.2021):

ցի ստեղծման գաղափարի ջատագովները կարծում են, որ այն կկարողանա երկխոսության կամուրջներ ստեղծել Եվրամիության հետ: Ի հակադրություն դրա՝ շատերի համար ԵԱՏՄ-ն ապակայունացնող նախագիծ է, որում հստակ նկատվում է Ռուսաստանի գերակա դիրքը, որով և սահմանափակվում է անդամ պետությունների բնականոն համագործակցությունը թե՛ միմյանց, թե՛ առավել ևս Արևմուտքի հետ:

Միջպետական կառույցի զարգացման և տնտեսական առաջընթացի հիմնական խոչընդոտներից են ազգային տնտեսություններում առկա խնդիրները: ԵԱՏՄ անդամ բոլոր պետություններն ունեն խնդիրներ պետական կառավարման, ինքնիշխանության, անվտանգության, կոռուպցիայի, օրենքի գերակայության և այլ ոլորտներում: Քաղաքական տարբեր հարցերում ԵԱՏՄ երկրների հակադիր մոտեցումները ևս խոչընդոտում են կառույցի միասնականությունն ու տարածաշրջանային ինտեգրումը: Այդ տարածայնությունների շարքերից են Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը Ուկրաինայում, Ղրղզստանում իսլամի քաղաքականացումը, Ղազախստանի սերտ հարաբերությունները Ադրբեյջանի և Թուրքիայի հետ, ինչի պատճառով ղարաբաղյան հակամարտության հողի վրա պարբերաբար վատթարանում են Հայաստանի հետ հարաբերությունները:

Վերոնշյալ հիմնահարցերն ու դրանց ուսումնասիրություններն անշուշտ կարևոր են տարածաշրջանի զարգացման և կայունության հեռանկարների տեսակետից: Այս առումով Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանական գործիքակազմը հնարավորություն է տալիս կատարելու հիմնարար, խորքային և համալիր ուսումնասիրություններ թե՛ ներերկրային, թե՛ միջերկրային մակարդակներում:

Պետք է նշել, որ սույն աշխատանքը ԲՀԿԻ-ի մեթոդաբանության կիրառմամբ հերթական և շարունակական ուսումնասիրությունն է²:

² Ալեքսանյան, Արուսյակ (2009) «Քաղաքական համակարգի կայունության գնահատման մոդելի մասին (ՀՀ օրինակով)»: Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, Երևան, №2, էջ 92-104: Ալեքսանյան, Արուսյակ (խմբ.) (2009) Հարավային Կովկասի, ԵվրԱզԷՄ և ԵՄ անդամ պետությունների քաղաքական կայունության ինդեքսը (ներերկրային և միջերկրային վերլուծություն): Եր., Երևանի համալս. հրատ., 336 էջ: Ալեքսանյան, Արուսյակ (խմբ.) (2018) Նորանկախ երկրների քաղաքական կայունությունն արդիականացման պայմաններում (Հայաստան, Վրաստան, Ադրբեյջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա): Եր., ԵՊՀ հրատ., 384 էջ:

Ներկայացվող աշխատանքի նպատակն է գնահատել ԵԱՏՄ երկրների ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսի միտումները ներերկրային վերլուծության մակարդակում, ինչպես նաև կատարել համեմատական վերլուծություն ըստ դիտարկվող երկրների կայունության ինդեքսի և դրա առանձին ենթաինդեքսների:

Աշխատանքը բաղկացած է ներերկրային և միջերկրային վերլուծություններից:

Ներերկրային վերլուծությունը ներառում է ԵԱՏՄ անդամ պետության ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսը 2000-2019 թվականների կտրվածքով:

Միջերկրային վերլուծությունը վերաբերում է դիտարկվող պետությունների ՔՀԿԻ-ի և դրա Քաղաքական, Տնտեսական, Սոցիալական գործոնների ինդեքսների համեմատական ուսումնասիրությանն ու սանդղակավորմանը 2019 թ. դրությամբ:

Աշխատանքը բաղկացած է ներառությունից, կատարման ամփոփագրից, յոթ գլխից, ինչպես նաև անունների և հիմնաբառերի ցանկերից: Առաջին գլխում անդրադարձ է կատարվում Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանությանը: Երկրորդից վեցերորդ գլուխներում քննարկվում են Հայաստանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսները 2000-2019 թթ.: Յոթերորդ գլխում կատարվել է միջերկրային վերլուծություն, որի շրջանակում իրականացված են ԵԱՏՄ երկրների Քաղաքական համակարգի կայունության 2019 թ. ինդեքսի սանդղակավորում և համեմատական վերլուծություն:

Արուսյակ Ալեքսանյան

ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

«ԵԱՏՄ երկրների քաղաքական կայունության մարտահրավերները. Քաղաքական գործոնների ինդեքսը» գիտահետազոտական աշխատանքն իրականացվել է ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի (ԵՈՒԿ) փորձագետ և դասախոս Արուսյակ Ալեքսանյանի (ք.գ.թ.) ղեկավարությամբ և մեթոդական ցուցումներով: ԵԱՏՄ անդամ պետությունների քաղաքական կայունության գնահատման աշխատանքներին համապատասխան երկրների մասով ներգրավված է եղել Աշոտ Ալեքսանյանը (ք.գ.դ.):

Սույն աշխատանքի շրջանակում պետություններին վերաբերող ներերկրային ուսումնասիրությունում դիտարկված են ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսը, դրա միտումները 2000-2019 թթ. ժամանակահատվածում: Ինչ վերաբերում է միջերկրային վերլուծությանը, ապա այն ներառում է ՔՀԿԻ-ի Քաղաքական, Սոցիալական և Տնտեսական գործոնների ինդեքսները և պետությունների 2019 թ. վարկանիշավորումը դրանց հիման վրա:

ՔՀԿԻ-ի արժեքները որոշ տարիների կտրվածքով հնարավոր է աննշան տարբերվեն նախորդ հրապարակումների համապատասխան տարիների տվյալներից: Դա պայմանավորված է մոդելում ներմուծվող տվյալների շտեմարանների պարբերաբար վերամշակմամբ, համալրմամբ և ճշգրտմամբ: ՔՀԿԻ-ի և դրա ենթաինդեքսների արժեքների աննշան տարբերությունը նախորդ հրապարակումների համեմատ կարող է պայմանավորված լինել նաև ՔՀԿԻ-ի մոդելում նոր տվյալների ներմուծմամբ և դրա հետևանքով որոշ փոփոխականների ժամանակագրական շարքերում նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխմամբ:

Հետազոտական աշխատանքների իրականացման ընթացքում հեղինակները հիմնվել են Համաշխարհային բանկի, Առևտրի համաշխարհային կազմակերպության, Արժույթի միջազգային հիմնադրամի, Աշխատանքի միջազգային կազմակերպության, Ազգային վիճակագրական ծառայությունների, ինչպես նաև կառավարական և ոչ կառավարական միջազգային կազմակերպությունների տվյալների շտեմարանների վրա: Դրանց համատեքս-

տում ՔՀԿԻ-ի հաշվարկներում դիտարկվել են նաև վերոհիշյալ երկրների պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական հրապարակումները, բարձրաստիճան պաշտոնատար անձանց ելույթները և հարցազրույցները, փորձագիտական վերլուծությունները և ՋԼՄ-ների հրապարակումները:

2000-2019 թթ. ՔՀԿԻ-ի չափումների և համեմատական վերլուծության արդյունքում ստեղծվել է լայն ընդգրկուն ունեցող տվյալների շտեմարան:

ՔՀԿԻ-ի հետազոտության տվյալների հավաքման, մշակման և հաշվարկների իրականացման համար հիմք են հետևյալ աղբյուրները.

1. Քաղաքական գործոնների ինդեքս՝

- 1.1. օտարերկրյա ուղղակի ներդրումներ^{*}, ԱՄՆ դոլար/ՀՆԱ% (Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ, ՀԲ-ի ինդիկատորներ),
- 1.2. Տնտեսական ազատության ինդեքսը^{**} (Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ, ՀԲ-ի ինդիկատորներ),
- 1.3. Քաղաքական իրավունքների ինդեքսը («Ազատության տան» «Ազատությունն աշխարհում» զեկույց),
- 1.4. Քաղաքացիական ազատությունների ինդեքսը («Ազատության տան» «Ազատությունն աշխարհում» զեկույց),
- 1.5. Կոռուպցիայի ընկալման ինդեքսը («Թրանսպարենսի ինթերնեշնլի» զեկույց),
- 1.6. քաղաքացիական անհնազանդությունների քանակը/մակարդակը (գնահատված է հետազոտողի/հեղինակի կողմից),
- 1.7. հակամարտության առկայությունը (գնահատված է հետազոտողի/հեղինակի կողմից):

^{*} Տվյալ փոփոխականի ընդգրկումը մոդելի քաղաքական գործոնների շարքում ընդունելի է, քանի որ այն ներքաղաքական իրադարձությունների գնահատման «զգայուն» ցուցանիշ է, և քաղաքական կայունության տատանումները բավականին կարճ ժամանակահատվածում իրենց անմիջական ազդեցությունն են ունենում ներդրումների ծավալի վրա:

^{**} Տնտեսական ազատության ինդեքսն ընդգրկվել է քաղաքական գործոնների կազմում, քանի որ այն արտահայտում է նաև օրենսդրության կառուցվածքն ու սեփականության իրավունքների երաշխիքները, դատական համակարգի արդյունավետությունը և համարվում է քաղաքական կայունության ու ժողովրդավարության կարևոր ցուցանիշներից մեկը:

2. Տնտեսական գործոնների ինդեքս՝

- 2.1. համախառն ներքին արդյունքը մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար (Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ, ՀԲ-ի ինդիկատորներ),
- 2.2. առևտրաշրջանառության ծավալը, ԱՄՆ դոլար/ՀՆԱ% (Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ),
- 2.3. տնտեսության վարկավորման ծավալները, ՀՆԱ% (ՀԲ-ի ինդիկատորներ),
- 2.4. գնաճը (%) (Ազգային վիճակագրական ծառայությունների, Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալներ, ՀԲ-ի ինդիկատորներ),
- 2.5. ստվերային տնտեսության մակարդակը, ՀՆԱ% (Մյունխենի Լյուդվիգ Մաքսիմեյանի անվան համալսարանի Տնտեսական հետազոտությունների կենտրոն և տեղեկատվության ինստիտուտ)
- 2.6. բյուջեի դեֆիցիտը, ՀՆԱ% (Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ):

3. Սոցիալական գործոններն են՝

- 3.1. Մարդկային զարգացման համաթիվը (ՄԱԿ-ի զարգացման ծրագրի զեկույցներ),
- 3.2. իրական աշխատավարձը, ԱՄՆ դոլար (Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալների հիման վրա հետազոտողի/հեղինակի հաշվարկներ),
- 3.3. զբաղվածության մակարդակը (%) (ՀԲ-ի ինդիկատորներ),
- 3.4. հանցագործությունների քանակը 1000 շնչի հաշվով (Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ),
- 3.5. աղքատության մակարդակը (%) (Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ, ՀԲ-ի ինդիկատորներ),
- 3.6. Զինի ինդեքսը (Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ, ՀԲ-ի ինդիկատորներ):

Արուսյակ Ալեքսանյան

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ


Հետխորհրդային երկրների քաղաքական համակարգերի կայունության խնդիրները հաճախ քննարկվում են ոչ այնքան ներքին քաղաքականության, որքան տարածաշրջանային ինտեգրման և երկրում ազգամիջյան հակամարտությունների ներուժի նվազեցման համատեքստում: Շատ դեպքերում եվրոպական և եվրասիական ինտեգրման հռետորաբանությունը հետխորհրդային երկրներում կառավարող կուսակցություններն օգտագործում են որպես քաղաքական իշխանության լեգիտիմության գործիք: Հատկապես երբ ազգաբնակչության զգալի մասը դրական կամ բացասական է վերաբերվում երկրի ինտեգրման եվրոպական կամ եվրասիական վերատորներին:

Քաղաքական համակարգի կայունությունը մոդելավորելիս կիրառվել է ինդեքսների կառուցման մեթոդը: Մոդելավորման ժամանակ հիմք է ընդունվել այն դրույթը, որ քաղաքական համակարգի կայունության վրա ազդող գործոնները ընդհանուր առմամբ բաժանվում են երեք խմբի՝ քաղաքական, սոցիալական և տնտեսական**:

* Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի (ՔՀԿԻ) մեթոդաբանությունը մշակել է Արուսյակ Ալեքսանյանը թեկնածուական ատենախոսության շրջանակում:

** ՔՀԿԻ մոդելում ընդգրկված փոփոխականների ընտրությունն իրականացվել է դրանց կոռելյացիոն մատրիցի կառուցման և արտաքսման մեթոդով: Նախնական փուլում ընդգրկվել են շուրջ 30 փոփոխական, այնուհետև մոդելից դուրս են բերվել այն փոփոխականները, որոնք կոռելյացիոն ուժեղ կապ ունեն ($R \geq 10,71$): Բացառություն է «Ջինի գործակից» փոփոխականը, որն ունի ուժեղ կոռելյացիոն կապ աղքատության մակարդակի հետ, սակայն, քանի որ հասարակության բևեռացվածությունը կարևոր և ազդեցիկ գործոն է քաղաքական կայունության գնահատման համար, այն նույնպես ընդգրկվել է մոդելի մեջ:

Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի գործոնները



Քաղաքական համակարգի կայունությունը պայմանավորող *քաղաքական գործոններն* են՝

1. օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈւՆ),
2. Տնտեսական ազատության ինդեքսը (ՏԱԻ),
3. Քաղաքական իրավունքների ինդեքսը (ՔԻԻ),
4. Քաղաքացիական ազատությունների ինդեքսը (ՔԱԻ),
5. Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸԻ),
6. քաղաքացիական անհնազանդությունների քանակը/մակարդակը (ՔԱ),
7. հակամարտության առկայությունը (ՀԱ):

Քաղաքական համակարգի կայունության վրա ազդող *սոցիալական գործոններն* արտահայտվում են հետևյալ փոփոխականներով՝

1. Մարդկային զարգացման համաթիվը (ՄԶՀ),
2. իրական աշխատավարձը (ԻԱ),
3. զբաղվածության մակարդակը (Զբ.),
4. հանցագործությունների քանակը 1000 շնչի հաշվով (ՀՔ),

5. աղքատության մակարդակը (Աղք.),
6. Ջինի ինդեքսը (ՋԻ):

Տնտեսական գործոններն են՝

1. ՀՆԱ մեկ շնչի հաշվով (ՀՆԱ),
2. առևտրաշրջանառության ծավալը (Ա),
3. տնտեսության վարկավորման ծավալը (ՏՎ),
4. գնաճը (Գ),
5. սովերային տնտեսության մակարդակը (Ստ.),
6. բյուջեի դեֆիցիտը (ԲԴ):

ՔՀԿԻ-ն կազմված է ինչպես պաշտոնական վիճակագրությունից, այնպես էլ մշակված նոր փոփոխականներից և գործող միջազգային հեղինակավոր կազմակերպությունների ցուցանիշներից: Այդ ինդեքսների և մի շարք փոփոխականների բնույթն ու հաշվարկման մեթոդաբանությունը հետևյալն են.

- «Տնտեսական ազատության ինդեքսը» (Index of Economic Freedom) գնահատվում է «Հերիթեջ» (Heritage) հիմնադրամի և «Ուոլ Սթրիթ» (Wall Street Journal) օրաթերթի կողմից 0-100 բալանոց համակարգով, որտեղ 0-ից 49,9 գնահատական ստացած երկրները «տնտեսապես ճնշված» են, 50-ից 59,9-ը՝ «հիմնականում անազատ», 60-ից 69,9-ը՝ «չափավոր ազատ», 70-ից 79,9-ը՝ «հիմնականում ազատ», իսկ 80-ից 100-ը՝ «ազատ»: Այն հիմնված է հետևյալ 12 գործոնների վրա՝ 1. սեփականության իրավունքի պաշտպանություն, 2. դատական համակարգի արդյունավետություն, 3. կառավարության ամբողջականություն, 4. հարկային բեռ, 5. կառավարության ծախքեր, 6. հարկաբյուջետային համակարգ, 7. գործարարության ազատություն, 8. աշխատանքային ազատություն, 9. դրամավարկային ազատություն, 10. առևտրի ազատություն, 11. ներդրումների ազատություն, 12. ֆինանսական ազատություն: 2019 թ. ՔՀԿԻ-ի հաշվարկների համար հիմք է ընդունվել 2020 թ. ՏԱԻ-ին (Miller, Kim, Roberts 2020), քանի որ այն ընդգրկում է 2018 թ. հուլիսի 1-ից մինչև 2019 թ. հունիսի 30-ն ընկած ցուցանիշները: Ընդհանուր առմամբ ՏԱԻ-ն արտահայտում է օրենսդրության կառուցվածքն ու սեփականության իրավունքների երաշխիքները և համար-

1. Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանությունը

վում է քաղաքական կայունության ու ժողովրդավարության կարևոր ցուցիչներից մեկը: Այդ իսկ պատճառով այդ ցուցանիշն ընդգրկվել է քաղաքական գործոնների կազմում: Մոդելում տվյալների նորմալացման ժամանակ որպես առավելագույն արժեք (max) ընդունվում է 100-ը, նվազագույն (min)՝ 0-ն:

- «Քաղաքական իրավունքների» և «Քաղաքացիական ազատությունների» ինդեքսները գնահատում է «Ազատության տուն» (Freedom House) կազմակերպությունը «Ազատությունն աշխարհում» (Freedom in the World) հետազոտության շրջանակում: 2019 թ. ՔՀԿԻ-ի հաշվարկների համար կիրառվել է «Ազատությունն աշխարհում» 2020 թ. զեկույցը (*Freedom House 2020a*), քանի որ դրա գնահատման հիմքում 2019 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի զարգացումներն են 195 երկրի և 15 տարածքի վերաբերյալ: Հաշվետվությունները կազմող և գնահատող վերլուծաբաններն օգտվում են տեղեկատվության բազմազան աղբյուրներից, այդ թվում՝ լրատվական նյութերից, ակադեմիական վերլուծություններից, հասարակական կազմակերպությունների հաշվետվություններից, փորձագետների հետ կապերից: Այսպես՝ Քաղաքական իրավունքների ցուցանիշը հիմնված է 10 կետանոց հարցաշարի վրա՝ բաժանված երեք ենթակատեգորիաների՝ ընտրական գործընթաց (3 հարց), քաղաքական բազմակարծություն և մասնակցություն (4 հարց) և կառավարության գործառնություն (3 հարց): Քաղաքացիական ազատությունների հարցաշարը բաղկացած է տասնհինգ կետից՝ բաժանված չորս ենթակատեգորիաների՝ ինքնարտահայտման և հավատքի ազատություն (4 հարց), միավորման և կազմակերպական իրավունքներ (3 հարց), օրենքի գերակայություն (4 հարց), անձնական իրավունքներ ու ազատություններ (4 հարց): Յուրաքանչյուր հարցի տրվում է 0-4 միավոր: Քաղաքական իրավունքների բարձրագույն նիշը 40 է, քաղաքացիական ազատությունների բարձրագույն նիշը՝ 60: Ստացված միավորներն այնուհետև վերաբաշխվում են 1-ից մինչև 7 միավորային սանդղակի շրջանակում, որտեղ 1-ն առավելագույն ազատության նիշն է, 7-ը՝ նվազագույն. 1-ից 2,5 գնահատական ստացած երկրները «ազատ» են, 3-ից 5-ը՝ «մասնակի ազատ», 5,5-ից 7-ը՝ «անազատ» (*Freedom House 2020b*): Մոդելում տվյալները նորմալացնելիս որպես առավելագույն (max) արժեք է ընդունվում 1-ը, նվազագույն (min)՝ 7-ը:

- «Կոռուպցիայի ընկալման ինդեքսը» գնահատում է «Թրանսփարենսի ինթերնեշնլ» (Transparency International) կազմակերպությունը, և վերաբե-

րում է աշխարհի 180 երկրի պետական հատվածում առկա կոռուպցիայի ընկալման մակարդակին (*Transparency International 2019a*): Այն հիմնված է փորձագետների հարցման վրա և գնահատվում է 0-100 բալանոց համակարգով, ընդ որում՝ 0-ն նշանակում է կոռուպցիայի ընկալման ամենաբարձր մակարդակը, 100-ը՝ ամենացածր: ԿԸԻ-ի տվյալները հաշվարկվում են մի շարք անկախ կազմակերպությունների (Քաղաքական և տնտեսական ռիսկերի խորհրդատվություն, «Էկոնոմիստ Ինթելիջենս Յունիթ», «Ազատության տուն», Համաշխարհային տնտեսական ֆորում, Համաշխարհային բանկ, Բերթելսմանի հիմնադրամ, «Գլոբալ Ինսայթ» համաշխարհային տնտեսական ֆորում և այլն) ներկայացրած աղբյուրների հիման վրա: Հարցման թեմաները վերաբերում են կոռուպցիային, շահերի բախմանը, հակակոռուպցիոն միջոցառումներին և ձեռքբերումներին, պետության քայլերին՝ պատժամիջոցների կիրառման և կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ: Առկա են հարցեր, որոնք վերաբերում են պետական կառավարման պրակտիկայում կոռուպցիայի տարածվածության, քաղաքացիների ընկալման և ԶԼՄ-ների հաղորդագրություններում կոռուպցիային վերաբերող նյութերին՝ սկսած մանր բյուրոկրատական կոռուպցիայից մինչև իշխանության բարձրագույն օղակներում կոռուպցիոն ռիսկերը (*Transparency International 2019b*): Այս փոփոխականի կարևորությունն այն է, որ կոռուպցիայի ցուցանիշները վկայում են բյուրոկրատական համակարգի և պետական կառավարման որակի մասին: Մոդելում տվյալների նորմալացման ժամանակ որպես առավելագույն (max) արժեք է ընդունվում 100-ը, նվազագույն (min)՝ 0-ն:

- Օտարերկրյա ուղղակի ներդրում է համարվում կապիտալի ցանկացած տեսակ, որն օտարերկրյա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է տվյալ պետության տարածքում ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում՝ շահույթ ստանալու կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով: Ներդրումների և քաղաքական կայունության միջև կապը երկակի է: Մի կողմից ներդրումների ծավալները շատ կարևոր են քաղաքական կայունության չափման գործընթացում, մյուս կողմից՝ քաղաքական կայունության ցուցանիշները հաշվի են առնվում ներդրումային քաղաքականության իրականացման համար: Տվյալ փոփոխականի ընդգրկումը մոդելի մեջ, այն էլ քաղաքական գործոնների շարքում, ընդունելի է, քանի որ քաղաքական կայունության տատանումները բավականին կարճ ժա-

1. Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանությունը

մանակահատվածում իրենց անմիջական ազդեցությունն են ունենում ներդրումների ծավալի վրա, իսկ մոդելում ներդրումների վերաբերյալ տվյալները հաշվարկվում են մեկ տարվա կտրվածքով: Միջերկրային վերլուծության համար հաշվարկվում է այդ ցուցանիշի տոկոսը ՀՆԱ-ի նկատմամբ:

- Քաղաքացիական անհնազանդությունների քանակը ներառում է սահմանված ժամանակահատվածում ցույցերի, գործադուլների, հավաքների, սոցիալական անկարգությունների քանակը: Այն կարևոր փոփոխական է քաղաքական կայունության գնահատման համար, սակայն հաշվի առնելով նման վիճակագրության բացակայությունը, հիմնվելով թերթերի տեղեկատվության ուսումնասիրությունների և վերլուծության վրա՝ դրանց գնահատականը հետազոտողները սահմանում են 0-5 սանդղակի շրջանակում, որտեղ 5-ն անհնազանդությունների առավելագույն քանակն է՝ ընդհուպ հեղաշրջումներ և հեղափոխություններ, 0-ն՝ դրանց իսպառ բացակայությունը:

- Հակամարտության առկայության ազդեցությունը քաղաքական կայունության վրա գնահատվել է հետևյալ կերպ՝ հակամարտության բացակայություն (0), պասիվ հակամարտության առկայություն. պետությունը կոնֆլիկտային իրավիճակում է այլ պետության/պետությունների հետ, որը, սակայն, չի ուղեկցվում ռազմական ակտիվ գործողություններով (1), ակտիվ հակամարտության առկայություն. պետությունը կոնֆլիկտային իրավիճակում է այլ պետության/պետությունների հետ, որն ուղեկցվում է ռազմական ակտիվ գործողություններով (2): Տվյալների նորմալացման ժամանակ որպես առավելագույն (max) արժեք ընդունվում է 2-ը, իսկ նվազագույն (min)՝ 0-ն:

- Մարդկային զարգացման համաթիվը (HDI) առաջարկվել է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) կողմից, որի հաշվարկման համար որպես մարդկային զարգացման մակարդակի բնութագրիչներ են համարվում բնակչության եկամուտը, մարդկանց կրթական մակարդակը, կյանքի սպասվող միջին տևողության ցուցանիշը: ՄԶՀ-ն համարվում է հասարակության բարեկեցության չափման կարևորագույն ցուցանիշներից մեկը: Այն գնահատվում է 0-ից 1-ն ընկած սանդղակի շրջանակում, որտեղ 0-ն մարդկային զարգացման ցածրագույն մակարդակն է, 1-ը՝ բարձրագույն (UNDP 2020a, 2020b): Տվյալների նորմալացման ժամանակ 0-ն ընդունվում է որպես նվազագույն (min) արժեք, իսկ 1-ը՝ առավելագույն (max):

- Ջինի ինդեքսը (եկամուտների կենտրոնացման գործակիցը) բնակչության եկամուտների բաշխման փաստացի ծավալի շեղումն է դրանց հավասարաչափ բաշխման գծից: Հավասարաչափ բաշխման դեպքում այն հավասար է 0-ի, բացարձակ անհավասարության պայմաններում՝ 1-ի: Տվյալների նորմալացման ժամանակ որպես առավելագույն արժեք (max) ընդունվում է 1-ը, իսկ նվազագույն (min)՝ 0-ն:

- Իրական աշխատավարձը բնութագրում է անվանական աշխատավարձի գնողունակությունը դիտարկվող ժամանակահատվածում, այսինքն՝ ապրանքների և ծառայությունների այն ծավալը, որը հնարավոր է ձեռք բերել աշխատավարձով՝ ելնելով բազիսային ժամանակաշրջանի գներից: Իրական աշխատավարձը հաշվարկվում է՝ միջին ամսական անվանական աշխատավարձը հարաբերելով սպառողական գների ինդեքսին: Երկու ցուցանիշներն էլ վերաբերում են միևնույն ժամանակաշրջանին: Միջերկրային վերլուծության ժամանակ միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է ԱՄՆ դոլարի գնողունակության համարժեքության ցուցանիշով:

Մոդելում ընդգրկված փոփոխականներն արտահայտված են չափման տարբեր միավորներով, այդ իսկ պատճառով դրանք նորմալացվում են հետևյալ բանաձևով^{*}

$$X' = \frac{x_i - \min\{x_i\}}{\max\{x_i\} - \min\{x_i\}}$$

որտեղ՝

- x_i -ն i -րդ բնութագրիչ ցուցանիշի մեծությունն է,
- $\min\{x_i\}$ -ն՝ i -րդ բնութագրիչ ցուցանիշի նվազագույն արժեքը,
- $\max\{x_i\}$ -ն՝ i -րդ բնութագրիչ ցուցանիշի առավելագույն արժեքը:

Միջերկրային վերլուծությունների ժամանակ որոշ փոփոխականների համար որպես առավելագույն և նվազագույն արժեքներ ընդունվել են աշխարհի երկրների վերջին հինգ տարվա երեք նվազագույն և երեք առավելագույն տվյալների միջինացված ցուցանիշները, մեկ երկրի ուսումնասիրու-

* Բանաձևով դուրս բերված նորմալացված արժեքները գտնվում են 0-ից 1 միավորային սանդակի միջակայքում, որոնք կիրառվում են ներերկրային վերլուծության ժամանակ: Միջերկրային վերլուծության պարագայում ստացված համապատասխան արժեքները վերափոխվում են 0-ից 100 միավորային սանդակի:

1. Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանությունը

թյունների դեպքում՝ նրա տարբեր ժամանակահատվածների համապատասխան արժեքները:

Քաղաքական (P_{qh}), Տնտեսական (S_{qh}), Սոցիալական (U_{qh}) գործոնների ինդեքսների հաշվարկն իրականացվում է քաղաքական կայունության վրա ազդող դրական և բացասական գործոնների նորմալացված արժեքների պարզ միջինների տարբերության հաշվարկով՝

$$P_{qh} = (O_{ուլ} + S_{ուր} + ԲԻԻ + ԲԱԻ + ԿԸԻ/5 - (ՀԱ + ԲԱ)/2$$

$$U_{qh} = (ՄԶՀ + ԻԱ + ԶԲ.) / 3 - (ՀԲ + Աղք. + ԶԻ) / 3$$

$$S_{qh} = (ՀՆԱ + Ա + ՏՎ) / 3 - (Գ + Սփ. + ԲԴ) / 3$$

Քաղաքական, սոցիալական և տնտեսական գործոնները քաղաքական համակարգի վրա ունեն ազդեցության տարբեր աստիճաններ, ըստ որի էլ հաշվարկվել և ձևակերպվել է այդ գործոնների աստիճանակարգությունը: Ըստ այդմ՝ ՔՀԿԻ-ն հաշվարկվել է դրանց (P_{qh} , U_{qh} և S_{qh}) կշռված միջին թվաբանականի հիման վրա*.



$$ՔՀԿԻ = (55 * P_{qh} + 30 * U_{qh} + 15 * S_{qh}) / 100$$

Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի վերոնշյալ բանաձևի համաձայն՝ քաղաքական կայունության վրա առավելագույն ազդեցությունն ունեն քաղաքական, այնուհետև՝ սոցիալական և տնտեսական գործոնները:

* Կշիռները սահմանվել են տրամաչափարկման միջոցով, մասնավորապես՝ չափանմուշ մի շարք երկրների (Ֆինլանդիա, Շվեդիա, Դանիա) Քաղաքական կայունության ինդեքսի հաշվարկման և դրանցում ենթաինդեքսների գործակիցների որոշման, ինչպես նաև ժողովրդավարության տեսական դրույթների և առկա մոդելների ուսումնասիրությունների հիման վրա: Սույն հետազոտության շրջանակում լրացուցիչ և համակողմանի ուսումնասիրությունների հիման վրա մեթոդաբանությունում կատարվել են կշիռների ճշգրտումներ:

Այսպես՝ Քաղաքական համակարգի կայունության ներերկրային ինդեքսն արտահայտվում է -1 -ից $+1$ միավորային սանդղակով, իսկ միջերկրային ինդեքսը՝ -100 -ից $+100$ -ը միջակայքում ընկած համապատասխան միավորներով, որտեղ քաղաքական համակարգերը որակվում են հետևյալ կերպ.



Բարձր մակարդակի կայունություն ունեցող քաղաքական համակարգերն առանձնանում են հասարակության քաղաքական կյանքի ժողովրդավարացման բարձր մակարդակով: Այս մակարդակն ուղեկցվում է նաև հասարակության սոցիալ-տնտեսական ոլորտի կայուն զարգացմամբ, որը քաղաքացիներին ապահովում է կյանքի բարձր որակ և սոցիալական երաշխիքների արդյունավետ համակարգ: Կայուն քաղաքական համակարգերում իշխանության հերթափոխության գործընթացը չի ուղեկցվում այդ համակարգի ապակայունացմամբ: Քաղաքացիական խաղաղությունը կայուն քաղաքական համակարգերի կարևոր բնութագրիչներից է:

Միջին մակարդակի կայունության քաղաքական համակարգերում ժողովրդավարական գործընթացները և սկզբունքները՝ որոշ թերություններով, հիմնականում գերակայում են հասարակության քաղաքական կյանքում: Սոցիալ-տնտեսական զարգացումը որոշ տատանումներով և անկումներով, այնուամենայնիվ, ունի աճի միտում: Մարդու իրավունքների պաշտպանության և օրենքի գերակայության ոլորտներում թերությունները չեն բացառվում: Այս մակարդակը կարող է բնորոշ լինել նաև ավտորիտար քաղաքական համակարգերին, որոնցում կայունությունն ապահովվում է ոչ այնքան քաղաքական, որքան սոցիալ-տնտեսական գործոնների շնորհիվ:

Կայունության ցածր մակարդակը բնորոշ է այն քաղաքական համակարգերին, որտեղ առավել գերակայում են ամբողջատիրական և ավտորիտար սկզբունքները, քան ժողովրդավարական գործընթացները: Նման համակարգերում առկա են սոցիալական սրված հակասություններ. բնակչության բևեռացում, հիմնական աշխատող բնակչության աղքատացում ու նեղ շրջանակի մարդկանց հարստացում: Այդ ամենի հետևանքով երկրում կարող է բարձրանալ քաղաքացիական անհնազանդությունների մեծ ալիք, տեղի ունենա հեղաշրջում կամ հեղաշրջման փորձ: Կոնֆլիկտներն ու պատերազմներն այլ պետությունների հետ ևս հաճախակի երևույթ են:

Անկայուն քաղաքական համակարգերում առկա են իշխանությունների խորը ճգնաժամ և լեգիտիմության կորուստ, սոցիալական կոնֆլիկտներ, պատերազմական վիճակ, ոտնահարվում են մարդու իրավունքները, ուժի կիրառմամբ ճնշվում են քաղաքացիական անհնազանդությունները: Տնտեսությունը գտնվում է խորը ճգնաժամում, հասարակությունը, ըստ եկամուտների, խիստ բևեռացված է, առկա է աղքատության բարձր մակարդակ:

Մոդելը հնարավորություն է տալիս՝

- վերլուծել և համեմատել պետության քաղաքական կայունությունն ու դրա միտումներն՝ ըստ տարբեր ժամանակահատվածների,
- համեմատել երկու և ավելի պետությունների քաղաքական կայունությունը և դասակարգել պետությունները համապատասխան սանդղակի սահմաններում՝ ըստ նրանց կայունության,
- վեր հանել այն գործոնները, որոնք առավել բացասական կամ դրական ազդեցություն են ունենում տվյալ երկրի քաղաքական կայունության վրա:

Գրականության ցանկ

- **Freedom House** (2020a) “Freedom in the World 2020. A Leaderless Struggle for Democracy.” Accessed February 20, 2021. <https://freedomhouse.org/report/freedom-world/2020/leaderless-struggle-democracy>.
- **Freedom House** (2020b) “Freedom in the World 2020 Methodology.” Accessed February 20, 2021. https://freedomhouse.org/sites/default/files/2021-02/Freedom_in_the_World_2020_Methodology.pdf.

- **Miller, Terry, Anthony B. Kim & James M. Roberts** (2020) “2020 Index of Economic Freedom.” Heritage Foundation and the Wall Street Journal. Accessed February 25, 2021. https://www.heritage.org/index/pdf/2020/book/index_2020.pdf.
- **Transparency International** (2019a) “Corruption Perceptions Index 2019.” February 25, 2021. <https://www.transparency.org/en/cpi/2019/index/nzl>.
- **Transparency International** (2019b) “Corruption Perceptions Index 2019: Short Methodology Note.” February 25, 2021. https://images.transparencycdn.org/images/2019_CPI_methodology.pdf.
- **UNDP** (2020a) “Human Development report 2020. The next frontier: Human development and the Anthropocene.” Accessed February 27, 2021. <http://hdr.undp.org/sites/default/files/hdr2020.pdf>.
- **UNDP** (2020b) “Human Development Report 2020: Technical notes.” Accessed February 27, 2021. http://hdr.undp.org/sites/default/files/hdr2020_technical_notes.pdf.

2. ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԵՐԻ ԴԻԼԵՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ


ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հետխորհրդային տարածքի նորանկախ երկրների ներքին և արտաքին քաղաքական օրակարգերը սահմանելիս մշտապես առանձնահատուկ ուշադրության կենտրոնում են եղել քաղաքական կայունությանն առնչվող հիմնահարցերը: Այս գործընթացում շատ պետություններ հաճախ երկընտրանքի առաջ են կանգնել. առկա ռեսուրսներն ու ներուժն ուղղել ներքին քաղաքական հիմնախնդիրների լուծմանն ու ներպետական կայունության պահպանմանը, թե՞ առաջնային համարել արտաքին քաղաքական մարտահրավերներն ու դրա սպառնալիքներով պայմանավորված ազգային անվտանգության հիմնահարցերը: Յուրաքանչյուր պետություն յուրովի է սահմանագծել պետական քաղաքականության միմյանց փոխլրացնող այդ երկու կարևոր բաղադրիչների հավասարակշռությունը: Հայաստանը, ունենալով չլուծված հակամարտության հիմնախնդիրներ, տասնամյակներ շարունակ քաղաքական համակարգի կայունությունը դիտարկել է հիմնականում արտաքին քաղաքական գործոնների պրիզմայի ներքո՝ առաջնային համարելով անվտանգության ասպեկտը: Այս համատեքստում արդյո՞ք անտեսվել են քաղաքական համակարգի կայունության ներքաղաքական օրակարգերը, արդյո՞ք 2018 թվականի քաղաքացիական անհնազանդությունների մեծ ալիքը դրա հետևանքն էր, և արդյո՞ք հետհեղափոխական շրջանում արտաքին քաղաքական օրակարգերի փոփոխությունը հանգեցրեց պատերազմական գործողությունների:

Այս հարցադրումներն անշուշտ կարևոր են Հայաստանի քաղաքական համակարգի կայունության հիմնահարցերի քննարկման և առկա հիմնախնդիրների վերհանման տեսակետից:

Գծապատկեր 1-ը նկարագրում է Հայաստանի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի (ՔՀԿԻ) Քաղաքական գործոնների միտումները 2000-2019 թվականներին:

Գծապատկեր 1
Հայաստանի ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսը (2000-2019 թթ.)*



Դիտարկվող ժամանակահատվածի քաղաքական համակարգի կայունության Քաղաքական գործոնների ինդեքսի ամենախոր անկումը 2016 թ.-ին էր՝ Ապրիլյան պատերազմի բացասական ազդեցությամբ և սպառնալիքներով պայմանավորված: Նշված տարում քաղաքական համակարգի կայունության վրա բացասական ազդեցություն են ունեցել նաև ՀՀ ոստիկանության ՊՊԾ (պարեկապահակային ծառայություն) գնդի գրավումը և դրան հաջորդած քաղաքացիական անհնազանդությունների մեծ ալիքը (*Aleksanyan 2017, 35-36, Karapetyan & Aghekyan 2016, Human Rights Watch 2017, 89-90*): Գործող իշխանությունների համար այդ ալիքը գուցե ոչ առաջին, սակայն կարևորագույն ահազանգը պետք է լիներ առ այն, որ ներքաղաքական օրակարգերում նշանակալի փոփոխություններ են տեղի ունեցել: Դա

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:


Քաղաքական գործոնների ինդեքսը գնահատվում է -1-ից +1 միջակայքում ընկած միավորներով, որտեղ -1-ը կայունության նվազագույն մակարդակն է, իսկ +1-ը՝ առավելագույն:

2. Կայունության ներքին և արտաքին քաղաքական օրակարգերի դիվեման Հայաստանում

վկայում էր, որ համակարգի քաղաքական կայունության հետագա պահպանման համար ներքաղաքական գործընթացները պահանջելու էին ոչ պակաս ուշադրություն, որքան որ արտաքին միջավայրի օրակարգերի խնդիրն էր, ինչպես նաև իշխանությունների կողմից պատասխան արձագանքներ: 2018 թվականին տեղի ունեցած իրադարձությունները վկայեցին, որ իշխանությունները այդպես էլ չկարողացան ապահովել համակարգի համաչափ արձագանք միջավայրից (հասարակությունից) եկող ազդակների և պահանջների նկատմամբ: Այնուամենայնիվ, հեղափոխության խաղաղ բնույթը զգալի նվազեցրեց դրա հնարավոր բացասական ազդեցությունը 2018 թ. քաղաքական կայունության վրա, այն դեպքում, երբ ցանկացած հեղափոխություն դիտարկվում է որպես ցնցում համակարգի նկատմամբ:

Քաղաքական համակարգի կայունության ներքին գործոններն ուսումնասիրելիս կարևոր է անդրադառնալ դրա տարրերին, որոնք են պետական կառավարման մարմինները, կուսակցությունները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, շարժումները: Դրանց միջև փոխհարաբերությունները կարող են լինել մրցակցային, կառուցվել համագործակցության հիմքի վրա, կրել թշնամական կամ անտագոնիստական բնույթ և այլն: Քաղաքական համակարգը հարաբերական կայուն է, երբ այդ տարրերի փոխհարաբերությունները գտնվում են կանխատեսելիության սահմաններում (*Грушин 2015, 52-53, Easton 1957*): Երբ քաղաքական համակարգում հասարակության պահանջների և պետական կառավարման մարմինների որոշումների շրջապտույտը հստակ է գործում, ներքին հարաբերական կայունությունը պահպանվում է, իսկ սոցիալական անհանգստությունների ալիքները հնարավոր է դառնում պահել կառավարելիության սահմաններում: Քաղաքական համակարգի գործառնման հիմնահարցերին անդրադառնալիս ամերիկյան քաղաքագետ Դ. Իստոնը (*1953, 1957, 1965a, 1965b*) դիտարկել է այն գործոնները, որոնց շնորհիվ համակարգը կարող է պահպանել իր ամբողջականությունն ու կայունությունը: Նա առաջարկել է քաղաքական համակարգի մոդել, որով կարելի է վերլուծել և՛ որոշումների ընդունման գործընթացը, և՛ դրանց իրականացման եղանակները (տե՛ս Գծապատկեր 2):

Դ. Իստոնի քաղաքական համակարգի մոդելը (Easton 1957, 384)



Ըստ Իստոնի՝ քաղաքական համակարգը «մուտքի» և «ելքի» միջոցով արձագանքում է միջավայրի ազդակներին: «Մուտք»-ից եկող ազդակները կարող են լինել պահանջների կամ աջակցության տեսքով: Միջավայրի պահանջները վերաբերում են բարիքների բաշխմանը, քաղաքական դերակատարների և գործընթացների կարգավորմանը և այլն: Մինչդեռ աջակցությունն արտահայտվում է հասարակության կողմից հարկերի վճարմամբ, օրենքների պահպանմամբ, ընտրություններին մասնակցությամբ և պետական իշխանության նկատմամբ վերաբերմունքի այլ ձևերով: «Ելքի» ազդակները քաղաքական որոշումներն ու գործողություններն են, որոնք էլ ի վերջո պայմանավորում են հասարակության վերաբերմունքը իշխանությունների նկատմամբ: Քաղաքական որոշումները, որոնք մշտապես բավարարում են միջավայրին, նպաստում են իշխանությունների նկատմամբ

2. Կայունության ներքին և արտաքին քաղաքական օրակարգերի դիլեման Հայաստանում

Նրա աջակցության ձևավորմանը, հակառակ դեպքում միջավայրը հետադարձ կապի միջոցով նոր պահանջներ է ներկայացնում քաղաքական համակարգին: Քաղաքական որոշումների և գործողությունների անհամապատասխանությունը միջավայրի սպասումներին հանգեցնում է համակարգի ճգնաժամի և կայունության խափանման (*Easton 1957*): Այսպիսով՝ Իստոնը պատկերացում և գաղափար է տալիս, թե ինչպես է համակարգը մշակում քաղաքականություն, որով հասարակությունում տեղի են ունենում նյութական և հոգևոր ռեսուրսների բաշխումն ու կոլեկտիվ նպատակների իրականացումը: Այդ քաղաքականությամբ է սահմանվում համակարգի ինքնապահպանման և մշտապես փոփոխվող միջավայրի պայմաններում կայունության ապահովման հիմնախնդիրները:

Դիտարկելով Իստոնի քաղաքական համակարգի տեսության կենտրոնական դրույթները Հայաստանի քաղաքական համակարգի օրինակով՝ պարզ է դառնում, որ մասնավորապես մինչհեղափոխական շրջանում խաթարվել էր վերոնշյալ շրջապտույտը, և միջավայրից եկող «հետադարձ կապի» ազդակները քաղաքական համակարգի կողմից արդյունավետորեն չեն փոխակերպվել համապատասխան քաղաքական որոշումների և գործողությունների: Մինչդեռ հետադարձ կապը նախաճգնաժամային և կոնֆլիկտային իրավիճակների հաղթահարման կարևոր գործիքներից է: Այս համատեքստում Իստոնը, ինչպես նաև մի շարք այլ մասնագետներ կարծում են, որ քաղաքական համակարգում լարվածությունը հնարավոր է հաղթահարել ադապտացիայի միջոցով, ինչպես նաև նպատակների ու քաղաքականության փոփոխությամբ (*Easton 1957, Bealey 1987*): Կայունությունը նախ և առաջ այդ քաղաքական համակարգի կարողությունն է՝ հարմարվել փոփոխվող իրականությանը, արագ և արդյունավետ արձագանքել հասարակության տրամադրություններին, հակառակ դեպքում այն ձեռք է բերվում ավտորիտար միջոցներով, որի պարագայում ունենում ենք «մինիմալ» կայունություն (*Jaworsky 1995, 3-4*):

Հայաստանում իշխանությունները չադապտացվեցին միջավայրում տեղի ունեցող փոփոխություններին, չարձագանքեցին այնտեղից եկող ազդակներին: Մինչ 2018 թվականի իրադարձությունները, ինչպես արդեն նշեցինք, 2016 թվականին տեղի ունեցած գործընթացները և քաղաքացիական անհնազանդությունների մեծ ալիքը այդ ազդակի վառ արտահայտություններից էին, ի պատասխան որի՝ իշխանությունները պետք է նախաձեռնեին

քաղաքական ադապտացիա, սահմանեին որոշումների ընդունման և գործողությունների իրականացման նոր ուղղություն: Դա տեղի չունեցավ նախ և առաջ իշխանություն-հասարակություն երկխոսության բացակայությամբ պայմանավորված: Մինչհեղափոխական շրջանի իշխանությունները ամբողջ ներուժն ուղղում էին արտաքին քաղաքականության օրակարգերի մշակմանը և առաջնային էին համարում քաղաքական կայունության արտաքին անվտանգության բաղադրիչի հիմնահարցերը, մինչդեռ ներքին միջավայրից եկող ապակայունացման ոչ պակաս կարևոր սպառնալիքները դարձան իրականություն, որոնք հետագայում շղթայական կապով արտացոլվեցին նաև անվտանգության արտաքին գործոնների վրա:

2018 թվականին հեղափոխությամբ իշխանության եկածները, ի տարբերություն նախորդների, անտեսեցին կայունությունը պայմանավորող արտաքին քաղաքական օրակարգերի լրջությունը՝ կարծելով, որ լեգիտիմությունը և միջավայրի հետ խոսույթի կազմակերպման ուրույն ընթացակարգերը պետք է ինքնին ապահովեին քաղաքական համակարգի ամբողջական կայունությունը: Մինչդեռ արտաքին հարաբերություններում գործում են երկխոսության այլ կանոններ, և իշխանությունների լեգիտիմությամբ պայմանավորված աշխատող պոպուլիզմը այդ գործընթացում չունի այդ ներուժը, որքան որ ներքին քաղաքական միջավայրում, ավելին՝ արտաքին միջավայրում այն կարող է հանգեցնել հակառակ էֆեկտի, ինչը և տեղի ունեցավ: Ինչպես արդեն նշել ենք, հեղափոխությունը ինքնին ցնցում է քաղաքական կայունությունը, և այդ շրջանում ապակայունացնող էր նաև գործող իշխանությունների կտրուկ քայլերը՝ կապված քաղաքական դաշտում դերակատարների փոփոխության և քաղաքական ուժերի հարաբերակցության նոր ձևաչափի սահմանման հետ: Դա մասնավորապես արտահայտվեց արտա-հերթ խորհրդարանական ընտրությունների պահանջով, որը նաև իր ամրագրումը ստացավ Կառավարության ծրագրում³: Համակարգն ըստ էության պատրաստ չէր նման կտրուկ անցումների, և այստեղ կարևոր էր պահպանել աստիճանաբար փոփոխություններ կատարելու հաջորդականությունը: Քաղաքական դերակատարների կտրուկ փոփոխությունն անդրադարձավ նաև արտաքին հարաբերությունների օրակարգի վրա, և այս առումով կա-

³ Տե՛ս ՀՀ Կառավարության որոշում ՀՀ Կառավարության ծրագրի մասին, 1 հունիսի 2018 թվականի N 581-Ս: <https://www.gov.am/files/docs/2782.pdf?f.bclid=IwAR3J-9axTDqn8FviwUi6d8oAmcULG-o5cj2m9gImCBqDeOgtcxJMQxUQkv3U> (18.02.2021):

2. Կայունության ներքին և արտաքին քաղաքական օրակարգերի դիվեման Հայաստանում

յունության՝ մասնավորապես արտաքին միջավայրից եկող սպառնալիքների և ազդակների անտեսումն անշուշտ ավելի կործանարար եղավ ՀՀ քաղաքական համակարգի վրա: Վերջինիս և՛ «ապաքինման», և՛ բնականոն աշխատանքի վերականգնման համար կպահանջվեն տարիներ:

Հայաստանի ՔՀԿԻ-ի 2018-2019 թվականների Քաղաքական գործոնների ինդեքսի առանձին փոփոխականները դիտարկելիս հավելենք, որ 2018 թվականին նկատելի աճ է գրանցվել «Ազատության տան» Քաղաքական իրավունքների ինդեքսում* (4 միավոր)՝ նախորդ 5 միավորի փոխարեն, իսկ Քաղաքացիական ազատությունների ինդեքսի գնահատականը (4 միավոր) մնացել է անփոփոխ դիտարկվող ողջ ժամանակահատվածի համար⁴: «Ազատության տան» փորձագետները դրական փոփոխությունը հիմնականում պայմանավորում են 2018 թ. տեղի ունեցած ազատ ընտրություններով (*Freedom House 2019, 2020*): Այս առումով տեղին է նշել, որ հետհեղափոխական փուլում ընտրությունների նման արդյունքները բնական և սպասելի էին՝ հաշվի առնելով նաև հասարակության զգացմունքային ֆոնը, որն ավելի շատ խոսում է «էմոցիոնալ ժողովրդավարության» մասին, իսկ ինստիտուցիոնալ փոփոխությունների վերաբերյալ հետևություններ կատարելը այդ փուլում դեռ վաղ էր: Հետագա ընտրությունների արդյունքները միայն ցույց կտան՝ արդյո՞ք այդ փոփոխություններն ինստիտուցիոնալ հենքի վրա են տեղի ունեցել, թե՞ ժամանակավոր էին:

Անդրադառնալով Կոռուպցիայի ընկալման ինդեքսի ցուցանիշներին**, նշենք, որ 2018 թվականին այն մնացել է անփոփոխ, իսկ արդեն 2019 թ.-ին գրանցվել է աճ՝ 35 միավորից հասնելով 42-ի: 2019 թ տվյալների համաձայն՝ Հայաստանը, 180 պետությունների և տարածքների շարքում գրան-

* Քաղաքական իրավունքների և Քաղաքացիական ազատությունների ցուցանիշները գնահատվում են «Ազատության տան» սահմանած 1-ից մինչև 7 միավորային սանդղակով, որտեղ 1-ից 2,5 գնահատական ստացած երկրները բնորոշվում են որպես «ազատ», 3-ից 5-ը՝ «մասնակի ազատ», իսկ 5,5-ից 7-ը՝ «անազատ»:

⁴ Տե՛ս «Ազատության տան» պաշտոնական կայքը՝ <https://freedomhouse.org/report-types/freedom-world> (01.02.2021):


** Կոռուպցիայի ընկալման ինդեքսը գնահատվում է «Թրանսփարենսի ինթերնեշնլ» (Transparency International) կազմակերպության սահմանած 0-100 միավորային սանդղակով (մինչև 2012 թ.՝ 0-10), որտեղ 0-ն նշանակում է ամբողջական կոռումպացվածություն, իսկ 100-ը՝ կոռուպցիայի բացակայություն:

ցելով նկատելի դիրքային փոփոխություն նախորդ տարվա համեմատ, 105-րդ տեղից բարձրացել է 77-րդ հորիզոնական⁵:

Քաղաքական կայունության առավել զգայուն ցուցանիշներից են ներդրումները: Գծապատկեր 3-ում ներկայացված են Հայաստանի օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈւՆ) տվյալները 2000-2019 թթ.-ին: 2016 թվականի անկումից հետո 2017-2019 թթ. դրանք գրեթե անփոփոխ են եղել: Հատկանշական է, որ 2002 թվականից մինչև 2008 թվականը գրանցվել է ներդրումների կայուն աճ: Անկախ Հայաստանի պատմության ներդրումների ծավալի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է հենց 2008 թվականին՝ 944 մլն ԱՄՆ դոլար: Արդեն 2009 թ.-ին ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով տեղի է ունենում ՕՈւՆ-ի կտրուկ, այնուհետև՝ աստիճանական անկում (տե՛ս Գծապատկեր 3):

Գծապատկեր 3

**Օտարերկրյա ուղղակի ներդրումները ՀՀ-ում 2000-2019 թթ.-ին
(մլն ԱՄՆ դոլար)⁶**



⁵ Տե՛ս «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի պաշտոնական կայքը՝ <https://www.transparency.org/country/ARM> (20.02.2021):

⁶ Տվյալների աղբյուրը՝ Համաշխարհային բանկի պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/BX.KLT.DINV.CD.WD> (01.02.2021):

Հայաստանի ՔՀԿ-ի Քաղաքական գործոնների ինդեքսները
(2000-2019 թթ.)*

Տարեթիվ	Ք _{ԳԻ}
2000	-0,048
2001	-0,053
2002	0,023
2003	-0,077
2004	-0,062
2005	0,025
2006	0,059
2007	0,007
2008	-0,169
2009	-0,014
2010	-0,015
2011	0,010
2012	-0,023
2013	-0,113
2014	0,039
2015	-0,123
2016	-0,428
2017	0,014
2018	-0,104
2019	0,037

Ամփոփելով նշենք, որ կայունության Քաղաքական գործոնների ինդեքսը 2018 թվականին նվազել է և անցնելով միավորների բացասական տիրույթ՝ հասել է -0,104-ի: Այնուամենայնիվ, որպես հեղափոխության ազդեցությամբ պայմանավորված անկում, այն համեմատաբար անցնցում էր,

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Ա_{ԳԻ}-ի և հետևաբար դրանց հիման վրա հաշվարկված ՔՀԿ-ի արժեքները որոշ տարիների կտրվածքով հնարավոր է աննշան տարբերվեն նախորդ հրապարակման համապատասխան տարիների արժեքներից՝ թարմացված տվյալների, նոր տվյալների ներմուծման, նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխման պատճառով:

ինչը 2019 թվականին հնարավորություն տվեց Ք_{ԳԻ}-ի արագ վերականգնմանը՝ արդեն իսկ բացասականից դրական ցուցանիշների դաշտ տեղափոխմամբ (0,037) (տե՛ս Աղյուսակ 1): Հետհեղափոխական շրջանում քաղաքական համակարգի կայունության վրա առավել բացասական ազդեցություն ունեցան արտաքին քաղաքական օրակարգերում տեղի ունեցած առաջնահերթությունների, ուղղությունների և մոտեցումների փոփոխությունները: Դրանք մեծացրին առանց այդ էլ գոյություն ունեցող պատերազմի ռիսկերը՝ հանգեցնելով լայնածավալ պատերազմական գործողությունների: Դա տարածաշրջանում ստեղծեց նոր՝ Հայաստանի համար առավել վտանգավոր իրավիճակ՝ ուժերի ոչ շահեկան դասավորությամբ: Այսպիսի պայմաններում Հայաստանի անվտանգության և քաղաքական կայունության հիմնահարցերը պահանջում են բազմակողմանի խորը վերլուծություն և դրանց հիման վրա նոր ռազմավարության մշակում:

Գրականության ցանկ

- **Aleksanyan, Arusyak** (ed.) (2017) Trends of the Index of Democracy Level in the dimension of human rights and democratization (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova). Yerevan: YSU press, 286 p. Accessed January 15, 2021. http://regionalmaster.net/wp-content/uploads/2019/08/Book_2017_Trends_of_the_Index_of_Democracy_Level_in_the_dimension_of_human_rights_and_democratization_eng-safe.pdf.
- **Bealey, Frank** (1987) "Stability and crisis: fears about threats to democracy". European Journal of Political Research. Vol. 15 (6): 687–715.
- **Easton, David** (1953) The Political System: An Inquiry into the State of Political Science. New York: Alfred A. Knopf.
- **Easton, David** (1957) "An Approach to the Analysis of Political Systems." World Politics, Vol. 9, No. 3 (April): 383–400. Accessed January 15, 2021. http://online.sfsu.edu/sguo/Renmin/June2_system/Political%20System_Easton.pdf?fbclid=IwAR3yMH2s-mFC7Lo1hSl_5GxsszffdB3YIw0lum-hg6aHigzNPK8Hvu-MpiE.
- **Easton, David** (1965a) A Framework for Political Analysis, Englewood Cliffs: Prentice-Hall.
- **Easton, David** (1965b) A Systems Analysis of Political Life. New York: John Wiley.
- **Freedom House** (2019) "Freedom in the World – Armenia Country Report." Accessed February 19, 2021. <https://freedomhouse.org/country/armenia/freedom-world/2020>.

2. Կայունության ներքին և արտաքին քաղաքական օրակարգերի դիլեման Հայաստանում

- **Freedom House** (2020) "Freedom in the World – Armenia Country Report." Accessed February 19, 2021. <https://freedomhouse.org/country/armenia/freedom-world/2021>.
- **Human Rights Watch** (2017) "World Report 2017: Events of 2016." Accessed January 20, 2021. https://www.hrw.org/sites/default/files/world_report_download/wr2017-web.pdf.
- **Jaworsky, John** (1995) Ukraine: Stability and Instability. McNair Paper 42, INNS, August. Accessed January 18, 2021. <https://www.files.ethz.ch/isn/23520/mcnair-42.pdf>.
- **Karapetyan, Ani & Elen Aghekyan** (2016) "Armed Standoff in Armenia: Why It Happened and What It Could Mean." Freedom House, August 2. Accessed February 19, 2021. <https://freedomhouse.org/article/armed-standoff-armenia-why-it-happened-and-what-it-could-mean>.
- **Гришин, Олег** (2015) "Политическая стабильность: понятие, факторы, инновации". Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. Вопросы теории и практики. Тамбов: Грамота, №6 (56): ч. I: 51-54.
- **ՀՀ Կառավարություն** (2018) «ՀՀ Կառավարության որոշում ՀՀ Կառավարության ծրագրի մասին, 1 հունիսի 2018 թվականի N 581-Ա»: Վերջին մուտքը՝ 18.02.2021՝ <https://www.gov.am>:

3. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿՑՈՒՄԸ «ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ- ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿԱՏՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ


ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) և հետխորհրդային մյուս երկրների քաղաքական կայունությունը սոցիալ-մշակութային, քաղաքատնտեսական, քաղաքակրթական և արժեքային բարդ երևույթ է, որը կախված է ներագային և վերագային ինստիտուցիոնալ ու ընթացակարգային բազմաթիվ գործոններից: Դաշնային և երկրամասային քաղաքական դերակատարների, կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ներ), տարբեր խմբերի արժեքային կողմնորոշումների պայմաններում երկրի նախագահի և կառավարող ընտրանու համար կենսական նշանակություն են ունեցել քաղաքական գործոնների ազդեցության կառուցողական և ապակառուցողական միտումների նկատմամբ համարժեք քայլերի մշակումն ու իրականացումը: Այս ամենն էլ ձևավորել են ներհամակարգային հավասարակշռության հիմնական և լրացուցիչ աղբյուրներ՝ հանդես գալով քաղաքական կայունության պահպանման և՛ երաշխիք, և՛ նախադրյալ, և՛ ընթացակարգ: Քաղաքական դերակատարների գործընկերային կախվածությունն ուժեղացրել է ներհամակարգային կայունությունը՝ նվազեցնելով դրա հարաբերական ու իրավիճակային բնույթը: Մասնավորապես, ժամանակակից Ռուսաստանի կառավարող ընտրանու համար կենսական նշանակություն են ունեցել միջազգային մասշտաբով համակողմանիորեն ներկայացնելու արդիականացող պետության և հասարակության դրական կողմերն ու նվաճումները՝ նպատակ ունենալով «կոտրել» դարեր շարունակ կուտակված բացասական ընկալումներն ու կարծրատիպերը, երկրի իմիջին հաղորդել որակապես նոր բնույթ: Այս նպատակին հասնելու համար պե-

3. Ռուսաստանի քաղաքական տարածության կառուցակցումը «կայունություն-անկայունություն» երկատման պայմաններում

տական իշխանության մարմինները և քաղաքացիական հասարակությունը փորձել են ներդաշնակել միմյանց միջև հարաբերությունները և կառուցողականորեն համագործակցել՝ օգտագործելով ժամանակակից իրողություններին համապատասխանող ամենալայն գործիքակազմ, նորարարական տեխնոլոգիաներ ինչպես տեղեկատվական-հաղորդակցության, այնպես էլ հասարակական-քաղաքական ոլորտներում:

**Գծապատկեր 1
ՌԴ ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսները (2000-2019 թթ.)***



2018-2019 թթ. ՌԴ քաղաքական համակարգի կայունության ինդեքսի (ՔՀԿԻ) գործոնների շարքում առանցքային են եղել սահմանադրական կարգի ամրապնդումը, պայքարը ներհասարակական ծայրահեղականության, ահաբեկչական գործողությունների և ներքաղաքական ամենաարմատական երևույթների դեմ՝ ներառյալ թշնամանքի և ատելության դրսևորումները, որոնք սպառնալիք են երկրի ազգային անվտանգությանը: Հաշվի առնելով ՌԴ-ում պետության, հասարակության և մարդու անվտանգության պաշտպանության ոլորտների գերակայությունների փոխլրացնող առանձնահատկությունները՝ դրանք պետք է համապատասխանեն երկրի սահմանադրաիրավական կարգին: Դրանցից որևէ մեկի բացարձականացումը

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:
Քաղաքական գործոնների ինդեքսը գնահատվում է -1-ից +1 միջակայքում ընկած միավորներով, որտեղ -1-ը կայունության նվազագույն մակարդակն է, իսկ +1-ը՝ առավելագույն:

կարող է թուլացնել ՌԴ-ում պետական կառավարման ապարատը, որը բացասական հետևանքներ կունենա պետական հաստատությունների և ՔՀԿ-ների գործունեության և, հետևաբար, քաղաքացիների շահերի պաշտպանության վրա: ՌԴ քաղաքական կայունության անվտանգային նախադրյալների շարքում նվազագույնի են հասցված քաղաքացիական անհնազանդության շարժումները, ՔՀԿ-ների օտարերկրյա ֆինանսավորումը, որի շնորհիվ կարելի է կայացած համարել «փափուկ ուժի», մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ռուսաստանյան մոդելը: Հետևաբար, վերջին տարիներին զգալի են եղել ՌԴ քաղաքական ընտրանու ջանքերը՝ հակազդելու սահմանադրական կարգի դեմ ոտնձգություններին՝ ամրապնդելով ինքնիշխան ֆեդերալիզմի և դաշնային ինքնիշխանության սահմանադրական ու իրավական արժեքների պահպանման երաշխիքները: Քայլեր են ձեռնարկվել՝ ընդլայնելու պետության և քաղաքացիական հասարակության շփումները, ներդրվել են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) միջև համագործակցության արդյունավետ ընթացակարգեր (*Smyth 2021, 25-34, Applebaum 2020, 172-180, Кочетков 2020, 6-23, Кочетков 2018a, 153-165, Вилисов, Пастармаджиева 2020, 6-37, Большаков, Храмова 2019, 448-459, Бронников 2018, 64-78*):

ՌԴ ՔՀԿ-ի 2018-2019 թթ. Քաղաքական գործոնների ինդեքսի (Ք_{ԳԻ}) ցուցանիշների դիտարկումը ցույց է տալիս (տե՛ս Աղյուսակ 1), որ քաղաքացիավարական փոխակերպումների և եվրասիական ինտեգրման ներկա փուլում կայունացման գործընթացների տարածաշրջանային բաղադրիչները հատուկ արդիականություն են ձեռք բերել: Դա բացատրվում է անցումային պետության առանձնահատկություններով, որի եվրասիականացումն ու տարածաշրջանայնացումը, հասարակության սոցիալ-քաղաքական և սոցիալ-տնտեսական կազմակերպումը ենթադրում են փոփոխություններ սոցիալ-մշակութային և էթնոմշակութային ոլորտների մարտավարություններում: Պետական իշխանության մարմինների գործունեության արդյունավետությունը գլխավորապես պայմանավորված է կենտրոնացված նախագահի իշխանությամբ վարչակարգի համախմբվածությամբ և գերհամախմբվածությամբ, որում հիմնականում ներդրված են կենտրոնաձիգ կառավարման ընթացակարգեր (*Koesel, Bunce and Weiss 2020, Бронников 2019, 6-24,*

3. Ռուսաստանի քաղաքական տարածության կառուցակցումը «կայունություն-անկայունություն» երկատման պայմաններում

Porona 2019, Кочетков 2018b, 37-47, Головенкин 2018, 150-167): Այս առումով կառավարման վարչակազմի կայունությունն ինքնավար իրողություն է, քանի որ ՌԴ քաղաքական համակարգը հաջողությամբ հարմարվում է փոփոխություններին՝ ինքնակազմակերպման միջոցով պահպանելով կառավարման որակն ու քաղաքացիական հասարակության հիմնական գործառույթները:

Աղյուսակ 1

ՌԴ ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսները (2000-2019 թթ.)*

Տարեթիվ	Ք _{ԳԻ}
2000	-0,273
2001	-0,261
2002	-0,257
2003	-0,251
2004	-0,275
2005	-0,260
2006	-0,198
2007	-0,186
2008	-0,386
2009	-0,230
2010	0,056
2011	-0,005
2012	-0,008
2013	0,124
2014	-0,290
2015	-0,341
2016	-0,311
2017	-0,339
2018	-0,414
2019	-0,367

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Ա_{ԳԻ}-ի և հետևաբար դրանց հիման վրա հաշվարկված ՔՀԿԻ-ի արժեքները որոշ տարիների կտրվածքով հնարավոր է՝ աննշան տարբերվեն նախորդ հրապարակման համապատասխան տարիների արժեքներից՝ թարմացված տվյալների, նոր տվյալների ներմուծման, նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխման պատճառով:

Դիտարկվող ժամանակահատվածում ՌԴ Քաղաքական գործոնների ինդեքսի մակարդակի բացասական միտումները պայմանավորված են եղել ԱՄՆ և ԵՄ անդամ երկրների շարունակվող պատժամիջոցներով, օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈւՆ) անկման դինամիկայով, ներդրումային պատկերի վատթարացմամբ, ռուսական ընկերությունների կապիտալից ՕՈւՆ-ների արտահոսքի ավելացմամբ, քաղաքական ռիսկերի գործոնների ազդեցություններով (տե՛ս Աղյուսակ 1): Իրականում ՕՈւՆ-ների սոցիալ-քաղաքական գործառույթը և դրամավարկային կարգավորման կարևորությունը երկրի կայուն զարգացման համար հավասար նախապայմանների ստեղծումն են: Դրանք, Ռուսաստանի տնտեսական զարգացման շրջափուլային բնույթով պայմանավորված, մշտապես հարթել են արտաքին և ներքին անբարենպաստ ազդեցությունները: Զբաղվածության բարձր մակարդակը, գների կայունությունը, դրամավարկային կարգավորման որակը, վճարային հաշվեկշռի և մակրոտնտեսական այլ ցուցանիշների հավասարակշռվածությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կախված են եղել ՕՈւՆ-ների ծավալների դինամիկայից: Այս առումով, բացի երկրի ֆինանսական կայունությունից, ամենակարևոր խնդիրը եղել է տնտեսական աճի ապահովումը, որն ուղեկցվել է ազգային եկամտի աճով:

Ռուսաստանը, լինելով դեպի համաշխարհային շուկաներ էներգակիրների խոշորագույն մատակարարներից մեկը, հայտնվել է այն պետությունների առաջնագծում, որոնց համար էներգետիկ անվտանգության ապահովման խնդիրները պետական քաղաքականության ամենակարևոր առաջնահերթություններից են: ՌԴ ակտիվ համագործակցությունն էներգետիկ անվտանգության միջազգային կառույցների հետ, ռուսական էներգակիրների արտահանման ծավալները և համաշխարհային էներգետիկայից դրանց կախվածությունն առաջացնում են մի շարք մարտահրավերներ երկրի էներգետիկ անվտանգության, տնտեսական և քաղաքական շահերի ապահովման տեսանկյունից: Այս առումով ազգային էներգետիկ անվտանգության ապահովումը ՌԴ միջազգային քաղաքականության կարևորագույն խնդիրներից է: Իսկ դրանց լուծումն անհնար է ապահովել առանց միջազգային արդյունավետ համագործակցության (*Кочетков 2020, 6-23, Гришин, Лундерс 2020, 99-115, Баранов, Попов 2019, 79-86*): Միևնույն ժամանակ, համաշխարհային տնտեսության գլոբալացումը մեծացրել է ՌԴ քաղաքական

3. Ռուսաստանի քաղաքական տարածության կառուցակցումը «կայունություն-անկայունություն» երկատման պայմաններում

համակարգի կայունության կախվածությունն այլ երկրների ազգային էներգետիկ անվտանգության ապահովման գործընթացներից և իրողություններից, որոնք հնարավոր է՝ անմիջականորեն չառնչվեն այդ երկրներին, քանի որ հաճախ կարող են տեղի ունենալ ՌԴ սահմանից հազարավոր կիլոմետրեր հեռու: Այս ամենը քաղաքական նախադրյալներ ստեղծեց, որ ՌԴ-ն էներգետիկ անվտանգության ապահովման հարցերում էլ ավելի կարևորի իր գործողությունները միջազգային հարաբերություններում: Փաստորեն, առանձին երկրների էներգետիկ անվտանգությունը կախված է ՌԴ քաղաքական համակարգի կայունությունից, ինչպես նաև միջազգային հարաբերությունների այս ոլորտում ճգնաժամերի բացակայությունից: Հենց այս պայմանների ստեղծումն էլ ապահովում է գլոբալ էներգետիկ անվտանգությունը:

Ինչ վերաբերում է ՌԴ հակակոռուպցիոն քաղաքականությանը, ապա «կայունություն-անկայունություն» երկատման պայմաններում կոռուպցիան բացասաբար է ազդել երկրի քաղաքական իրավիճակի կայունության, տնտեսական զարգացման և հասարակական կարգի վրա՝ էապես նվազեցնելով պետական իշխանության հեղինակությունը, ստեղծելով քաղաքական լարվածություն, խարխիլելով պետականության հիմքերն ու սպառնալով ազգային անվտանգությանը: Այս առումով կարևոր է ոչ միայն հակակոռուպցիոն քաղաքականության բովանդակության ուսումնասիրությունը⁷, այլև որոշել, թե պետության առաջարկած հակակոռուպցիոն ընթացակարգերը որքանով են արդյունավետ եղել:

2018 թ. մարտի 18-ին Ռուսաստանում կայացած հերթական նախագահական ընտրություններից հետո, երբ ՌԴ Սահմանադրության 81-րդ հոդվածի⁸ համաձայն՝ երկրի նախագահ Վլադիմիր Պուտինը վեց տարի ժամկետով վերընտրվեց, ակնհայտ դարձավ, որ հասարակության և կառավարող ընտրանու միջև ձևավորվել է փոխհամաձայնություն քաղաքական և սոցիալ-տնտեսական կայունության վերաբերյալ:

⁷ Այդ մասին տե՛ս ՌԴ նախագահի պաշտոնական կայքը՝ «Указ Президента РФ от 29.06.2018г. № 378 «О Национальном плане противодействия коррупции на 2018-2020 годы»». <http://www.kremlin.ru/acts/bank/43253> (25.01.2021):

⁸ Այդ մասին տե՛ս Իրավական տեղեկատվության պաշտոնական համացանցային հարթակ՝ «Конституция Российской Федерации». <http://publication.pravo.gov.ru/Document/View/0001202007040001> (16.01.2021):

Դիտարկվող ժամանակահատվածում Ռուսաստանի քաղաքական գործընթացներում «իշխանության կուսակցության» գործոնը շարունակել է մնալ քաղաքագիտական վերլուծության ամենաարդիական ոլորտներից մեկը՝ դառնալով քաղաքական գործիչների, ՔՀԿ-ների և լրագրողների հանրային խոսույթի բաղկացուցիչ տարր: Միևնույն ժամանակ, դաշնային կառավարությունն օգտագործել է «իշխանության կուսակցությունը» որպես գործընկեր՝ ռացիոնալ ռազմավարություն վարելու, քաղաքական գործընթացները լեգիտիմացնելու, որոշումների կայացումը հեշտացնելու, խորհրդարանի և քաղաքական ընտրանու միջև կախվածությունն ամրապնդելու համար (*Шентякова 2019, Кочетков 2018a, Мартьянов, Быков 2018, Билюга 2018*): Սակայն եվրասիական ինտեգրման պայմաններում խորհրդարանական կուսակցությունների «պասիվությունն» ամենավիճահարույցն է: Պատճառն այն է, որ բազմակուսակցական համակարգի ֆունկցիոնալությունն անքակտելիորեն կապված է ԵԱՏՄ երկրների քաղաքական համակարգերի էվոլյուցիայի հետ: Դիտարկվող ժամանակահատվածում երկրի բազմակուսակցական համակարգի հիմնական շարժիչ ուժը եղել են կառավարող ընտրանիներն ու «իշխանության կուսակցությունները», այլ ոչ թե ՔՀԿ-ներն ու ընդդիմադիր ուժերը: Ընդ որում, ընդդիմադիրների միավորման հիմնական նպատակն է հնարավորինս թուլացնել առկա քաղաքական համակարգը, այլ ոչ թե տեղայնացնել ժողովրդավարական ընթացակարգերը:

2016 թ. սեպտեմբերի 18-ին կայացած ՌԴ պետական դումայի ընտրությունների արդյունքները, Համառուսաստանյան ժողովրդական ճակատի (ՀԺՃ) ակտիվ ներգրավվածությունը վկայում էին այն մասին, որ իշխանությունների փորձը՝ ստեղծել վերահսկվող կուսակցական համակարգ՝ արհեստականորեն վերարտադրված վարչական ռեսուրսների օգնությամբ, ձախողվել էր: Երկրում ստեղծված կուսակցական կառուցվածքը, փաստորեն, անարդյունավետ էր, քանի որ «իշխանության կուսակցությունը» և ՀԺՃ-ն հաշվի չէին առել երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը, որտեղ ավելի ու ավելի են լսելի միջին խավի քաղաքական ձայնը, ինչպես նաև՝ տեղեկատվական հասարակության աճող ազդեցությունը: Վերջինս սոցիալական ցանցերի միջոցով, որտեղ չկան գրաքննություն և իշխանության

3. Ռուսաստանի քաղաքական տարածության կառուցակցումը «կայունություն-անկայունություն» երկատման պայմաններում

պաշտոնական դիրքի գերակայություն, քաղաքացիներին միավորվելու նոր հնարավորություններ է ձևավորել: Ավելին, խորհրդարանում իրենց ուժը զգալով՝ «իշխանության կուսակցությանը» ընդդիմադիր՝ Կոմունիստական, «Արդար Ռուսաստան» և Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունները, խորհրդարանական գործընթացներում կարողանում են համատեղել իրենց ջանքերն ու հակակշռել «Միասնական Ռուսաստան» իշխող կուսակցությանը:

Բազմակուսակցական դիսֆունկցիանալության հիմնական պատճառն այն է, որ կուսակցությունները թույլ լինելու պատճառով չեն կարողանում իրականացնել իրենց ամենակարևոր գործառույթները երկրի քաղաքական համակարգում: Դա պայմանավորված է ՌԴ նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակով, քանի որ երկրի քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությունը, դրա իրականացման բնույթն ու եղանակները որոշում է հենց նախագահը, որի ընտրությունները հետխորհրդային Ռուսաստանի պատմության մեջ երբեք չեն որոշվել նրա կուսակցական պատկանելությամբ կամ չպատկանելությամբ: Փաստորեն, ձևավորվել է բազմակուսակցական այնպիսի ինստիտուցիոնալ դիզայն, որում կուսակցությունները չեն կարող համակողմանի պատասխանատվություն կրել իրենց նախընտրական խոստումների համար: Կուսակցությունների սահմանադրաիրավական կարգավիճակի համաձայն՝ նույնիսկ խորհրդարանական խմբակցությունների միջոցով դրանք չեն կարող վճռական ազդեցություն ունենալ իշխանության գործադիր մարմինների ձևավորման վրա, քանի որ չունեն կառավարությանն արդյունավետ վերահսկելու ընթացակարգ և սահմանափակված են իրենց օրենսդրական նախաձեռնություններում: Ուստի փխրուն են նաև խորհրդարանական մեծամասնության և փոքրամասնության միջև ցիվիլիարխիկ մրցակցության ընթացակարգերը: Բանն այն է, որ նախագահ Վ. Վ. Պուտինի պաշտոնավարման ժամանակահատվածում չի եղել քաղաքական կուրսի փոփոխություն՝ կուսակցությունների կամ դրանց դաշինքների խորհրդարանական և ՏԻՄ-երի ընտրություններում ինչ դիրք էլ զբաղեցրած լինեն կամ մանդատներ ստացած լինեն: Ակնհայտ է, որ դիտարկվող ժամանակահատվածում երկրի քաղաքական համակարգի կայունությունը, սոցիալական զարգաց-

ման ռազմավարությունն ու մարտավարությունը զգալիորեն պայմանավորված էին ՌԴ նախագահի կարգավիճակով, լիազորություններով և գործառույթներով, որոնք կախված չեն եղել նրա կուսակցական պատկանելությունից: Ընդհակառակը, Ռուսաստանի նախագահները առավելապես կարևորել են հենց իրենց վերկուսակցականությունը:

Դաշնային և երկրամասային մակարդակում քաղաքական համակարգի կայունությունը հիմնված էր երկրի նախագահի և կառավարող ընտրանու լեգիտիմության վրա, որտեղ գերակայող էին լեգիտիմության անձնական և կազմակերպական հատկանիշները: Ակնհայտ է, որ կառավարող ընտրանին երկրում բարձրագույն իշխանության փոխանցման շարունակականությունը համարում է քաղաքական կայունության ապահովման կարևոր նախապայման: Նման իրավիճակում համաժողովրդական ընտրությունները քաղաքական ընտրանու համալրման հիմնական ընթացակարգը չեն, ուստի լճացումը հաղթահարելու համար անհրաժեշտ է կատարելագործել վերին և միջին օղակների քաղաքական ընտրանիների ռոտացիայի կառուցակարգերը՝ համալրելով դաշնային և երկրամասային ընտրությունների ֆունկցիոնալությունն ու քաղաքացիավարությունը:

Դիտարկվող ժամանակահատվածում շարունակել են հակասական մնալ քաղաքացիական անհնազանդությունները՝ որպես քաղաքացիական հասարակության սոցիալական առանձնահատուկ ինստիտուտ, որն ունի կենսական նշանակություն հանրային իշխանության ապաքուրկրատացման ու ապակենտրոնացման, հասարակության հետ երկխոսության կայացման առումներով: Չնայած քաղաքացիական անհնազանդությունների իրավական ընթացակարգերի առկայությանը, այնուամենայնիվ երկրի կառավարող ընտրանու համար շարունակել են առավել քան հրատապ մնալ «գունավոր հեղափոխության» կանխման և զանգվածային շարժումները սոցիալական բազայի վերածվելու ռիսկերի կառավարման հարցերը:

ՌԴ ՔՀԿԻ 2018-2019 թթ. Քաղաքական գործոնների ինդեքսի (Ք_{ԳԻ}) ցուցանիշների համեմատական վերլուծությունը հիմնավորում է, որ թեև քաղաքական համակարգը զգալիորեն տարբերվում է արևմտյան ժողովրդավարությունների կազմակերպված և շուկայական կառուցակցված հասարակություններից, այնուամենայնիվ երկրի քաղաքական ընտրանին հաղթահա-

3. Ռուսաստանի քաղաքական տարածության կառուցակցումը «կայունություն-անկայունություն» երկատման պայմաններում

րեց «դինամիկ քաոսի» վիճակը, որն անցումային շրջանի արդյունք էր: ՌԴ կուսակցական համակարգի և ՔՀԿ-ների «անավարտությունը» իհարկե լուրջ խոչընդոտ է, սակայն նկատելի է վարչակարագային ընթացակարգերի հետագա զարգացման միտումները: Կարևոր էր նաև, որ ՔՀԿի 2018-2019 թթ. դինամիկ քաղաքական փոխակերպումները նպաստեցին, որ սոցիալ-տնտեսական դրական զգալի տեղաշարժեր գրանցվեն: Դրանք էլ իրենց հերթին հասարակությանը ստիպեցին իր առջև դնել մի շարք նպատակներ, որոնց իրականացումը հավանաբար Ռուսաստանին զարգացման նոր շրջափուլի կհասցնի՝ կայունացնելով քաղաքական համակարգը: Ենթադրվում էր, որ կուսակցությունները կդառնան քաղաքացիների քաղաքական մասնակցության հիմնական ինստիտուտը, որը, ստեղծելով տարասեռ սոցիալական շահերը համակարգող ընթացակարգեր, կվերացնի քաղաքացիական հասարակության և պետության դիմակայությունը՝ բարձրացնելով իշխանության լեգիտիմությունն ու ապահովելով դրա համախմբումը:

Հետխորհրդային Ռուսաստանի քաղաքական կայունության քաղաքակրթական, էթնոմշակութային և կրոնական գործոնների դինամիկայի դիտարկումները ցույց են տալիս, որ դրանք պահպանել են իրենց ազդեցությունները ներքաղաքական և եվրասիական քաղաքացիական երկխոսության և գործընկերության մակարդակի վրա: Ընդ որում, պետական կառավարման համակարգի, կուսակցությունների և ՔՀԿ-ների միջև սերտ կապի ձևավորումը համընկնել է ՌԴ-ում սահմանադրաիրավական փոխակերպումների ժամանակաշրջանի հետ: Դրանցում նշանակալի է եղել կառավարող ընտրանու էվոլյուցիայի, խորհրդարանական մեծամասնության և ընդդիմադիր կուսակցությունների, արհմիությունների, ՋԼՄ-ների դերի և ազդեցության ամրապնդումը: Մասնավորապես, արհմիութենական շարժմանը դժվարին պայքար է սպասվում երկրի փոխակերպվող և ինտեգրվող քաղաքական համակարգում, երբ համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ առանց արհմիությունների անհնար է սոցիալական պետության լիարժեք զարգացումը: Դրա մի շարք գաղափարներ ամրագրված են արհմիությունների ու գործատուների համառուսական միավորումների և ՌԴ կառավարության միջև կնքված «2018-2020 թթ. գլխավոր համաձայնագրում»: Տեղին է նշել, որ այդ համաձայնագրի ցիվիլիարխիկ սկզբունքների պահպանման

հարցում զգալի է ՌԴ նախագահի⁹ դերը, որը փորձում է բարձրացնել Ռուսաստանի անկախ արհմիությունների դաշնության (ՌԱԱԴ) և գործատուների միավորումների¹⁰ միջև սոցիալական երկխոսության ու գործընկերության մակարդակը: Դա դիտարկվող ժամանակահատվածում նպաստել է աշխատանքային ներուժի որակի բարելավմանը՝ սոցիալական գործընկերներից (գործատուներ, արհմիություններ և կառավարություն) պահանջելով փնտրել շահերի հավասարակշռություն և փոխգործակցության պատրաստակամություն (*Бирженюк, Ефимова, Запесоцкий и др. 2018, 136-141, Вулисов, Пастармаджиева 2020*):

Քաղաքացիավարական և իրավական ընթացակարգերով քաղաքական կայունության փաստացի ձեռքբերումը վկայում է իշխանությունների՝ առաջացած խնդիրները ժամանակին լուծելու ունակության մասին՝ առանց դրանց բախման փուլ բերելու: Միևնույն ժամանակ, ներքաղաքական և միջկուսակցական պայքարը թեևակոխել է կառուցողական դաշտ՝ դրական ազդեցություն ունենալով քաղաքական կայունության վրա: Ռուսաստանում վերջին տասնամյակներին առաջին անգամ հրապարակային կամ «բաց» բախումն ու քաղաքական պայքարը դարձել են քաղաքական կյանքի բաղկացուցիչ տարրեր:

ՌԴ ՔՀԿԻ ՔԳԻ-ի կորը 2018-2019 թթ.-ին 2016-2017 թթ. համեմատ նվազել է՝ շարունակելով մնալ ցածր (տե՛ս Գծապատկեր 1, Աղյուսակ 1): Դա նկատելի է նաև 2000-2019 թթ. ժամանակահատվածում, երբ ՔԳԻ-ի կորը 2019 թ.-ին 2000 թ. համեմատ նույնպես ցածր է եղել:

ՔՀԿԻ-ի 2018-2019 թթ. ՔԳԻ-ի կորի բացասական մակարդակը հիմնականում պայմանավորված էր ՌԴ-ԱՄՆ և ՌԴ-ԵՄ վատթարացնող հարաբերություններով, երկրի տնտեսությունը խարխլող պատժամիջոցներով:

⁹ Ավելի մանրամասն տե՛ս ՌԴ նախագահի պաշտոնական կայքը՝ «Владимир Путин принял участие в церемонии подписания Генерального соглашения между общероссийскими объединениями профсоюзов, общероссийскими объединениями работодателей и Правительством Российской Федерации на 2018–2020 годы». <http://www.kremlin.ru/catalog/persons/340/events/56741> (11.01.2021):

¹⁰ Ավելի մանրամասն տե՛ս Արդյունաբերողների և ձեռներեցների ռուսական միության պաշտոնական կայքը՝ «Социальная хартия российского бизнеса». <http://xn--o1aabe.xn--p1ai/simplepage/sotsialnaya-khartiya-rossiyskogo-biznesa/> (11.01.2021):

3. Ռուսաստանի քաղաքական տարածության կառուցակցումը «կայունություն-անկայունություն» երկատման պայմաններում

Պատժամիջոցները սահմանափակում են ռուսական որոշ բանկերի և ընկերությունների մուտքը ԵՄ առաջնային և երկրորդային կապիտալի շուկաներ, արգելում ռազմական տեխնիկայի ներմուծումն ու արտահանումը: Բացի այդ, Ռուսաստանը սահմանափակ հասանելիություն ունի տեղեկատվական-հաղորդակցական առաջատար տեխնոլոգիաների, այդ թվում՝ նավթարդյունաբերության ոլորտում: Տեղին է նշել, որ, այնուամենայնիվ, ԱՄՆ-ի և ԵՄ-ի՝ Ռուսաստանի դեմ պատժամիջոցները դաշնային և երկրամասային տնտեսական անկայունության ներկայիս իրավիճակի հիմնական պատճառը չեն: Առկա տնտեսական մոդելը սպառել է իրեն, որից ելքը ոչ թե մոբիլիզացիայի, այլ շուկայական մոդելին անցնելն է՝ օգտագործելով հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության միջոցները, պետության և մասնավոր հատվածի կապիտալի գործընկերային համագործակցության հնարավորությունները (*Блинов 2020, Лисоволик 2020, Бурженюк, Ефимова, Запесоцкий и др. 2018, Гришин 2018*):

Դիտարկվող ժամանակահատվածում ռուս-ամերիկյան հարաբերությունները ծայրաստիճան բարդ են եղել, թեև «Մինչև 2020 թվականը ՌԴ ազգային անվտանգության ռազմավարության»¹¹ մեջ նշած է, որ այդ հարաբերությունները Ռուսաստանի համար առաջնային են և ուղղված են երկարաժամկետ հեռանկարին: Մասնավորապես, ՌԴ կշարունակի կառուցել հավասար և լիարժեք ռազմավարական գործընկերություն ԱՄՆ-ի հետ՝ ելնելով ազգային շահերի համընկնումից և ռուս-ամերիկյան հարաբերությունների առանցքային ազդեցության ըմբռնումից: Այս առումով 2018-2019 թթ. ՌԴ արտաքին քաղաքական և միջազգային հարաբերությունների առաջնահերթությունների շարքում էին՝ զինաթափման և զենքի վերահսկման ոլորտում նոր պայմանավորվածությունների ձեռքբերումը, վստահության ամրապնդումը, զանգվածային ոչնչացման զենքի չտարածման խնդիրները, հակաահաբեկչական համագործակցության սերտացումը և տարածաշրջանային հակամարտությունների կարգավորումը:

¹¹ Տե՛ս ՌԴ նախագահի պաշտոնական կայք՝ «Стратегия национальной безопасности Российской Федерации до 2020 года». <http://www.kremlin.ru/supplement/424> (11.01.2021):

XXI դարասկզբին աշխարհում առկա իրավիճակը, հետխորհրդային տարածքում եվրոպական և եվրասիական ինտեգրման մարտահրավերները, ներառյալ համաշխարհային ֆինանսական ճգնաժամը հավասարապես նպաստել են ՌԴ և ԵԱՏՄ անդամ պետությունների միջև համագործակցությանն ու մրցունակությանը: Սա վերաբերում է նաև ՌԴ և ԱՄՆ արտաքին քաղաքական հարաբերություններին:

Դիտարկվող ժամանակահատվածում պաշտպանական պատրաստվածության մրցակցությունը Ռուսաստանի և ՆԱՏՕ-ի միջև աննախադեպ թափ ստացավ¹²: Թեև պաշտոնապես հայտարարվեց, որ զորավարությունները զուտ պաշտպանական նպատակ են հետապնդում, սակայն մյուս կողմի ներկայացուցիչները դրանք համարեցին ռազմաքաղաքական ուժի ցուցադրում և հարձակվողական ռազմավարության դրսևորում ու նախապատրաստում: Դժբախտաբար, 2018-2019 թթ., ինչպես նախկինում, Ռուսաստանի և ՆԱՏՕ-ի միջև համաձայնություն ձեռք բերելու ռազմաքաղաքական մարտավարությունը, դրանց քանակը երկուստեք նվազեցնելու պատրաստակամություն չէր նշմարվում:

Աղյուսակ 2-ից երևում է, որ թեև 2018-2019 թթ. ՌԴ համաշխարհային ռազմականացման ինդեքսի (ՀՌԻ) միավորները ցածր են Հայաստանից, այնուամենայնիվ դրանք առանցքային են Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ երկրների ռազմաքաղաքական անվտանգության համակարգերի կենսունակության համար: Բոննի փոխարկման միջազգային կենտրոնի տվյալներով՝ Ռուսաստանը 2018 թ. 154 երկրների շարքում, իսկ 2019 թ. 151 երկրների մեջ համապատասխանաբար զբաղեցրել է 6-րդ և 8-րդ վարկանիշային տեղերը (*Mutschler and Bales 2020a, Mutschler and Bales 2020b*): 2018-2019 թթ. Ռուսաստանի ռազմական ծախսերը համապատասխանաբար կազմել են ավելի քան 61 և 64 մլրդ ԱՄՆ դոլար կամ երկրի ՀՆԱ-ի 3,7% և 3,9%-ը¹³:

¹² Ст'я Информационно-аналитический портал (ИАП) «НАТО.РФ». Совет Россия-НАТО. https://nato.pf/ru/nato_russia_council.html (11.01.2021):

¹³ Տվյալների աղբյուրը՝ «Stockholm International Peace Research Institute (SIPRI) Military Expenditure Database» // <https://www.sipri.org/databases/milex> (10.01.2021):

3. Ռուսաստանի քաղաքական տարածության կառուցակցումը «կայունություն-անկայունություն» երկատման պայմաններում

Աղյուսակ 2

2018-2019 թթ. ՀԱՊԿ անդամ երկրների համաշխարհային ռազմականացման ինդեքսը¹⁴

Երկիր	Ռազմական ծախսերի համաթվի միավոր	Ռազմական անձնակազմի համաթվի միավոր	Ծանր զենքերի համաթվի միավոր	ՀՌԻ միավոր	Վարկանիշ
Հայաստան (2018)	2,19	1,71	2,31	310	4
Հայաստան (2019)	2,2	1,7	2,3	310	2
Ռուսաստան (2018)	2,08	0,92	2,65	283	8
Ռուսաստան (2019)	2,13	0,92	2,65	285	8
Բելառուս (2018)	0,98	1,37	2,25	230	17
Բելառուս (2019)	1,01	1,37	2,25	232	17
Ղրղզստան (2018)	1,2	0,4	1,68	164	53
Ղրղզստան (2019)	1,15	0,4	1,67	161	55
Ղազախստան (2018)	0,91	0,37	1,84	156	58
Ղազախստան (2019)	1,01	0,37	1,76	157	60
Տաջիկստան (2018)	0,97	0,26	0,5	87	124

Անցումային քաղաքական համակարգի կայունության համար զգալի են ռազմաքաղաքական և ռազմատնտեսական գործոնների ազդեցությունները: Մասնավորապես, Եվրոպայում սովորական զինված ուժերի սահմանափակման վերաբերյալ ՆԱՏՕ-ի հետ երկխոսությունը վերսկսելու ուղղությամբ Ռուսաստանի մի շարք նախաձեռնություններ վերանայվեցին: Իսկ երկրի ռազմաքաղաքական ղեկավարության պատրաստակամությունը՝ ՆԱՏՕ-ի հետ ուղղակի սկսել բարձր մակարդակի քաղաքական երկխոսություն՝ լարվածությունը թուլացնելու համար, ստացավ մասնակի արձագանք: Եվ ինչպես վկայում է միջազգային հարաբերությունների պատմու-

¹⁴ Տվյալների աղբյուրը՝ «Bonn International Center for Conversion»-ի պաշտոնական կայք՝ <https://gmi.bicc.de/ranking-table> (11.01.2021):

թյունը, առանց հստակ արտահայտված քաղաքական կամքի գործնականում անհնար է նշանակալի հաջողության հասնել ռազմաքաղաքական հավասարակշռության պահպանման ուղղությամբ: ՆԱՏՕ-ի երկրներում ակտիվացել է հակառուսական, իսկ Ռուսաստանում՝ հակաարևմտյան հռետորաբանությունը: Այս գործոնը լրջորեն ազդում է քաղաքացիավարական բարեփոխումների և հասարակական-քաղաքական գիտակցության վրա՝ բարդացնելով երկխոսության և խաղաղության հեռանկարները: Եթե առաջիկայում ՌԴ-ՆԱՏՕ հարաբերություններում դրական տեղաշարժ չլինի, ապա դրանք կարող են էլ ավելի վատթարանալ: Դաշինքի ղեկավարության վրա հակառուսական մշտական ճնշումը ՆԱՏՕ-ի անդամ և գործընկեր մի շարք պետությունների կողմից բացասական դինամիկա է հաղորդում այդ հարաբերությունների հեռանկարին: Այսպես օրինակ, ՆԱՏՕ-ի օրակարգում պահելով ցանկացած ծրագրի շրջանակներում Ուկրաինան և Վրաստանը Դաշինք ընդունելու կամ այդ երկրների հետ ռազմաքաղաքական համագործակցությունն ակտիվացնելու ուղղությամբ քայլերը և նմանատիպ մյուս ծրագրերը գործնականում վտանգում են ոչ միայն տարածաշրջանային, այլև համաշխարհային ռազմաքաղաքական հավասարակշռությունը՝ խորացնելով ճգնաժամը ՌԴ-ՆԱՏՕ և ՀԱՊԿ-ՆԱՏՕ հարաբերություններում: Ընդհանուր առմամբ, ՌԴ ռազմաքաղաքական ղեկավարության, խորհրդարանական կուսակցությունների և փորձագիտական շրջանակներում գերակայող է ծայրաստիճան բացասական վերաբերմունքը ՆԱՏՕ-ի ընդլայնման քաղաքականության և հատկապես Դաշինքի վերջին տարիների ռազմական գործունեության նկատմամբ: Սա ցույց է տալիս, որ կողմերը, չնայած անվտանգության ոլորտում միմյանց գործողությունների սուր քննադատությանը, ոչ մի դեպքում հակված չեն մոբիլիզացնել իրենց բոլոր ռազմական կարողությունները: Ըստ այդմ և՛ Ռուսաստանը, և՛ ՆԱՏՕ-ն վարում են երկակի մոտեցում՝ հիմնված ուժեղ զսպման և ուժեղ պաշտպանության ընթացակարգերի վրա: Թեև 2018-2019 թթ. երկկողմ հարաբերությունները շտկելու կողմերի ցանկության որոշ նշանների ի հայտ եկան, սակայն իրավիճակը նորից սրելու համար դեռևս բազմաթիվ բաժանարար գծեր կան, ներառյալ Ուկրաինային և Վրաստանին Դաշինք ընդունելու հեռանկարների

3. Ռուսաստանի քաղաքական տարածության կառուցակցումը «կայունություն-անկայունություն» երկատման պայմաններում

պարբերական քննարկումները, ամերիկյան ռազմաքաղաքական ստեղծելը, հակամարտող կողմերի ռազմապաշտպանական բյուջեի ավելացումը և այլն:

Ռազմաքաղաքական նման անբարենպաստ պայմաններում քաղաքացիական անհնազանդությունները, ինչպես նաև իշխանությունների և ՔՀԿ-ների միջև իրական գործընկերության և երկխոսության «բացերը» պարբերաբար ուղղորդվել են հակաընտրանիների կողմից՝ փորձելով ապակայունացնել ներքաղաքական կյանքն ինչպես «վերևից», այնպես էլ «ներքևից»: Այս առումով երկրի կառավարող ընտրանու դիրքերի ամրապնդումը դրական է ազդել ներքաղաքական կայունության մակարդակի պահպանման վրա՝ ձևավորելով փոխվստահության մթնոլորտ ՔՀԿ-ների հետ «եռակողմ» համագործակցության միջոցով: Դա նվազեցրել է ապակայունացման ռիսկերը՝ և՛ ներքին, և՛ արտաքին սպառնալիքներին համարժեքորեն արձագանքելու շնորհիվ: Այս ամենը հիմնավորում է այն մոտեցումը, որ կայունության ապահովումը եղել է և մնում է կառավարող ընտրանու առաջնային քաղաքական խնդիրը: Ներքաղաքական մարտահրավերներին պատասխաններ գտնելու քաղաքական վարչակարգի կարողությունը մեծապես պայմանավորված էր դաշնային և տարածքային ընտրանիների համախմբման, փոխհամաձայնության և փոխզիջման ունակությամբ: Դա հնարավորություն է տվել անցումային քաղաքական վարչակարգի կայունության և քաղաքական համակարգում աճող ինստիտուտների բազմազանության միջոցով բարելավելու հանրային կառավարման որակն ու հակակոռուպցիոն քաղաքականությունը (*Гришин 2020, Бронников 2019, Бронников 2018*):

ՌԴ քաղաքական համակարգի կայունությանն սպառնացող նոր մարտահրավերները հիմնականում պայմանավորված էին ինչպես արտաքին գործոններով, գլոբալացման, եվրոպական և եվրասիական ինտեգրման գործընթացների ազդեցությամբ և միաբևեռ աշխարհակարգ կառուցելու միտումներով, այնպես էլ անցումային քաղաքական վարչակարգով, կառավարող և ընդդիմադիր ընտրանիների ներքաղաքական պայքարով: Նկատելի է, որ տնտեսական աճի ազդեցությունն ամբիվալենտ է երկրի քաղաքական կայունության մակարդակի վրա, ինչը որոշակիորեն նվազեցրել է տնտեսական ցուցանիշների բացառիկ կարևորությունը քաղաքական վարչակարգի կայունությունը համարժեքորեն գնահատելու համար: Ենթա-

դրվում է, որ երկրի անցումային քաղաքական համակարգի պայմաններում կառավարող և ընդդիմադիր ընտրանիները քաղաքական գործընթացի առավել նշանակալի դերակատարներն են: Իսկ ներքաղաքական կայունության մակարդակն ուղղակիորեն կախված է կառավարող և ընդդիմադիր ընտրանիների հարաբերությունների մոդելից: Հետխորհրդային տարածքում ընթացող եվրասիականացման, եվրոպականացման և համաշխարհայնացման գործընթացները ՌԴ ժամանակակից ընտրանիներին վերադարձնում են բարձր ռիսկայինության իրավիճակ՝ ստիպելով նրանց հարմարվել նոր մարտահրավերներին:

Այսպիսով, ՌԴ քաղաքական կայունության դինամիկան ցույց է տալիս, որ քաղաքական համակարգի արդիականացման պայմաններում Ռուսաստանը պատկանում է ռիսկային այն երկրների խմբին, որոնց արդիականացման հեռանկարները կախված են քաղաքական վարչակարգի կայունությունն ապահովող կառավարող ընտրանու և «իշխանության կուսակցության» համախմբման ունակությունից, ինչպես նաև սոցիալ-տնտեսական բարեփոխումների արդյունավետությունից:

Գրականության ցանկ

- **Applebaum, Anne** (2020) *Twilight of Democracy: The Seductive Lure of Authoritarianism*. NY: Doubleday.
- **Koesel, Karrie J., Valerie Bunce, and Jessica Chen Weiss** (2020) “Introduction: Regimes & Societies in Authoritarian States.” In *Citizens and the State in Authoritarian Regimes: Comparing China and Russia*, ed. by **Karrie Koesel, Valerie Bunce and Jessica Weiss**, pp.1-30. NY: Oxford University Press.
- **Mutschler, Max M. and Marius Bales** (2020a) *Global Militarization Index 2019*. Bonn: BICC.
- **Mutschler, Max M. and Marius Bales** (2020b) *Global Militarization Index 2020*. Bonn: BICC.
- **Popova, Olga** (2019) “State identity policy in “new” states: The limits of efficiency”. *Balkan Social Science Review* 14(14): 141-157.
- **Smyth, Regina** (2021) *Elections, Protest, and Authoritarian Regime Stability: Russia 2008-2020*. Cambridge University Press.

3. Ռուսաստանի քաղաքական տարածության կառուցակցումը «կայունություն-անկայունություն» երկատման պայմաններում

- **Баранов, Николай А.** (2019) “Открытость vs безопасность: приоритеты для государства и гражданского общества в условиях цифровизации”. *Управленческое консультирование* (10): 28-36.
- **Баранов, Николай А., Павел Попов** (2019) “Стратегии гибридных войн стран НАТО как вызов Российской Федерации”. *Евразийская интеграция: экономика, право, политика. Международный научно-аналитический журнал* 3(29): 79-86.
- **Билюга, Станислав Э.** (2018) “Политическая стабильность: основные подходы к анализу устойчивости политических систем”. *Век глобализации* 2 (26): 46-56.
- **Бирженюк, Григорий М., Татьяна В. Ефимова, Александр С. Запесоцкий и др.** (2018). Культура социально-трудовых отношений в современной России. СПб.: СПбГУП.
- **Блинов, Сергей** (2020) “Россия-2024: взгляд из 2020 года”. Дата доступа: 13.01.2021. <https://carnegie.ru/2020/02/14/ru-pub-81072>.
- **Большаков, Андрей Г., Евгения В. Храмова** (2019) “Тренды и перспективы в исследованиях протестных настроений и запросе общества на политическую стабильность в регионах.” *Политическая экспертиза: ПОЛИТЭКС* 15(4): 448–459. <https://doi.org/10.21638/spbu23.2019.401>.
- **Бронников, Иван А.** (2018) “Кризис представительной демократии и новые практики гражданского активизма”. *PolitBook Political Science Journal Ежеквартальный научный журнал* 1: 64-78.
- **Бронников, Иван А.** (2019) “Политические практики сетевого гражданского активизма в России: новые платформы и технологии”. *PolitBook Political Science Journal Ежеквартальный научный журнал* 2: 6-24.
- **Вилисов, Максим В., Даниела Д. Пастармаджиева** (2020) “Цифровая политика: сравнение между ЕС, ЕАЭС и ее государствами-членами”. *PolitBook Political Science Journal Ежеквартальный научный журнал* 1: 6-37.
- **Головенкин, Егор Н.** (2018) “Эволюция представительной системы современной России: динамика перераспределения политической власти”. *PolitBook Political Science Journal Ежеквартальный научный журнал* 1: 150-167
- **Гришин, Николай В.** (2018) “Электоральный трибунал: опыт совмещения функций электоральной администрации и юстиции”. *Вестник Московского Университета. Серия 12: политические науки* (1): 49-62.
- **Гришин, Николай В.** (2020) “Государственная политика идентичности: новая ставка в политической борьбе?”. *Вестник Томского государственного университета Философия. Социология. Политология* 55: 231-239.
- **Гришин, Николай В., Анна Мария Р. Линдерс** (2020) “Децентрализация системы управления выборами”. *Полития* 3: 99-115. <https://doi.org/10.30570/2078-5089-2020-98-3-99-115>.
- **Кочетков, Александр П.** (2018а) “О геополитической безопасности России в условиях глобализации”. *Вестник Российской нации* 1: 153-165.

- **Кочетков, Александр П.** (2018b) “Транснациональные элиты и России”. *PolitBook Political Science Journal Ежеквартальный научный журнал* 2: 37-47.
- **Кочетков, Александр П.** (2020) “Роль цифрового правительства в повышении эффективности взаимодействия власти и гражданского общества в современной России”. *PolitBook Political Science Journal Ежеквартальный научный журнал* 2: 6-23.
- **Лисоволик, Ярослав** (2020) “Россия-2020: подведение итогов”. Дата доступа: 13.01.2021. <https://ru.valdaiclub.com/a/highlights/rossiya-2020-podvedenie-itogov/>.
- **Мартьянов, Денис С., Илья А. Быков** (2018) “Идеологическая сегрегация и цифровое неравенство в российском Интернет-сообществе”. *СОЦИОДИНАМИКА* (4): 43-55. <https://doi.org/DOI:10.25136/2409-7144.2018.4.23109>.
- **Шентякова, Анна В.** (2019) “Консолидация элит и лидерство как факторы эффективности политики идентичности (по оценкам экспертов)”. *СОЦИОДИНАМИКА* (12): 9-17. <https://doi.org/10.25136/2409-7144.2019.12.31311>.

4. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՈՒՐԲՈՒԼԵՆՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՄԱՆ ԲԵԼԱՌՈՒՍԻ ԱՇԽԱՐՀԱՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

2018-2019 թթ. Ռուսաստանի և արևմտյան երկրների միջև սուր առճակատման պատճառով առաջացած աշխարհաքաղաքական տուրբուլենտությունը ստեղծեց նոր հանգամանքներ, որոնք էապես ազդեցին Բելառուսի Հանրապետության (ԲՀ) քաղաքական համակարգի կայունության, միջազգային համագործակցության և ինտեգրման վրա: Միջազգային հարաբերությունների բարձր տուրբուլենտության պատճառով՝ երկրի արտաքին քաղաքականության մեջ գերակայող դարձան ինտեգրման գործընթացներն ազգային շահերի պրիզմայով ընկալելու միտումները (*Барахвостов 2019, Буховец, Олег Г., Андрей Л. Бувев 2018, Шамшур 2019*): Այս պայմաններում բնական վերափոխումների է ենթարկվել այն պարադիգմը, երբ փոքր պետությունները չեն կարողանում ազդել աշխարհակարգի վրա իրենց ռեսուրսների խիստ անհավասար ներուժի պատճառով:


Բելառուսը, հայտնվելով աշխարհաքաղաքական առճակատման էպիկենտրոնում, սկսեց առավելագույնս հաշվի առնել աշխարհաքաղաքական գործընթացների բնույթն ու Միութենական պետության վիճակը՝ ազգային շահերը պաշտպանելու համար: Նման աշխարհաքաղաքական միջավայրում հնարավոր դարձավ ձևավորել Բելառուսի աշխարհառազմավարական զարգացման նոր մոտեցումներ:

Դիտարկվող ժամանակահատվածում մեծացել է երկրի ռազմավարական դերը ոչ միայն եվրասիական ու եվրոպական, այլև համաաշխարհային անվտանգության ամրապնդման գործում՝ հնարավորություն ընձեռելով փոխշահավետ հարաբերություններ զարգացնելու արևմտյան և արևելյան

վեկտորների երկայնքով: Ձևավորելով տարածաշրջանային կայունության ամրապնդմանն ուղղված նախաձեռնությունների ներուժը՝ Բելառուսը ձգտում է հեռու մնալ առճակատման տարբեր ձևերից՝ երկիրը դիրքավորելով որպես միջազգային հարաբերությունների կարևոր սուբյեկտ, որը կարող է լուրջ ներդրում ունենալ հակամարտությունների կանխարգելման և կարգավորման գործընթացում: Այս առումով Բելառուսը զգալի ներուժ ունի գործընկերության զարգացման աշխարհառազմավարական և աշխարհաքաղաքական ռեսուրսները Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) և Եվրամիության (ԵՄ) շրջանակներում: Երկրի կառավարող ընտրանին բարձր է գնահատում անկախ պետականության աշխարհառազմավարական բնույթը (*Евразийская экономическая комиссия 2018, ЕАЭС 2018, Чесновский 2019, Глазьев 2020*):

Գծապատկեր 1

Բելառուսի ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսները (2000-2019 թթ.)*



Բելառուսի ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսը (Ք_{գր}) 2017 թ. համեմատ 2018-2019 թթ. կտրուկ նվազել է (տե՛ս Աղյուսակ 1, Գծապատկեր 1), որը քաղաքական կայունության մարտահրավերների ավելացման ցուցիչ

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Քաղաքական գործոնների ինդեքսը գնահատվում է -1-ից +1 միջակայքում ընկած միավորներով, որտեղ -1-ը կայունության նվազագույն մակարդակն է, իսկ +1-ը՝ առավելագույն:

4. Քաղաքական տուրբուլենտության և ինտեգրացիոն գործընթացների հավասարակշռման Բելառուսի աշխարհառազմավարությունը

է: Խոսքը, մասնավորապես, Ռուսաստան-Բելառուս միութենական պետության ռազմավարության արդյունավետության և զարգացման հիմնախնդիրների մասին է, որոնք հնարավոր է լուծել միայն աշխարհաքաղաքական, տնտեսական, ռազմաքաղաքական և մշակութային-հաղորդակցական գործոնները համատեղ դիտարկելու դեպքում: Քաղաքակրթության ինքնատիպությունը, երկու պետությունների տարածքում բնակվող ժողովուրդների պատմական փորձը և ավանդույթները ռուս-բելառուսական հասարակության համար զարգացման ընդունելի ուղղություններ որոնելու հիմք են: Ռուսաստանն ու Բելառուսն իրենց ինտեգրացիոն փոխգործակցության մեջ ստեղծել են Միութենական պետության միանգամայն նոր տեսակ, որն ունի ինչպես դաշնային, այնպես էլ համադաշնային հատկանիշներ: Սակայն երկու երկրների միջև ինտեգրացիոն հարաբերությունները պետք է զարգանան համաձայն «տարածաշրջան»-«երկիր»-«Բելառուս-Ռուսաստան Միութենական պետություն» եռաստիճան մոդելի՝ հնարավորություն ընձեռելով ուրվագծել կառավարման մարմինների իրավասությունները բոլոր մակարդակներում:

Բելառուսի կայունության մակարդակի տատանումներում նկատելի էին արտաքին քաղաքականության եվրասիական և եվրոպական աշխարհառազմավարական վեկտորների փոխլրացման քայլերը՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդելով հասարակական կյանքի ոլորտների վրա: Ուստի, անկախ քաղաքական վարչակարգից, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից, կառավարչական ավանդույթներից և կառուցվածքից՝ քաղաքական կայունության ապահովման հիմնախնդիրը պայմանավորված է պետության և քաղաքացիական հասարակության միջև մշտական երկխոսության և կայուն գործընկերության հասնելու կարողությամբ: Բելառուսի հասարակական համակարգի կառուցակցման պատմությունը ցույց է տալիս, որ քաղաքական կայունության հասնելու և քաղաքական ուժերի ձեռք բերած հավասարակշռությունը պահպանելու տարբեր եղանակները լուծվում են հիմնականում կառավարող ընտրանու միջանձնային հարաբերությունների մակարդակում: Ավելին, պետությունն ու պետական իշխանության մարմինները միշտ այս գործընթացի հիմնական դերակատարներն են: Հետևաբար, իշխանության արդյունավետ և օպտիմալ ինստիտուցիոնալ

շրջանակը ոչ միայն քաղաքական կայունության իրական երաշխիքն է, այլև դրա ապահովման կարևոր գործոնը:

Աղյուսակ 1

Բելառուսի ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսները (2000-2019 թթ.)*

Տարեթիվ	Ք _{ԳԻ}
2000	-0,070
2001	-0,162
2002	-0,046
2003	-0,105
2004	-0,200
2005	-0,005
2006	-0,113
2007	0,056
2008	0,072
2009	-0,028
2010	-0,172
2011	-0,021
2012	-0,136
2013	-0,047
2014	-0,082
2015	-0,083
2016	-0,018
2017	0,084
2018	0,028
2019	-0,010

Դիտարկվող ժամանակահատվածում Բելառուսի աշխարհառազմավարությունը փոփոխությունների է ենթարկվել՝ հաշվի առնելով կայուն զարգացման մի շարք առաջնահերթություններն ու դրանց էվոլյուցիոն տեղա-

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Ա_{ԳԻ}-ի և հետևաբար դրանց հիման վրա հաշվարկված ՔՀԿԻ-ի արժեքները որոշ տարիների կտրվածքով հնարավոր է՝ աննշան տարբերվեն նախորդ հրապարակման համապատասխան տարիների արժեքներից՝ թարմացված տվյալների, նոր տվյալների ներմուծման, նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխման պատճառով:

4. Քաղաքական տուրբուլենտության և ինտեգրացիոն գործընթացների հավասարակշռման Բելառուսի աշխարհառազմավարությունը

շարժը դեպի տնտեսական շահերի ոլորտ: Արդյունքում Բելառուսի աշխարհառազմավարությունը և՛ եվրասիական, և՛ եվրոպական ինտեգրման ասպարեզներում իրականացվել է սոցիալ-տնտեսական նպատակներին համահունչ՝ ելնելով ռազմավարության ազգային շահերից (*Национальный банк РБ 2019, Национальный банк РБ 2020, Боярчук 2019, Желиба 2018, Кузьменкова 2020, Вардомский 2019, Кечина, Филинская 2020*): Այդպիսով, ապահովվել է քաղաքական նախագծերի և նախաձեռնությունների դինամիկ բաղադրիչների գործարկումը, որոնք Բելառուսի նախագահն ու կառավարող ընտրանին կյանքի են կոչել միջազգային համագործակցության տարբեր ոլորտներում:

Ինքնիշխանության արդիականացման իրողությունները պահանջում են ինչպես պետական ինստիտուտների, այնպես էլ հասարակական-քաղաքական միավորումների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ներ) հետագա կատարելագործում՝ համարժեքորեն գնահատելով դրանց ցիվիլիարխիկ արդյունքներն ու քաղաքացիական գիտակցության վրա ազդելու կարողությունները: Ակնհայտ է, որ երկրի քաղաքական կյանքում քաղաքացիների գիտակցված մասնակցության և քաղաքական կայունության ապահովման տեսանկյունից ցիվիլիարխիկ կանոնների պահպանումն ամենահրատապ խնդիրն է: Այն կարող է իրականացվել պայմանով, որ ստեղծվեն քաղաքացիամետ երաշխիքներ՝ նպաստելով պետության հետագա զարգացմանն ու կառավարության արդյունավետ որոշումների կայացմանը ՔՀԿ-ների փոխակերպման համատեքստում: Այս առումով ուշագրավ է եղել Համաբելառուսական ժողովրդական ժողովը¹⁵ (ՀԺԺ), որն անընդհատ արդիականացվում է, և որի շրջանակներում քննարկվել են պետականության ամրապնդման և ժողովրդաիշխանության կայացման հիմնախնդիրները: Թերևս ՀԺԺ-ի գործունեությունը հնարավորություն տվեց բացահայտել բելառուսական ինքնիշխան պետականության կայացման շրջափուլերը: Դրանցում ներառված էին քաղաքական կայունության ոլորտում մշակված ռազմավարական, բազմաբնույթ, բազմափուփոխ և փոխզիջումային կառավարչական որոշումները՝ հաշվի առնելով ժողովրդաիշխանության մշակույթի զարգացումը տնտեսության սոցիալական

¹⁵ Ավելի մանրամասն տե՛ս Համաբելառուսական ժողովրդական ժողովի պաշտոնական կայքը՝ <https://vsebel.by/history/> (16.01.2021):

մոդելի և իրավական պետության ձևավորման համատեքստում: Դրա անվիճելի ապացույցը պետության արտաքին քաղաքականության մեջ աշխարհաքաղաքական նախագծերի առկայությունն է, որոնք ներառում են «ինտեգրումների ինտեգրման» հայեցակարգը: Իսկ ինչ վերաբերում է եվրասիական ինտեգրացիոն գործընթացներին, ապա հաշվի առնելով եվրասիականություն առանձնահատկությունները՝ Բելառուսի կառավարող ընտրանին ձգտում է ապահովել ազգային շահերի գերակայությունը, այլ ոչ թե փնտրել գաղափարախոսական նոր դոկտրին: Դա է պատճառը, որ եվրասիականության հեռանկարները կարևորվել են նաև «ինտեգրացիաների ինտեգրում» հայեցակարգի իրականացման համատեքստում: Վերջինս ներդաշնակորեն տեղավորվել է Բելառուսի որդեգրած տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման գործընթացում՝ ինտեգրման միջոցով ապահովելով կայունության և անվտանգության ավելի բարձր մակարդակ: Այս տեսանկյունից Բելառուսը բացառություն չէ. այն նույնպես առաջնորդվում է քաղաքական պրագմատիզմի սկզբունքներով և տնտեսական ինտեգրման գերակայություններով: Սակայն խնդրահարույցն ինտեգրման վեկտորի ոլորտն ու խորությունն է:

Դիտարկվող ժամանակահատվածում զգալի է եղել ԵՄ ազդեցությունը երկրի ինտեգրման ռազմավարության վրա (*Левенков 2019, Шевченко 2020, Голованов 2018*): Բելառուսում, որպես ԵՄ հարևան երկիր, ակտիվորեն քննարկվում և քննարկվել է ԵՄ քաղաքական և տնտեսական տարածության մեջ Բելառուսի տեղի և դերի հարցը: Թեև ԵՄ Արևելյան գործընկերության (ԱԳ) ծրագրի շրջանակներում փորձել էր և փորձում է տեղայնացնել եվրոպական արժեքներն ու նորմերը՝ օգտագործելով տարբեր գործիքներ, այնուամենայնիվ վերջին տարիներին նկատելի է եվրոպական ինտեգրման գործընթացների «դանդաղում»: Դրա հիմնական պատճառը Ռուսաստանի և Բելառուսի միութենական պետության աշխարհառազմավարական շահերն էին, որոնք երկու երկրներից պահանջում էին գործընկերության հետագա ամրապնդում: Օբյեկտիվորեն դա անհրաժեշտ էր և շահավետ ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Բելառուսի համար: Ռուսաստանը, դաշինք կազմելով Բելառուսի հետ, զգալիորեն ամրապնդեց իր ռազմավարական դիրքն արևմտյան ուղղությամբ: Բելառուսը, իր հերթին, ի

4. Քաղաքական տուրբուլենտության և ինտեգրացիոն գործընթացների հավասարակշռման Բելառուսի աշխարհառազմավարությունը

դեմս Ռուսաստանի, ստացավ իր աշխարհաքաղաքական կարգավիճակի համար հուսալի աջակցություն և պաշտպանություն:

Բելառուսի տնտեսության բարեփոխման և հասարակական-քաղաքական կյանքի ժողովրդավարացման գործընթացները երկրի իշխանությունների համար պարունակում էին և՛ ռիսկեր, և՛ նոր հնարավորություններ, որոնց պատճառով դրանք ընկալվում էին բավականին երկիմաստ (*Данилов, Ротман 2019, Калечиц 2018, Посталовская 2020*): Հետևաբար, Բելառուսի ղեկավարության համար երկփեղկված է Եվրոպայի պատկերը՝ որպես հասարակական կյանքի բոլոր ոլորտների արդիականացման հնարավորությունների աղբյուր, իսկ նրանց միջնորդությամբ քաղաքական և տնտեսական ռիսկերը կարգավորելու հեռանկարն այնքան էլ իրատեսական չէ: Համագործակցություն հաստատելու փորձերը կերպափոխվեցին հակամարտությունների սրման, անվստահության և միմյանց նպատակները սխալ ընկալելու պատճառով: ԵՄ կողմից Բելառուսի նկատմամբ դիվանագիտական օբյեկտիվ և պրագմատիկ հարաբերությունների բացակայությունը հաստատող մեկ այլ փաստ էր միջինստիտուցիոնալ և դիվանագիտական շփումների սառեցումը: Երկար ժամանակ ԵՄ պաշտոնական ինստիտուտներն անտեսում էին Բելառուսի իշխանություններին՝ նախընտրելով երկխոսություն վարել ընդդիմության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Այնուամենայնիվ, համագործակցության այս ձևը ցույց տվեց իր անարդյունավետությունն ու թերությունը, ինչը ԵՄ-ին ստիպեց որոնել Բելառուսի իշխանությունների հետ փոխգործակցության նոր ձևեր:

Դիտարկվող ժամանակաշրջանում ուկրաինական ճգնաժամը Եվրոպական կողմին ստիպեց վերանայել Բելառուսի և ԱլԳ այլ երկրների նկատմամբ իր արտաքին քաղաքական մոտեցումները՝ հետազայում նման սցենարների հնարավոր կրկնությունից խուսափելու համար: Մասնավորապես, ուկրաինական ճգնաժամի համատեքստում, Բելառուսը, չնայած քաղաքական և տնտեսական բարեփոխումների ոլորտում ԵՄ ակնկալիքների հետ անհամապատասխանությանը, այնուամենայնիվ հանդես եկավ որպես հուսալի և կանխատեսելի գործընկեր տարածաշրջանային անվտանգության և կայունության ապահովման գործում:

Բելառուսի անդամակցությունը ԵԱՏՄ-ին կանխորոշեց պետության արտաքին քաղաքական օրակարգի մի շարք գործոններ, որոնցից առանցքայինը Ռուսաստանի հետ խորը համագործակցության ռազմավարական անհրաժեշտությունն էր: Մի կողմից՝ Բելառուսը ձգտում է իրականացնել տնտեսական բնույթի ռազմավարական ծրագրեր՝ հիմնված պրագմատիզմի և աշխարհատնտեսական սկզբունքների վրա¹⁶, իսկ մյուս կողմից՝ խորը ինտեգրվել ռեսուրսներով զգալիորեն գերազանցող ՌԴ հետ: Դրանով նա չեզոքացրեց մի շարք ռիսկեր, որոնք ազդում են քաղաքական և տնտեսական անվտանգության կարևորագույն հարցերի վրա՝ ներառյալ ինտեգրման մի շարք ուղղությունների սահմանափակումները (*Национальный банк РБ 2019, Национальный банк РБ 2020, ЕАЭС 2018, Комаров 2019, Постаповская 2020*): Տեղին է նշել, որ Բելառուսն առավելագույնս օգտագործել է ռազմավարական գործընկերության ներուժը Ռուսաստանի հետ հարաբերություններում ինչպես երկկողմ, այնպես էլ Միութենական պետության և ինտեգրման այլ միավորումների շրջանակներում: Երկկողմ ընդարձակ օրակարգը որոշվել է նաև տնտեսությունների փոխլրացման և ձեռնարկությունների սերտ համագործակցության կապերով: Երկու երկրների ռազմավարական նախաձեռնությունների վեկտորները պայմանավորեցին նրանց մակրոտնտեսական և արդյունաբերական ռեսուրսների զարգացումը՝ նպաստելով Միութենական պետության ինստիտուցիոնալ հիմքերի ամրապնդմանը:

2018-2019 թթ. Բելառուսում օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈւՆ) ներգրավելու հարցում կտրուկ փոփոխություններ տեղի չեն ունեցել: 2019 թ. դրանց ընդհանուր ծավալը կազմել է 1,27 միլիարդ ԱՄՆ դոլար, ինչը 2018 թ. համեմատ նվազել է¹⁷: Սակայն ՕՈւՆ-ի այդ մակարդակն էլ նպաստել է

¹⁶ Ավելի մանրամասն տե՛ս ԲՀ նախագահի պաշտոնական կայքը՝ «Совещание о социально-экономическом развитии страны в 2019 году и подходах к дальнейшему развитию интеграционных направлений». http://president.gov.by/ru/news_ru/view/soveshanie-o-sotsialno-ekonomicheskom-razviti-i-strany-v-2019-godu-i-podxodax-k-dalnejshemu-razvitiyu-20264/ (17.01.2021):

¹⁷ Տե՛ս ԲՀ ազգային բանկի պաշտոնական կայքը՝ <http://www.nbrb.by/publications/BalPay/balpay2019.pdf> (18.01.2021), ԲՀ ազգային վիճակագրական կոմիտեի կայք՝ https://www.belstat.gov.by/ofitsialnaya-statistika/realny-sector-ekonomiki/statistika-vneshneekonomicheskoy-deyatelnosti/inostrannye-investitsii/operativnye-dannye/inostrannye-investitsii/?special_version=Y (18.01.2021):

4. Քաղաքական տուրբուլենտության և ինտեգրացիոն գործընթացների հավասարակշռման Բելառուսի աշխարհառազմավարությունը

Բելառուսում դինամիկ զարգացող և կայուն ֆինանսական շուկայի բարելավմանը: Տնտեսության ֆինանսական հատվածում կայունությունն ապահովելու համար կառավարությունը և Ազգային բանկը մշակել են «ԲՀ ֆինանսական շուկայի զարգացման ռազմավարություն մինչև 2020 թ.»¹⁸, որի նպատակներն ու խնդիրներն ուղղված էին ֆինանսական շուկայի որակական կերպափոխմանը, անհավասարակշռության վերացմանը, կարգավորիչ մոտեցումների հետագա կատարելագործմանը՝ ապահովելով շուկայական ենթակառուցվածքների զարգացումը ժամանակակից թվային տեխնոլոգիաների ակտիվ ներդրմամբ:

2018-2019 թթ. Միութենական պետության արտաքին քաղաքականության ոլորտում համակարգված գործողությունների ծրագրերը¹⁹ նպատակաուղղված էին խորացնելու երկկողմ համագործակցությունը ԱՊՀ, ՀԱՊԿ և ԵԱՏՄ տարածքում, միջազգային կազմակերպություններում՝ ապահովելով տարածաշրջանային և եվրոպական անվտանգությունը, ինչպես նաև բարձրացնելով Բելառուսի և Ռուսաստանի դերը նոր մարտահրավերների և սպառնալիքների դեմ պայքարում: Անվտանգության ապահովման գործում Միութենական պետության քաղաքական անվտանգության ռազմավարական ուղղությունները հիմնված են համագործակցության նորարարական ձևերի վրա: Դրանք նպատակ ունեն կանխելու տարածաշրջանային և միջազգային անվտանգության սպառնալիքները՝ օգտագործելով ռազմական պաշտպանության գերժամանակակից համակարգեր (*Министерство обороны Российской Федерации 2019*): Միության պետության շրջանակներում մշակվել են Բելառուսի և Ռուսաստանի կառավարչական թերությունները շտկելու համապարփակ միջոցառումների ծրագրեր, որոնք նպաստելու են երկրների միջև առևտրատնտեսական կապերի զարգացմանը՝ ընդլայնելով տրանսպորտային միասնական համակարգի, վառելիքի և էներգիայի միասնական շուկան: Վերջինիս կայացման հիմնախնդիրներից է այն, որ Բելառուսի տնտեսական մոդելը խառը տնտեսություն է՝ պետական ձեռնարկությունների և պետական բանկերի առանցքային դերակատարմամբ: Մինչդեռ մասնավոր սեփականության մասնաբաժինն աստիճանաբար

¹⁸ Տե՛ս ԲՀ նախարարների խորհրդի պաշտոնական կայքը՝ <http://www.government.by/ru/content/8915> (18.01.2021):

¹⁹ Այդ մասին տե՛ս Միութենական պետության մշտական հանձնաժողովի պաշտոնական կայքը՝ <https://www.postkomsg.com/documentation/> (18.01.2021):

աճում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի և դրան հարակից ծառայությունների արդյունաբերության արագ զարգացման շնորհիվ: Այս ամենը դիտարկելով Բելառուսի ազգային շահերի պրիզմայի միջով՝ կարելի է արձանագրել, որ սոցիալ-տնտեսական և առավել ևս քաղաքական հարաբերությունների առճակատումն ու վատթարացումը Ռուսաստանի հետ չեն բխում պետության շահերից: Դա առաջին հերթին պայմանավորված է Բելառուսի տնտեսության սերտ կախվածությամբ Ռուսաստանի էներգետիկ ռեսուրսներից, ինչպես նաև՝ ապրանքների և ծառայությունների արտահանման մեծ բաժնեմասից²⁰: Բացի այդ, Ռուսաստանը Բելառուսի կողմից ներմուծվող հիմնական ապրանքների խոշորագույն մատակարարն է²¹, և արտաքին առևտրի գործարքների վերաբերյալ պայմանագրային հարաբերությունները ռազմավարական բնույթ են կրում, քանի որ Բելառուսը Ռուսաստանի միակ գործընկերն է Արևմուտքում:

Տնտեսության կառուցվածքի արմատական բարեփոխումների բացակայությունը սահմանափակել է դեպի Բելառուս կապիտալի, տեխնոլոգիայի և նորարարության ավելի դինամիկ հոսքին: Ուստի երկրի իշխանությունները մշակել են ավելի ճկուն մի շարք ընթացակարգեր, որոնք կբավարարեն Արժույթի միջազգային հիմնադրամի²² (ԱՄՀ) սահմանած պայմանները՝ վարկային ծրագրի ստորագրելու համար: Դա անշուշտ կնպաստի տնտեսության վերականգնմանը, կբարձրացնի նրա կայունությունն ու մրցունակությունը: Սակայն, մյուս կողմից, Բելառուսի քաղաքական համակարգի կայունության համար առանցքային են Ռուսաստանի հետ ռազմավարական գործընկերային հարաբերությունները: Տեղին է նշել, որ նույնիսկ Բելառուսի տնտեսության էական վերակազմավորման դեպքում դրա ներդրումային միջավայրի վերանայումը երկարատև գործընթաց է, իսկ անցումային շրջանում բնակչության եկամուտներն ու կենսամակարդակը զգալիորեն կնվազեն, ինչը, ի վերջո, կարող է հանգեցնել հասարակության դժգոհության աճի և ներքին նոր խնդիրների առաջացման:

²⁰ Այդ մասին տե՛ս ԲՀ ազգային վիճակագրական կոմիտեի կայքը՝ <https://www.belstat.gov.by/ofitsialnaya-statistika/realny-sector-ekonomiki/vneshnyaya-torgovlya/vneshnyaya-torgovlya-tovarami/godovye-dannye/> (18.01.2021):

²¹ Տե՛ս նույն տեղում:

²² Տե՛ս ԲՀ ազգային բանկի պաշտոնական կայքը՝ <http://www.nbrb.by/today/internationalcooperation/imf> (18.01.2021):

4. Քաղաքական տուրբուլենտության և ինտեգրացիոն գործընթացների հավասարակշռման Բելառուսի աշխարհառազմավարությունը

Ինչ վերաբերում է Բելառուսի հակակոռուպցիոն²³ քաղաքականության գերակայություններին, ապա դրանք ուղղված են եղել կոռուպցիայի հաղթահարմանը, ճնշմանն ու կանխարգելմանը, ինչպես նաև դրան նպաստող պատճառների ու պայմանների բացահայտմանը: Մասնավորապես ձևավորվել է հակակոռուպցիոն իրավական գործիքակազմ, այդ թվում՝ պետական պաշտոնյաների և նրանց հավասարեցված անձանց նկատմամբ ֆինանսական վերահսկողության միջոցառումներ՝ կանխելու կոռուպցիայի դրսևորումները և դրանց ժամանակին հայտնաբերումն ու պատասխանատվությունը:

2018-2019 թթ. Հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարի հանրապետական համակարգող խորհրդի որոշմամբ՝ հաստատվել և իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված գործող կանխարգելիչ ընթացակարգերի կատարելագործմանն ու նորերի մշակմանը: Իրականացվել են հանցագործությունների և կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրեր, հակակոռուպցիոն օրենսդրությունը բարելավելու նպատակով ընդունվել են օրենսդրական մի շարք նորմեր, վերանայվել են հանցագործությունների կանխարգելման սուբյեկտների գործունեության ձևերն ու մեթոդները՝ կոռուպցիայի դեմ պայքարում ՔՀԿ-ների գործունեության խթանման համար:

Ինչ վերաբերում է ՔՀԿ-ների գործունեությանն ու քաղաքացիական անհնազանդություններին, ապա որպեսզի դրանք առանցքային դերակատարում ունենան երկրի քաղաքական համակարգի ժողովրդավարական կերպափոխման գործընթացում, պետք է հավասարակշռված քայլեր ձեռնարկեն իշխանությունների հետ հարաբերություններում: Այս առումով «ավելին՝ ավելիի դիմաց» և «պակաս՝ պակասի դիմաց» ԵՄ ԱԼԳ սկզբունքների կիրառումը պետք է տարածվի նաև Բելառուսի քաղաքացիական հասարակության ոլորտում՝ կենտրոնանալով ոչ միայն երկրի իշխանությունների գործողությունների վրա, այլև մարդու իրավունքների պաշտպանության ընթացակարգերի (*EEAS 2019*):

Դիտարկվող ժամանակահատվածում ԵՄ-ի և Բելառուսի ՔՀԿ-ների միջև երկխոսությունը փորձել է ապահովել Քաղաքացիական հասարակու-

²³ Տե՛ս «Указ Президента РБ от 9 ноября 2010г. N575 “Об утверждении Концепции национальной безопасности РБ”»: <https://kgb.by/ru/ukaz575/> (18.01.2021):

թյան ֆորումի²⁴ ազգային պլատֆորմը՝ դառնալով ԵՄ-Բելառուս հարաբերությունների բաղկացուցիչ մասը: Քաղաքացիական անհնազանդությունները դրական են ազդել երկրի քաղաքական կյանքի ակտիվացման, բայց բացասաբար՝ ԵՄ-Բելառուս հարաբերությունների վրա, որոնք առավել քան բարդ են: Մի կողմից՝ ԵՄ-ն պետք է ընդունի, որ չունի ուղղակի ազդեցության գործիքակազմ, որն արդյունավետ կլիներ քաղաքացիական երկխոսության և ներքաղաքական իրավիճակի բարելավման համար, մյուս կողմից՝ ԵՄ-ի ցանկացած քայլ ուղղակիորեն ազդել է Բելառուսի ՔՀԿ-ների վրա՝ պատճառ դառնալով բելառուսական իշխանությունների անհամաչափ արձագանքին: Գործնականում դա նշանակում է, որ պետք է բարձրացվի քաղաքացիական հասարակության կառուցողական դերը երկրի քաղաքական համակարգի ժողովրդավարական կերպափոխման գործընթացում: Բելառուսի հետ ԵՄ համագործակցության ընթացակարգերը պետք է վերակազմակերպվեն այնպես, որ երկրում գործող ՔՀԿ-ները կարողանան մասնակցել եվրոպական ինտեգրման նախագծերի մշակման ու իրականացման բոլոր փուլերին՝ սկսած ծրագրումից մինչև գնահատում:

Բելառուսում կուսակցությունները²⁵ նույնպես պետք է օգտագործեն այս քաղաքական հնարավորությունն իրենց որոշ խնդիրները լուծելու համար: Ակնհայտ է, որ բելառուսական իրողություններում և պրակտիկայում կուսակցություններն ավելի շատ ընդհանրություններ ունեն ՔՀԿ-ների հետ, քան տարբերություններ. դրանք ունեն համանման նպատակներ, ծրագրեր և գործիքներ: Բելառուսական քաղաքացիական հասարակությունը բավականին քաղաքականացված է, սակայն դա չի նշանակում, որ բոլոր ՔՀԿ-ներն ունեն քաղաքական հավակնություններ: Ընդ որում ընդդիմադիր կուսակցությունների ուժերի մասնատվածությունը խանգարել է իրենց ընտրազանգվածի առավել տեսանելի հատվածի և քաղաքացիական նախաձեռնությունների համախմբմանը: Սոցիալական հասցեատիրոջ անորոշության և բազմակուսակցական համակարգի լիարժեք քաղաքական բազայի բացակայության պայմաններում դժվար է որոշել, թե որոնք են կուսակցությունների առաջնահերթությունները, և ովքեր են նրանց առաջնորդները:

²⁴ Ավելի մանրամասն տե՛ս ԱլԳ ՔՀՖ բելառուսական ազգային պլատֆորմի պաշտոնական կայք՝ <https://npbelarus.info/eng/category/documents/> (19.02.2021):

²⁵ Այդ մասին տե՛ս ԲՀ նախագահի պաշտոնական կայքում՝ <https://president.gov.-by/ru/belarus/society/politicheskie-partii> (11.02.2021):

4. Քաղաքական տուրբուլենտության և ինտեգրացիոն գործընթացների հավասարակշռման Բելառուսի աշխարհառազմավարությունը

Ավելին, միանման գաղափարախոսական ուղղվածություն ունեցող քաղաքական ուժերի միջև թույլ են միջկուսակցական կապերն ու հարաբերությունները:

Բելառուսում կուսակցաշինության զարգացումը խոչընդոտող գործոններից է նաև այն, որ դիտարկվող ժամանակահատվածում կուսակցությունները ներկայացված չեն եղել պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններում. դրանք գործել են երկրի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի նշանակած կառավարության որոշումներով՝ հաշվետու լինելով միայն նրան: Չունենալով քաղաքական ներկայացուցչություն՝ կուսակցությունները զրկված են եղել միջնորդի և կապող օղակի, պետության և հասարակության միջև հաղորդակցական կամրջի դեր կատարելուց:

Այսպիսով, ՌԴ և Արևմտյան երկրների միջև անընդհատ աճող առճակատումը, ռազմական ներուժի ագրեսիվ ցուցադրումը լարվածություն և անորոշություն են առաջացնում Բելառուսի ազգային անվտանգության համակարգում: Բացի այդ, տեղեկատվական-հաղորդակցական պայքարը բացասական է ազդել հանրային քաղաքականության և կառավարչական որոշումների կայացման՝ ինչպես ազգային անվտանգության ապահովման, այնպես էլ պետական կառավարման համակարգի գործառնման վրա: Այս ռիսկից ելնելով էլ երկրի նախագահը սկսեց ուժեղացնել ազգային անվտանգության միջոցառումները Բելառուսում Միութենական պետության և ՀԱՊԿ-ի գործունեության շրջանակներում: Փաստորեն ժամանակակից աշխարհակարգը ձևավորել է աշխարհաքաղաքական գործընթացների բարձր դինամիկա: Այդ է պատճառը, որ Միութենական պետության ինտեգրման գործընթացների ռազմավարությունը նոր հնարավորություններ և ռիսկեր է պարունակում երկրի կայուն զարգացման համար: Միգուցե Բելառուսը ԵՄ-ի և ՌԴ-ի հետ համագործակցությամբ պետք է հետևողականորեն պահպանի փոխլրացման քաղաքականության կանոնները՝ որոշակի զգուշավորություն ցուցաբերելով հարաբերությունների միակողմանի խորացման հարցում:

Գրականության ցանկ

- **EEAS** (2019) “Отношения ЕС-Беларусь в фактах и цифрах”. Дата доступа: 15.01.2021. https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/35851/-node/35851_ru.
- **Барахвостов, Павел А.** (2019) “Проблемы и перспективы Евразийского экономического союза”. *Проблемы управления. Серия В (философские науки, юридические науки, политические науки)* 2 (72): 142-146.
- **Боярчук, Татьяна Н.** (2019) “Толерантность как фактор устойчивого развития современного белорусского общества”. *Вестник Гродненского государственного университета имени Янки Купалы. Серия 1. История и археология. Философия. Политология* 11(1): 98-107.
- **Буховец, Олег Г., Андрей Л. Буев** (2018) “Государственный билингвизм. положение русских и русскоязычие в Республике Беларусь”. *Современная Европа* 3 (82): 71-82.
- **Вардомский, Леонид Б.** (2019) “Евразийская интеграция, некоторые итоги и возможные сценарии развития”. *Российский внешнеэкономический вестник* 4: 110-126.
- **Глазьев, Сергей Ю.** (2020) “Белорусский выбор”. *Евразийская интеграция: экономика, право, политика* 3(33): 11-25.
- **Голованов, Роман С.** (2018) “Евразийская интеграция как политологическая проблема”. *Вопросы национальных и федеративных отношений* 8(5): 639-648.
- **Данилов, Александр Н., Давид Г. Ротман** (2019) “Приоритет мягкой силы в дестабилизации современного социума (на примере Республики Беларусь)”. *Социологические исследования* 2: 68-77. DOI:10.31857/S013216250004010-4.
- **ЕАЭС** (2018) “Декларация о дальнейшем развитии интеграционных процессов в рамках Евразийского экономического союза”. Дата доступа: 15.01.2021. https://docs.eaeunion.org/docs/ru-ru/01420213/ms_10122018.
- **Евразийская экономическая комиссия** (2018). Экономическое развитие Евразийского экономического союза и государств-членов в 2018 году: международные рейтинги. Аналитический доклад. Москва.
- **Желиба, Борис Н.** (2018) “Драйверы белорусской экономики”. *Экономика. Управление. Инновации* 1(3): 27-31.
- **Калечиц, Дмитрий Л.** (2018) “Система обеспечения финансовой стабильности в Республике Беларусь: становление, развитие и перспективы”. *Белорусский экономический журнал* 2 (83): 4-17.
- **Кечина, Евгения А., Лариса В. Филинская** (2020) “Качество жизни пожилых людей в Беларуси”. *Вестник Российского университета дружбы народов. Серия: Социология* 20 (1): 30-49.

4. Քաղաքական տորրրուլենտության և ինտեգրացիոն գործընթացների հավասարակշռման Բելառուսի աշխարհառազմավարությունը

- **Комаров, Никита А.** (2019) “Интеграционные процессы в сфере образования в рамках Союзного государства и ЕАЭС”. *Вестник социально-гуманитарного образования и науки* 1: 47-52.
- **Кузьменкова, Татьяна Н.** (2020) “Основной закон Республики Беларусь: стабильность и направления совершенствования”. *Вестник Полоцкого государственного университета. Серия D. Экономические и юридические науки* 13: 117-121.
- **Левенков, Артем** (2019) “Роль государства в повышении эффективности выполнения национальной валютой своих функций”. *Банковский вестник* 11 (676): 35-41.
- **Министерство обороны Российской Федерации** (2019) “Россия и Белоруссия едины в стремлении укреплять военное сотрудничество для обеспечения безопасности Союзного государства”. Дата доступа: 25.01.2021. https://function.mil.ru/news_page/country/more.htm?id=12258605@egNews.
- **Национальный банк РБ** (2019) Финансовая стабильность в Республике Беларусь 2018. Минск.
- **Национальный банк РБ** (2020) Финансовая стабильность в Республике Беларусь 2019. Минск.
- **Посталовская, Ольга А.** (2020) Экологическая политика: теория и социально-политическая практика: монография. Минск: РИВШ.
- **Чесновский, Мечислав Э.** (2019) “Внешняя политика Республики Беларусь в контексте европейской интеграции”. В сб.: Беларусь в меняющемся мире: история и современность. материалы международной научно-практической конференции. Минск: БГУ: 30-40.
- **Шамшур, Анастасия** (2019) “Интеграционный эффект: что Беларусь получает от участия в Евразийском союзе”. Дата доступа: 15.01.2021. <https://eurasia.expert/integratsionnyy-effekt-chno-belarus-poluchaet-ot-uchastiya-v-evraziyskom-soyuze/>.
- **Шевченко, Светлана В.** (2020) “Средний класс в Республике Беларусь: конверсия или эрозия?”. *Труды БГТУ. Серия 5: Экономика и управление* 2 (238): 56-60.

5. ՓԱՓՈՒԿ ԵՎ ԿՈՇՏ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ


Ղազախստանի ռազմավարական կայունությունն ազգային անվտանգության բաղկացուցիչ մասն է, որը 2018-2019 թթ. ժամանակահատվածում նպաստել է, որ երկիրն արդյունավետորեն զարգանա արտաքին և ներքին ազդեցությունների պայմաններում՝ պահպանելով դրա համակարգային բնութագրերն ու հիմնական որակները, ապահովելով սոցիալական և քաղաքական կայունություն:

Քաղաքական կայունության ապահովման համար անհրաժեշտ պայմաններն են եղել սոցիալական արդյունավետ ինստիտուտները և տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ-երը), ինչպես նաև դինամիկ սոցիալական հավասարակշռության վիճակն ապահովող քաղաքական համակարգը: Սա հատկապես նկատվում է տնտեսության հեռանկարային փոփոխությունների ժամանակաշրջանում:

Ղազախստանի քաղաքական համակարգի կայունությունը կախված է նաև այն բանից, թե արդյոք այն կկարողանա իրեն հարևան երկրներում դադարեցնել ու վերացնել տեղի ունեցող կազմալուծման գործընթացները: Ղազախստանի կողմից եվրասիական նախագծեր իրականացնելու փորձերն ընթացքի մեջ են, իսկ ԱՊՀ-ն ու ՀԱՊԿ-ը չեն արդարացրել նրա սպասելիքները: Այժմ Ղազախստանը պայքարում է ԵԱՏՄ-ի և եվրասիական խոշոր նախագծի համար, որի արդյունքը պետք է լինի Կենտրոնական Ասիայում քաղաքակրթական, մշակութային և արժեքային տարածության ձևավորումը:

Գծապատկեր 1

Ղազախստանի ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսները
(2000-2019 թթ.)*



Ղազախստանի հանրապետության (ՂՀ) Քաղաքական համակարգի կայունության Քաղաքական գործոնների ինդեքսը (Ք_{ԳԻ}) 2018-2019 թթ. նախորդ տարիների համեմատ կտրուկ նվազել է (տե՛ս Գծապատկեր 1, Աղյուսակ 1): Ընդ որում, 2019 թ. Ք_{ԳԻ}-ի ցուցանիշն ամենացածրն է 2000-2019 թթ. ժամանակահատվածում (տե՛ս Գծապատկեր 1, Աղյուսակ 1):

Դիտարկվող ժամանակահատվածում ներքաղաքական պայքարի ու քաղաքացիական անհնազանդությունների տարատեսակ դրսևորումները՝ որոշակի կանոնների խախտմամբ կամ բացակայությամբ, երկրի կառավարող ընտրանին համարել է հասարակական-քաղաքական լուրջ սպառնալիք, որը կարող էր հանգեցնել ինչպես սոցիալական խռովությունների, այնպես էլ քաղաքական համակարգի որակական փոփոխության և որպես հետևանք՝ պետության ամբողջականության փլուզման: Միևնույն ժամանակ, հետխորհրդային տարածքում քաղաքական փոխակերպումների փորձն ապացուցեց, որ ոչ միայն ներքաղաքական պայքարը, այլև սոցիալական դժգոհությունները կարող են հանգեցնել հեղափոխական կերպա-

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Քաղաքական գործոնների ինդեքսը գնահատվում է -1-ից +1 միջակայքում ընկած միավորներով, որտեղ -1-ը կայունության նվազագույն մակարդակն է, իսկ +1-ը՝ առավելագույն:

փոխումների: Թեպետ կառավարող ընտրանին կարևորեց Ղազախստանի քաղաքական արդիականացումը, բայց գործնականում այն սահմանափակվեց արդիականացման անհրաժեշտության մասին կարգախոսներով, ինչը ՔՀԿ-ների, արհմիությունների և ՏԻՄ-երի շրջանում բացահայտ դժգոհություններ առաջացրեց:

Աղյուսակ 1

**Ղազախստանի ՔՀԿ-ի Քաղաքական գործոնների ինդեքսները
(2000-2019 թթ.)***

Տարեթիվ	Ք_{ԳԻ}
2000	0,027
2001	-0,011
2002	-0,051
2003	-0,056
2004	0,015
2005	-0,030
2006	0,028
2007	0,102
2008	0,159
2009	0,141
2010	0,057
2011	0,081
2012	0,060
2013	0,145
2014	0,138
2015	0,148
2016	0,253
2017	0,160
2018	-0,011
2019	-0,076

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Ա_{ԳԻ}-ի և հետևաբար դրանց հիման վրա հաշվարկված ՔՀԿ-ի արժեքները որոշ տարիների կտրվածքով հնարավոր է՝ աննշան տարբերվեն նախորդ հրապարակման համապատասխան տարիների արժեքներից՝ թարմացված տվյալների, նոր տվյալների ներմուծման, նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխման պատճառով:

**5. Փափուկ և կոշտ ինտեգրման ընթացակարգերի համադրությունը
Ղազախստանի կայունության ռազմավարություններում**

Դիտարկվող ժամանակահատվածում Ղազախստանի ՔԳԻ-ի վրա զգալի են եղել «անկայուն կայունության» և «կայուն անկայունության» իրավիճակները, որոնց պատճառով էլ կառավարող ընտրանին նախաձեռնեց կատարել կտրուկ քաղաքական վերադասավորումներ՝ ձևավորելով շուկայական տնտեսություն և սոցիալական նոր հարաբերություններ: Սակայն երկրի նախագահին և կառավարող ընտրանուն մտահոգում էր այն իրողությունը, որ հանրային իշխանության ուղղահայաց և հորիզոնական կապերը չափազանց բյուրոկրատական են, կոռուպցիայի դեմ պայքարը՝ անարդյունավետ: Այս ամենը վտանգավոր էր և հղի ապակառուցողական հետևանքներով: Ավելին, իրավիճակի պարադոքսալությունն այն էր, որ արդիականացումը մարտահրավեր է քաղաքական համակարգի կայունությանը, որովհետև հակասում է երկրի նախագահի և կառավարության հիմնական գերակայություններին (*Satpayev 2020, Dodonov 2020, Khassenov 2020, Baigabylov, Otar and Tokar 2020*): Սա հատկապես ակնհայտ էր 2019 թ. երկրում հայտարարված նախագահական արտահերթ ընտրությունների և ռազմավարության արդիականացմանը միտված ծրագրերի իրականացման պայմաններում: Դրան նպաստեց նաև հետխորհրդային ամենատարեց և փորձառու առաջնորդ, նախագահ Նուրսուլթան Նազարբաևի՝ 2019 թ. մարտի 19-ի անսպասելի հրաժարականը: Նա այդ քայլով փորձեց խթանել երկրի կառավարող ընտրանու էվոլյուցիան, խորացնել կայուն զարգացումն ու եվրասիական ինտեգրացիոն գործընթացները:

ՂՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի²⁶ համաձայն՝ նախագահի լիազորությունները փոխանցվեցին երկրի խորհրդարանի Սենատի խոսնակ Կասիմ-ժոմարտ Տոկակին: Ընդ որում, ՂՀ առաջին նախագահի իշխանափոխության այս մոդելի հիմնական նպատակն էր քաղաքական վերադասավորումները դարձնել հնարավորինս կառավարելի՝ կանխելու էթնոքաղաքական կոնֆլիկտների սրումը և քաղաքացիական անհնազանդությունների ակտիվացումը: Միևնույն ժամանակ, դժվար է «իշխանափոխություն» հասկացությունը կիրառել Ղազախստանում տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ, քանի որ հանրային կառավարման առանցքային

²⁶ Այդ մասին տե՛ս ՂՀ արդարադատության նախարարության «ՂՀ օրենսդրության և իրավական տեղեկատվության» ինստիտուտի պաշտոնական կայքը՝ «Конституция Республики Казахстан» http://adilet.zan.kz/rus/docs/K950001000_#z70 (16.01.2021):

լծակները ցմահ մնում էին Նազարբաևի ձեռքին՝ ապահովելով նրա և նրա ընտանիքի անդամների համար ցմահ անձեռնմխելիության կարգավիճակ²⁷: Ուշագրավ էր, որ Նազարբաևի ինքնակամ պաշտոնանկությունը հետխորհրդային երկրներից տարբերվող պետական կառավարման համակարգի պայմաններում հանգեցրեց երկկենտրոն գերագույն իշխանության՝ երկրի հիերարխիկ կառուցվածքում երաշխավորելով առաջին նախագահի ազդեցիկ դիրքը: Այսպես՝ թեև Սահմանադրական փոփոխություններն ազդեցին Անվտանգության խորհրդի²⁸ (ԱԽ) և նրա նախագահ Նազարբաևի կարգավիճակի և լիազորությունների վրա, սակայն 2018 թ. երկրի Սահմանադրական խորհուրդը (ՍԽ)²⁹ հաստատեց Նազարբաևի՝ ԱԽ-ն ցմահ ղեկավարելու իրավունքը՝ միաժամանակ բարձրացնելով ԱԽ-ի կարգավիճակը և զգալիորեն ընդլայնելով դրա նախագահի լիազորությունները: Փաստորեն, դեռևս 2017 թ. նախագահ Նազարբաևի նախաձեռնած սահմանադրական բարեփոխումները վճռորոշ նշանակություն ունեցան իշխանափոխության համար, քանզի նախագահականից անցումը խորհրդարանական-նախագահական համակարգին պետք է նպաստեր խորհրդարանի դերի էական աճին և նախագահի որոշ լիազորությունների փոխանցում օրենսդիր իշխանությանը, ինչը կսահմանափակեր Նազարբաևին հաջորդողի իրավունքները: Միևնույն ժամանակ, բարեփոխումը կոչված էր հավասարակշռելու քաղաքական տարբեր խմբերի և ԲՀԿ-ների շահերը՝ նրանց պայքարի կենտրոնը տեղափոխելով խորհրդարան: Դա կօգնի հասնել կառավարող ընտրանու և ընդդիմադիր ուժերի միջև փոխզիջման և որպես արդյունք՝ պահպանել կայունությունը: Տեղին է նշել, որ պետական իշխանության ճյուղերի միջև «զսպման և հակակշիռների» նման վերաբաշխումն օրենսդիր մարմնի առջև հաշվետու դարձրեց երկրի կառավա-

²⁷ Այդ մասին տե՛ս ՂՀ նախագահի պաշտոնական կայքը՝ «Конституционный закон РК от 20 июля 2000 года N 83-III «О Первом Президенте РК - Лидере Нации»». https://www.akorda.kz/ru/official_documents/constitutional_laws/o-pervom-prezidente-respubliki-kazakhstan-lidere-nacii (17.01.2021):

²⁸ Ավելի մանրամասն տե՛ս ՂՀ արդարադատության նախարարության «ՂՀ օրենսդրության և իրավական տեղեկատվության» ինստիտուտի պաշտոնական կայքը՝ «Закон РК от 5 июля 2018 года № 178-VI ЗРК «О Совете Безопасности Республики Казахстан»». <http://adilet.zan.kz/rus/docs/Z1800000178> (17.01.2021):

²⁹ Այդ մասին տե՛ս ՂՀ Սահմանադրական խորհրդի պաշտոնական կայքը՝ <http://ksrk.gov.kz/index.php/ru> (17.01.2021):

**5. Փափուկ և կոշտ ինտեգրման ընթացակարգերի համադրությունը
Ղազախստանի կայունության ռազմավարություններում**

րությանը, քանի որ այն ձևավորվելու էր խորհրդարանի մասնակցությամբ (ՂՀ Սահմանադրություն, Բաժին III, IV, V)³⁰:

Ակնհայտ էր, որ «ՂՀ անվտանգության խորհրդի մասին» օրենքը³¹ հիմնովին փոխեց ԱԽ-ի դերը՝ այն խորհրդակցական և խորհրդատվական հաստատությունից վերածելով պետական մարմնի, որն իրավունք ունի համակարգելու ազգային միասնական քաղաքականության իրականացումը, ապահովելու ազգային անվտանգության և պաշտպանության կարողությունները: ԱԽ նախագահ Նազարբաևը, ի թիվս այլոց, իրավունք ստացավ որոշելու ԱԽ-ի կառուցվածքը, հրապարակելու ազգային անվտանգության ոլորտին վերաբերող ակտեր: Այս օրենքն ամրագրեց, որ ԱԽ-ի և դրա նախագահի որոշումները պարտադիր են երկրի պետական մարմինների, կազմակերպությունների և պաշտոնատար անձանց համար (*հոդված 6-րդ, կետ 6-րդ*):

Ինչ վերաբերում է 2019 թ. հունիսի 9-ին կայացած նախագահական արտահերթ ընտրություններին, ապա դրանցում Կասիմ-ժոմարտ Տոկաևի հաղթանակից հետո Ղազախստանը Կենտրոնական Ասիայում դարձավ երրորդ պետությունը, որտեղ վերջին տարիներին տեղի է ունեցել քաղաքական ղեկավարության փոփոխություն: Նախագահի թեկնածու Տոկաևին աջակցեցին Ղազախստանի ժողովրդի վեհաժողովը (ՂԺՎ) և «Նուր Օտան» կուսակցությունը: Նա ստացավ ընտրությանը մասնակից քաղաքացիների ձայների 70,96%-ը (տե՛ս Աղյուսակ 2):

ՂՀ նախագահի ևս վեց թեկնածու գրանցվել էր տարբեր կուսակցություններից և հասարակական միավորումներից³²: Նախագահական ընտրություններին առաջին անգամ մասնակցեց մեկ կին թեկնածու՝ Մաժիլիսի պատգամավոր և «Ակ ժոլ» ժողովրդավարական կուսակցությունից

³⁰ Այդ մասին տե՛ս ՂՀ արդարադատության նախարարության «ՂՀ օրենսդրության և իրավական տեղեկատվության» ինստիտուտի պաշտոնական կայքը՝ «Конституция Республики Казахстан». http://adilet.zan.kz/rus/docs/K950001000_#z70 (16.01.2021):

³¹ Այդ մասին տե՛ս «Закон РК от 5 июля 2018 года №178-VI ЗРК «О Совете Безопасности Республики Казахстан»». <http://adilet.zan.kz/rus/docs/Z1800000178> (17.01.2021):

³² Ավելի մանրամասն տե՛ս ՂՀ ԿԸՀ-ի պաշտոնական կայքը՝ «Внеочередные Выборы Президента Республики Казахстан 2019 года». <https://www.election.gov.kz/rus/vibori-2019/> (11.01.2021):

առաջադրված Դանիա Եսպանան: Կոմունիստական ժողովրդական կուսակցությունն առաջադրեց Ժ.Ախմեդբեկովին, իսկ «Աուիլ» ժողովրդական-հայրենասիրական կուսակցությունը՝ Տ. Ռախիմբեկովին: Եվս երեք թեկնածու առաջադրվեց արհմիությունների դաշնության և ՀԿ-ների կողմից:

Աղյուսակ 2

2019թ. հունիսի 9-ի նախագահական արտահերթ ընտրությունների արդյունքները (OSCE/ODIHR 2019)

<i>Թեկնածու</i>	<i>Ձայներ</i>	<i>Տոկոս</i>
Կասիմ-ժոմարտ Տոկաև	6,539,715	70,96
Ամիրժան Կոսանով	1,495,401	16,23
Դանիա Եսպանա	465,714	5,05
Տոլեուտայի Ռախիմբեկով	280,451	3,04
Ամանգելդի Տասպիխով	182,898	1,98
Ժամբիլ Ախմեդբեկով	167,649	1,82
Սադիրբեկ Տուգել	84,582	0,92

Տեղին է նշել, որ 2018 թ. նախընտրական գործընթացները բացասաբար ազդեցին երկրի օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈւՆ) մակարդակի վրա, որի անկումը կանխվեց 2019 թ.՝ հետընտրական կայունության շնորհիվ: Մասնավորապես, 2018 թ. ԵՄ անդամ երկրների գրեթե կեսը կրճատեց ներդրումները Ղազախստանի տնտեսության մեջ (*МИА «Казинформ» 2020*):

2018-2019 թթ. Ղազախստանի Ք_{ԳԻ}-ի վրա զգալի են եղել կառավարչական որոշումների ընդունման և իրականացման ընթացակարգերի փոխակերպումները՝ պահպանելով Նազարբաևի՝ երկրի նախագահի պաշտոնից հեռանալուց հետո առանցքային դերն անվտանգային քաղաքականության ոլորտում: Փաստորեն, ԱԽ-ն Նազարբաևի ղեկավարությամբ դարձավ հասարակության կայունության պահպանման երաշխավորը:

Նախագահի պաշտոնից Նազարբաևի հեռանալու վերջին փուլը 2019 թ. փետրվարի 4-ի նրա դիմումն էր, որն ուղղված էր ՂՀ ՄԽ-ին: Դա վերաբերում էր ՂՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ կետի պաշտոնական մեկնաբանությանը (*Радио Азаттык 2019a*): Այս կերպ նա ստացավ հրաժարականի իր որոշման սահմանադրականության հաստատումը:

**5. Փափուկ և կոշտ ինտեգրման ընթացակարգերի համադրությունը
Ղազախստանի կայունության ռազմավարություններում**

ՂՀ ՍԽ-ի պատասխանը, ըստ էության, հերթական անգամ ամրապնդեց Նազարբաևի առանձնահատուկ կարգավիճակը, թեև դա վերաբերում էր պետության ղեկավարի պաշտոնանկության իրավունքին, կառավարման նախագահական ձևի և նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակի հարաբերության հարցերի պարզաբանմանը (*Forbes 2019*):

Երկրի քաղաքական համակարգի բնականոն գործառույթն ապահովելու նպատակով՝ նախագահ Տոկայևի նախաձեռնությամբ «Նուր Օտան» կուսակցության համագումարում, ի թիվս այլ հարցերի, քննարկվեցին սոցիալական բարեկեցության բարելավման հետ կապված հարցեր: Մասնավորապես՝ նա նախաձեռնեց մի շարք քայլեր, որոնց նպատակն էր երկրում պահպանել սոցիալական կայունությունն ու բարելավել բնակչության սոցիալապես խոցելի խմբերի իրավունքները (*Маллисон 2019, Гунд-Дэвис 2019, Липпс 2019*): Այդ նպատակով զգալի միջոցներ հատկացվեցին պետական բյուջեից և Ազգային հիմնադրամից: Այնուամենայնիվ կարելի է ենթադրել, որ միջազգային լարվածության աճի և երկրի ներսում դրա հնարավոր հետևանքների պայմաններում Նազարբաևի նպատակն էր քաղաքական պատասխանատվությունը կիսել իրեն «հավատարիմ անձի» հետ՝ «միևնույն պաշտոնները» զբաղեցնելով: Ամեն դեպքում, իշխանության փոխանցման դազախական բանաձևն առաջին հերթին ուղղված է ՂՀ առաջին նախագահի քաղաքականության շարունակականության պահպանմանը ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային ասպարեզում: Լինելով Ազգի՝ լայն լիազորություններով առաջնորդ՝ ակներև էր, որ Նազարբաևն ակնկալում է վերահսկել իրավիճակային զարգացումները հնարավորինս երկար:

Ինչ վերաբերում է քաղաքացիական անհնազանդություններին, ապա դիտարկվող ժամանակահատվածում դրանք հիմնականում պայմանավորված էին իշխանափոխության գործընթացով՝ 2019 թ. հունիսի 9-ի նախագահական արտահերթ ընտրություններով: Չնայած այն փաստին, որ երկրում իրական ընդդիմությունը թույլ էր, և նրա շարքերը՝ մասնատված, արդեն մայիսի 1-ին ընդդիմադիր մի շարք ուժերի հաջողվեց հավաքներ անցկացնել հանրապետության խոշորագույն քաղաքներում: Դրանց հիմնական նախաձեռնողը ՂՀ-ում ծայրահեղական ճանաչված և դատարանի կողմից արգելված «Ղազախստանի ժողովրդավարական ընտրություն»

(ՂԺԸ) հասարակական-քաղաքական շարժումն էր: Սոցիալական ցանցերում տեղադրվեցին հունիսի 9-ի նախագահական արտահերթ ընտրությունները բոյկոտելու և փողոց դուրս գալու կոչեր: Նախօրեին, չնայած ՂՀ գլխավոր դատախազության զգուշացումներին՝ չտրվել սադրանքներին և չմասնակցել անօրինական հավաքներին, այնուամենայնիվ չարտոնված հավաքներ տեղի ունեցան հանրապետության մայրաքաղաքում և խոշոր քաղաքներում (*Настоящее Время 2019, Радио Азаттык 2019b, CABAR 2019, Vlast.kz 2019, BBC 2019, Human Rights Watch 2020*): Հաշվի առնելով Կենտրոնական Ասիայի երկրներում արտաքին ուժերի միջամտության և ծայրահեղական ահաբեկչական խմբավորումների ակտիվացման փորձերը՝ Ղազախստանում իրավապահ մարմինները խստորեն կանխեցին իրավիճակի ապակայունացման բոլոր փորձերը, ինչի պատճառով տուժեցին նաև ՔՀԿ-ների խաղաղ հավաքներն ու քաղաքացիավարական նախաձեռնությունները, որոնց նպատակն ընտրական իրավունքների հանրային իրազեկմանն ու իրավական գիտակցության բարձրացման գործողություններն էին: Իսկ մյուս կողմից՝ էլեկտորալ ընթացակարգերով չամրապնդված քաղաքացիական անհնազանդությունների և շարժումների աճը նախագահական իշխանության պայմաններում կարող էր տարբեր դերակատարների միջամտության պարարտ հող ստեղծել: Մանավանդ որ, օրինակ, ԱՄՆ-ի և ԵՄ անդամ երկրների համար ՂՀ-ն աշխարհաքաղաքական հետաքրքրություն է ներկայացնում՝ հաշվի առնելով Ղազախստանի տարածքային, տնտեսական և քաղաքական հարևանությունը Ռուսաստանի և Չինաստանի հետ: Բացի այդ, ՂՀ-ում ամերիկյան ազդեցության ուժեղացումը կարող է խանգարել Չինաստանի դիրքի ամրապնդմանն իր «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» (ՄԳՄՃ) նախագծով, ինչպես նաև ԵԱՏՄ-ի շրջանակներում ՌԴ հետ տնտեսական գոտի ստեղծելու պայմանավորվածություններին: Այս առումով նկատելի է ՂՀ շուրջ արտաքին քաղաքական միջավայրի վատթարացումը: Իրոք, Ղազախստանը՝ որպես Ռուսաստանի ռազմաքաղաքական և տնտեսական ամենամոտ դաշնակից, կարող է հայտնվել ծանր վիճակում ՌԴ-ԱՄՆ և ՌԴ-ԵՄ հարաբերությունների հետագա սրման, ինչպես նաև ռուս-ուկրաինական ճգնաժամի խորացման դեպքում: Այդ իսկ պատճառով երկրի Առաջին նախագահը հնարավորինս արագ համախմբեց

**5. Փափուկ և կոշտ ինտեգրման ընթացակարգերի համադրությունը
Ղազախստանի կայունության ռազմավարություններում**

կառավարող ընտրանուն՝ ամրապնդելով պետական իշխանությունը՝ հավասարակշռված որոշումներ ընդունելու նպատակով:

Ինչ վերաբերում էր հակակոռուպցիոն քաղաքականությանը, ապա դրա ցուցանիշների բարելավումն առանցքային նշանակություն է ունեցել քաղաքական գործոնների ցուցանիշների վրա³³: Այս առումով նախագահ Տոկանը կարևորեց պետական համակարգի արդիականացման և կառուցողական երկխոսության շարունակականությունը: Միևնույն ժամանակ, նա հռչակեց պետական իշխանության բանաձև. «Ուժեղ նախագահ-ազդեցիկ խորհրդարան-հաշվետու կառավարություն»³⁴: Դրա նպատակն էր բարելավել բազմակուսակցական համակարգը և կոռուպցիայի դեմ պայքարը, ինչպես նաև բարձրացնել իշխանությունների պատասխանատվությունը ժողովրդի առջև՝ հաշվի առնելով հասարակական կարծիքը ռազմավարական խնդիրների վերաբերյալ: Դրանք երկրի կառավարող ընտրանուն հնարավորություն կտան հետագայում ապահովել ինտեգրված արդիականացման ընթացակարգերի գերակայություն, որը ենթադրում է արդիականացման համատեղ ծրագրերի իրականացում ինչպես արդյունաբերական, այնպես էլ նորարարական ձեռնարկությունների ներդաշնակ զարգացման ուղղություններում: Առաջնային է համարվել շեշտը դնել Ղազախստանի կայուն և անվտանգ զարգացման գործընթացի վրա՝ հավասարապես ուշադրություն դարձնելով վերաարդյունաբերականացման և գիտելիքի տնտեսության մարտահրավերներին:

Ակնհայտ է, որ նորարարական տնտեսությունն ու գիտելիքի հասարակություն կայացնելու նախադրյալները պահանջում են քաղաքական դերակատարների համախմբում և կառավարչական արդիականացումն ապահովող քայլեր, քանզի ինտեգրված արդիականացումը երկրի կառավարող ընտրանուց պահանջում է որակական համապատասխան կերպափոխումներ քաղաքական համակարգում, որոնք կբավարարեն ոչ միայն եվրա-

³³ Ավելի մանրամասն տե՛ս «Թրանսփերենսի ինթերնեշնլ»-ի պաշտոնական կայքը՝ <https://www.transparency.org/en/cpi/2018/index/dnk#> (12.01.2021), <https://www.transparency.org/en/cpi/2019/index/nzl> (12.01.2021):

³⁴ Այդ մասին տե՛ս ՂՀ նախագահի պաշտոնական կայքը՝ «Конструктивный общественный диалог - основа стабильности и процветания Казахстана». https://www.akorda.kz/ru/addresses/addresses_of_president/poslanie-glavy-gosudarstvakasym-zhomarta-tokaeva-narodu-kazahstana (12.01.2021):

սիական, այլև համաշխարհային առաջընթացի պահանջները: Ըստ այդմ քաղաքական դերակատարները պետք է պատրաստ լինեն արդիականացման գործընթացների կողմնակի ազդեցություններին, որոնք հակասություններ կառաջացնեն կայունության ամրապնդման և համակարգի արդիականացման միջև: Բացի այդ, Ղազախստանում տարածաշրջանների զարգացման մակարդակների անհամաչափության խնդիրը ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև ազգային անվտանգության և տարածքային ամբողջականության սպառնալիք է, քանի որ տնտեսական ճգնաժամերի ժամանակ կարող են սրվել անջատողականության միտումները: Իսկ պետության «անկայուն կայունության» կամ քաղաքական հավասարակշռության խաթարման երկարաժամկետ իրավիճակի դեպքում բազմապատկվում են քաղաքական համակարգի «եռման կետերը»: Այս առումով Ղազախստանի կայուն և անվտանգ (հավասարակշռված) զարգացման ժամանակակից փուլում երկրի յուրաքանչյուր տարածաշրջանում կարևորվում են քաղաքական կայունության և սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրները: Դրանք պետք է լուծվեն հիմնականում տարածքային զարգացման համաչափության պայմաններում:

Գրականության ցանկ

- **Baigabylov, Nurlan and Elmira Otar, Petro Tokar** (2020) “The New Middle Class as a Factor in the Modernization of the Economy and the Consolidation of Kazakhstan Society.” In “The Transformation of Kazakhstan’s Economy.” Nur-Sultan: Konrad-Adenauer-Stiftung e. V., “IndigoPrint” LLP: 263-302.
- **BBC** (2019) “В Казахстане задерживают активистов и блокируют интернет. Что происходит?” Accessed January 20, 2021. <https://www.bbc.com/russian/news-48230508>.
- **CABAR** (2020) “Protest Activity in Kazakhstan.” Accessed January 20, 2021. <https://cabar.asia/en/protest-activity-in-kazakhstan>.
- **Dodonov, Vyacheslav** (2020) “Foreign Investments in Kazakhstan: a Pragmatic Assessment of the Scope and Impact on Economic Development.” In “The Transformation of Kazakhstan’s Economy.” Nur-Sultan: Konrad-Adenauer-Stiftung e. V., “IndigoPrint” LLP: 215-230.
- **Forbes** (2019) “Конституционный совет растолковал пункт Конституции о прекращении полномочий президента”. Дата доступа: 20.01.2021. <https://for->

5. Փափուկ և կոշտ ինտեգրման ընթացակարգերի համադրությունը Ղազախստանի կայունության ռազմավարություններում

bes.kz/process/konstitutsionnyiy_sovet_oglasil_svoe_reshenie_o_dosrochnom_prek_raschenii_polnomochiy_prezidenta/.

- **Human Rights Watch** (2020) “Kazakhstan: Events of 2019.” Accessed January 20, 2021. <https://www.hrw.org/world-report/2020/country-chapters/kazakhstan#>.
- **Khassenov, Muslim** (2020) “Legal Regulation of the Labor Market of Kazakhstan: Problems and Solutions.” In “The Transformation of Kazakhstan’s Economy.” Nur-Sultan: Konrad-Adenauer-Stiftung e. V., “IndigoPrint” LLP: 231-262.
- **OSCE/ODIHR** (2019) ODIHR Election Observation Mission Final Report: Republic of Kazakhstan. Early Presidential Election 9 June 2019. Warsaw.
- **Satpayev, Dossym** (2020) “Political Risk Management in Kazakhstan.” In “The Transformation of Kazakhstan’s Economy.” Nur-Sultan: Konrad-Adenauer-Stiftung e. V., “IndigoPrint” LLP: 107-128.
- **Vlast.kz** (2019) “Протесты весны-лета в Казахстане: что это было и к чему приведет? Обзор реанимации политической жизни в странае”. Дата доступа: 20.01.2021. <https://vlast.kz/politika/34386-protesty-vesny-leta-v-kazhstane-cto-et-o-bylo-i-k-cemu-privedet.html>.
- **Гулд-Дэвис, Найджел** (2019) “Политическая экономия”. В кн.: “Казахстан: испытание «транзитом власти» (Программа России и Евразии, Ноябрь)”. Лондон: «Chatham House» Королевский Институт Международных Отношений: 29-46.
- **Лиллис, Джоанна** (2019) “Политические и гражданские свободы и права человека”. В кн.: “Казахстан: испытание «транзитом власти» (Программа России и Евразии, Ноябрь)”. Лондон: «Chatham House» Королевский Институт Международных Отношений: 47-75.
- **Маллинсон, Кейт** (2019) “Государственное управление”. В кн.: “Казахстан: испытание «транзитом власти» (Программа России и Евразии, Ноябрь)”. Лондон: «Chatham House» Королевский Институт Международных Отношений: 13-28.
- **МИА «Казинформ»** (2020) “Иностранные инвестиции останутся одними из драйверов экономического развития РК - директор КИСИ”. Дата доступа: 20.01.2021. https://www.inform.kz/ru/inostrannye-investicii-ostanutsya-odnimi-iz-drayverov-ekonomicheskogo-razvitiya-rk-direktor-kisi_a3721405.
- **Настоящее Время** (2019) ““Власть панически напугана”. Лидер запрещенного в Казахстане движения Мухтар Аблязов о выборных протестах”. Дата доступа: 20.01.2021. <https://www.currenttime.tv/a/ablyazov-kazakhstan-protests/-29991984.html>.
- **Радио Азаттык** (2019а) “«Люди устали». Протесты в 2019 году: причины и последствия”. Дата доступа: 20.01.2021. <https://rus.azattyq.org/a/kazakhstan-2019-year-protests-sauses-and-consequences/30351048.html>.
- **Радио Азаттык** (2019а) “Назарбаев просит растолковать норму о прекращении полномочий президента”. Дата доступа: 20.01.2021. <https://rus.azattyq.org/a/29750630.html>.

6. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՂՐՂՋՍՏԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ երկրների կերպափոխվող վարչակարգերի արդի պայմաններում Ղրղզստանի քաղաքական համակարգի կայունության և ազգային անվտանգության հիմնախնդիրը ստացել է ոչ միայն տարածաշրջանային, այլև գլոբալ բնույթ³⁵ (МВД Кыргызской Республики 2018, Интернет-портал СНГ 2019): Դա պայմանավորված է հասարակության փոխակերպումների ընթացքում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) շերտավորված արժեքային կողմնորոշումների, պետության իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) գործառույթների, ինչպես նաև Ղրղզստանի ներքին և արտաքին սպառնալիքների նկատմամբ կառավարող ընտրանու և խորհրդարանական կուսակցությունների վերաբերմունքով: Երկրի քաղաքացիների մեծ մասը հայտնվել է գաղափարախոսական, քաղաքական ու տնտեսական վակուումի, ինչպես նաև ազգային գերակայությունների և պետական շահերի բախումների կիզակետում:

Ընդհանուր առմամբ Ղրղզստանի համակարգային կերպափոխումների անկայունության ներքին և արտաքին քաղաքականության գործոններն ունեցել են անվտանգային բնույթ (ՊԱ ՕԴԿԵ 2021): Ազգային անվտանգության հարցերը, որպես կանոն, ուղղակիորեն ազդել են իշխանությունների

³⁵ «Циндаоская декларация совета глав государств-членов Шанхайской организации сотрудничества». *Евразийская интеграция: экономика, право, политика. 2019. (28): 107-115.*


6. Քաղաքական անկայունության գործոնները Ղրղզստանի համակարգային կերպափոխումների պայմաններում

տարանջատման սկզբունքի և հակակշռման կարգորոշման, վարչակարգային հիերարխիայի, ինչպես նաև պետական գերատեսչությունների արդյունավետության և հանրային ծառայությունների գործունեության վրա:

Ղրղզստանն առաջինն էր Կենտրոնական Ասիայի պետությունների շարքում, որը գնաց քաղաքական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների արմատական ժողովրդավարական վերափոխումների ճանապարհով: Ուստի երկրի քաղաքական վարչակարգի կերպափոխման ժամանակաշրջանի սկիզբը համընկավ ազգային պետականության վերածննդի և արդիականացման գործընթացների հետ: Սակայն մինչ օրս զգալի է երկրի քաղաքական մշակույթի վրա խորհրդային ժառանգության և ավտորիտար կառավարման ավանդույթների ազդեցությունը: Երկրի քաղաքական արդիականացման ամենամեծ խոչընդոտներից մեկը համակեցությունն ու ակտիվ մրցակցությունն է ֆորմալ և ոչ ֆորմալ քաղաքական դերակատարների միջև՝ հետխորհրդային Ղրղզստանում քաղաքական տարածության ընդհանուր դեֆորմացիաների պատճառով (*Карасартов 2018, Саякбаева, Джоробекова 2021, Нурматов 2019*):

2018-2019 թթ. վարչակարգային կերպափոխումներում առաջացել են բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումներից կախված են քաղաքական համակարգի կայունությունն ու պետական ինստիտուտների կենսունակությունը: Չնայած այս ժամանակահատվածում կուսակցական համակարգը ձեռք բերեց բազմակուսակցական ձևաչափի ավելի հստակ ուրվագծեր, այնուամենայնիվ դրա վրա ուժեղ ազդեցություն ունեցան հասարակության գիտակցության և քաղաքական մշակույթի անբավարար մակարդակը, բնակչության սոցիալական և քաղաքական ցածր ակտիվությունը: Մասնավորապես՝ գյուղական բնակչությունը, որը երկրում մեծամասնություն է, չունի կուսակցաշինության փորձ: Ընդ որում՝ կուսակցությունների քանակի շարունակական աճը վնասում է դրանց որակին և չի նպաստում առանցքային որոշումների կայացմանը: Չնայած անկախություն ձեռք բերելուց հետո ՔՀԿ-ների արձանագրած առաջընթացին, այնուամենայնիվ դրանք դեռևս ազդեցիկ չեն երկրի հասարակական-քաղաքական կյանքում:

Գծապատկեր 1
Ղրղզստանի ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսը (2000-2019 թթ.)*



Ղրղզստանի քաղաքական կայունության համակողմանի ուսումնասիրությունները բացահայտում են իշխանության լեգիտիմության, կառավարման ձևի, ՔՀԿ-ների, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, պետության սոցիալ-տնտեսական հնարավորությունները:

Ղրղզստանի պետական-քաղաքական վարչակարգի էվոլյուցիան ցույց է տալիս, որ պետականության ձևավորման գործընթացը դեռևս ավարտված չէ: Ներկայումս, ավելի քան երբևէ, կարևոր են կառավարող ընտրանու ջանքերը քաղաքացիավարական կայունության և բնականոն գործող պետական-քաղաքական վարչակարգի ամրապնդման համար:

Դիտարկվող ժամանակահատվածում Ղրղզստանի ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսի (Ք_{ԳԻ}) միավորները բացասական են (տե՛ս Աղյուսակ 1), բայց բարելավման որոշակի միտումներով: Այս առումով ՔՀԿԻ-ի ցուցանիշները հնարավորություն են տալիս ամփոփելու 2018-2019 թթ. վարչակարգային բարեփոխումների արդյունքները, այդ նպատակին հասնելու համար օգտագործված ռեսուրսները՝ կանխատեսելով այն միտումները,

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Քաղաքական գործոնների ինդեքսը գնահատվում է -1-ից +1 միջակայքում ընկած միավորներով, որտեղ -1-ը կայունության նվազագույն մակարդակն է, իսկ +1-ը՝ առավելագույն:

6. Քաղաքական անկայունության գործոնները Ղրղզստանի համակարգային կերպափոխումների պայմաններում

որոնցով պայմանավորված կլինեն սոցիալ-քաղաքական հետագա զարգացումները (*Рысалиева 2020, Майтдинова 2019, Голодова, Ранчинская, Горохова 2019*):

Աղյուսակ 1

Ղրղզստանի ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսները (2000-2019 թթ.)*

Տարեթիվ	Ք _{ԳԻ}
2000	-0,183
2001	-0,186
2002	-0,276
2003	-0,018
2004	0,102
2005	-0,341
2006	0,077
2007	0,081
2008	0,054
2009	-0,042
2010	-0,332
2011	0,102
2012	0,009
2013	0,098
2014	0,082
2015	0,179
2016	0,128
2017	-0,133
2018	-0,111
2019	-0,086

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Ք_{ԳԻ}-ի, Տ_{ԳԻ}-ի, Ա_{ԳԻ}-ի և հետևաբար դրանց հիման վրա հաշվարկված ՔՀԿԻ-ի արժեքները որոշ տարիների կտրվածքով հնարավոր է աննշան տարբերվեն նախորդ հրապարակման համապատասխան տարիների արժեքներից՝ թարմացված տվյալների, նոր տվյալների ներմուծման, նվազագույն և առավելագույն արժեքների փոփոխման պատճառով:

2018-2019 թթ. երկրի քաղաքական կայունության հիմնական նպատակը մակրոտնտեսական կայունության պահպանումն էր, ազգային տնտեսության մրցունակության բարձրացումը և գների կայունության ապահովումը: Դիտարկվող ժամանակահատվածում երկրի կայուն զարգացմանն ուղղված գործողությունները հիմնվել են 2018-2022 թթ. «Միասնություն, Վստահություն, Ստեղծում»³⁶ զարգացման ծրագրի և 2018-2022 թթ. տարածքային քաղաքականության հայեցակարգի վրա³⁷:

Ղրղզստանի քաղաքական համակարգի կայունության գնահատումը հիմնված է եղել երկրի զարգացման հիմնարար, հոռետեսական և լավատեսական սցենարների վրա: Դրանք ենթադրում էին երկրի քաղաքական համակարգի կայունության գործոնների ներդաշնակեցումը տնտեսական ինտեգրման գործընթացներին: Արդյունավետ քաղաքական միջոցառումների մշակման և իրականացման դեպքում է հնարավոր, որ Ղրղզստանի տնտեսությունը հարմարվի համաշխարհային շուկաների դինամիկ իրավիճակին և հաջողությամբ հաղթահարի աշխարհատնտեսական ցնցումների բացասական հետևանքները (*Курмаева 2018, Чибухчян 2019, Холодков и др. 2019, Качкын 2018, Малышева 2018*): Ակնհայտ է, որ Ղրղզստանի կառավարության ձեռնարկած միջոցառումները մասամբ իրականացվեցին, որի պատճառն օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈւՆ) և դրանց միջոցով ներդրումային նախագծերի անբավարար ֆինանսավորումն էր, որն էլ ավելացրեց տնտեսական ռիսկերի ազդեցությունը քաղաքական կայունության մակարդակի վրա: Արտաքին տնտեսական անբարենպաստ միջավայրը և նախատեսված միջոցառումների ոչ լիարժեք իրականացումը բացասաբար ազդեցին Ղրղզստանի տնտեսական ինտեգրման, ինչպես նաև երկրի կայուն զարգացման ծրագրում ամրագրված ազգային նախագծերի իրականացման վրա: Գծապատկեր 2-ում ներկայացված են Ղրղզստանի ՕՈւՆ-ները 2000-2019 թվականների կտրվածքով: Ըստ այդ տվյալների՝

³⁶ Программа развития Кыргызской Республики на период 2018-2022 гг. «Единство, Доверие, Созидание». Бишкек, 2018 год. http://www.donors.kg/images/Программа_развития_КР_Единство_доверие_и_созидание_2018-2022.pdf (01.02.2021).


³⁷ Концепция региональной политики Кыргызской Республики на период 2018-2022 годов (Утверждена постановлением Правительства Кыргызской Республики от 31 марта 2017 года N 194). <http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/99907> (01.02.2021).

6. Քաղաքական անկայունության գործոնները Ղրղզստանի համակարգային կերպափոխումների պայմաններում

մինչև 2015 թվականը ներդրումների ծավալներն աճել են, սակայն պարբերաբար նկատվող տատանումներով: ՕՈւՆ-ների ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 2015 թ., և պատահական չէ, որ կայունության Քաղաքական գործոնների ինդեքսի բարձրագույն մակարդակը ևս գրանցվել է այդ տարում, քանի որ ներդրումները քաղաքական կայունության առավել զգայուն ցուցիչներից են: Իսկ ներդրումների պատմական նվազագույն մակարդակը եղել է 2017 թ., բայց հաջորդ երկու տարիների ընթացքում այն որոշ չափով վերականգնվել է:

Գծապատկեր 2

Օտարերկրյա ուղղակի ներդրումները Ղրղզստանում 2000-2019 թթ.-ին (մլն ԱՄՆ դոլար)³⁸



Ղրղզստանում քաղաքական կայունության վրա բացասական ազդեցություն ունեցող գործոններից է նաև կոռուպցիան: Ըստ «Թրանսփարենսի ինթերնեշնլ» կազմակերպության՝ Ղրղզստանի Կոռուպցիայի ընկալման ին-

³⁸ Տվյալների աղբյուրը՝ Համաշխարհային բանկի պաշտոնական կայք՝ <https://data.worldbank.org/indicator/BX.KLT.DINV.CD.WD> (01.02.2021):

դեքսը (ԿԸԻ)* 2018 թ. մնացել է անփոփոխ, իսկ 2019 թ.-ին գրանցվել է 1 միավոր ամ՝ 29-ից հասնելով 30-ի: 2019 թ. տվյալների համաձայն՝ Ղրղզստանը 180 պետությունների և տարածքների շարքում զբաղեցրել է 126-րդ տեղը³⁹: Եվ չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին ԿԸԻ-ի ցուցանիշը պարբերաբար բարելավվել է, մասնագետները Ղրղզստանը դիտարկում են որպես կոռուպցիոն առավել բարդ իրավիճակ ունեցող ասիական երկիրներից մեկը: 2019 թ. աղմկահարույց դեպքերից էին նաև նախագահ Ա. Ատամբակի ձերբակալությունը՝ կոռուպցիայի և իշխանության չարաշահման մեղադրանքով, ինչպես նաև մաքսային ծառայության նախկին աշխատակից Ռ. Մատրահմովի և իր ընտանիքի հետ կապված կոռուպցիոն բացահայտումները (*Freedom House 2020*):

2018 և 2019 թթ. բարելավվել է Ղրղզստանի Քաղաքացիական ազատությունների ինդեքսը՝ 5 միավորից հասնելով 4-ի, իսկ Քաղաքական իրավունքների ինդեքսի գնահատականը (4 միավոր) մնացել է անփոփոխ*։ Ընդ որում, Քաղաքացիական ազատությունների ինդեքսի բարելավում չէր գրանցվել 2009 թվականից ի վեր⁴⁰: Ցուցանիշի դրական փոփոխությունը «Ազատության տան» փորձագետների գնահատմամբ տեղի է ունեցել շնորհիվ այն բանի, որ քաղաքական ցույցերը հիմնականում ընթացել են առանց լուրջ խոչընդոտների: Մասնագետներն արձանագրել են նաև դրական փոփոխություններ. ակտիվացել են հասարակական կազմակերպությունները, մասնավորապես նրանք, որոնք աշխատանքներ են իրականացնում կառավարության գործունեության և մարդու իրավունքների ոլորտներում (*Freedom House 2019, 2020*):

* Կոռուպցիայի ընկալման ինդեքսը գնահատվում է «Թրանսփարենսի ինթերնեշնլ» (Transparency International) կազմակերպության սահմանված 0-100 սանդղակի միջակայքում (մինչև 2012 թ.՝ 0-10), որտեղ 0-ն նշանակում է ամբողջապես կոռումպացվածություն, իսկ 100-ը՝ կոռուպցիայի բացակայություն:

³⁹ Տե՛ս «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի պաշտոնական կայքը՝ <https://www.transparency.org/en/countries/kyrgyzstan> (28.02.2021):

* Քաղաքական իրավունքների և Քաղաքացիական ազատությունների ցուցանիշները գնահատվում են «Ազատության տան» սահմանած 1-ից մինչև 7 միավորային սանդղակով, որտեղ 1-ից 2,5 գնահատական ստացած երկրները բնորոշվում են որպես «ազատ», 3-ից 5-ը՝ «մասնակի ազատ», իսկ 5,5-ից 7-ը՝ «անազատ»:

⁴⁰ Տե՛ս «Ազատության տան» պաշտոնական կայքը՝ <https://freedomhouse.org/report-types/freedom-world> (28.02.2021):

6. Քաղաքական անկայունության գործոնները Ղրղզստանի համակարգային կերպափոխումների պայմաններում

Այսպես՝ Քաղաքական գործոնների ինդեքսի 2000-2019 թթ. միտումները դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ վերջին տարիներին առավել նկատելի անկումը տեղի է ունեցել 2017 թվականին՝ պայմանավորված Ղրղզստանի և Ղազախստանի սահմանին լարվածության աճով և ներդրումների ծավալի աննախադեպ նվազմամբ: Քաղաքական գործոնների 2018 և 2019 թթ. ինդեքսը աննշան աճել է՝ շարունակելով մնալ բացասականի տիրույթում: Երկրի քաղաքական կայունության վրա շարունակաբար բացասական ազդեցություն են ունենում էթնիկ հակամարտությունները, կոռուպցիան, աղքատությունը, տնտեսության թույլ զարգացվածությունը, անկախ դատական համակարգի բացակայությունը, մարդու իրավունքների և այլ ոլորտներում առկա խնդիրները (*Ионова 2019, Савинов, Скорых 2019*):

Դիտարկվող ժամանակահատվածում նկատելի էր «եռակի կերպափոխման» անհամատեղելիությունը՝ բաղկացած քաղաքական ժողովրդավարացումից, շուկայական տնտեսության կառուցումից, ինչպես նաև պետականաշինությունից: Վերջին տարիներին գերակայում են կերպափոխումների բացասական երևույթները, ինչպիսիք էին՝ սոցիալ-տնտեսական ճգնաժամը, ժողովրդավարական իրավունքների և ազատությունների սահմանափակումները, ավտորիտարիզմի խորացումը (*Воробьев 2019a, Воробьев 2019b, Исмаилов 2019, Пазилов, Жоробеков 2019*):

Ղրղզստանի ժողովրդավարական արդիականացման հետագա կայուն զարգացման կանխատեսումը հնարավոր է անցյալի հասարակական-քաղաքական պատմության խորը վերլուծության և ինքնիշխան Ղրղզստանի ժամանակակից քաղաքական իրականության ուսումնասիրության հիման վրա: Քաղաքական արդիականացման հաջողությանը մեծապես կնպաստեն սոցիալ-մշակութային, աշխարհաքաղաքական, տնտեսական և ներքաղաքական գործոնները, որոնք կանխորոշելու են քաղաքական իրադարձությունների հետագա էվոյուցիոն կամ հեղափոխական ընթացքը: Հետևաբար, Ղրղզստանի քաղաքական արդիականացումն իրականացնելու համար անհրաժեշտ է ժամանակին բարեփոխել երկրի քաղաքական համակարգի ենթահամակարգերը: Միևնույն ժամանակ, քաղաքական վերափոխումները պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով սոցիալ-մշակութային ավանդական առանձնահատկությունները և ազգային մտածելակերպը (*Жуношова 2018, Морозов 2018, Белобров 2019, Филькевич 2020*): Չնայած

այն հանգամանքին, որ այս տարբերակը բավականին բարդ է և երկարա-
ժամկետ, այնուամենայնիվ դա Ղրղզստանի քաղաքական համակարգի կա-
յունության պահպանման և արդիականացման ամենաիրատեսական ճա-
նապարհն է: Այս առումով ակնհայտ է կոնսոցիալ ներդաշնակության, քա-
ղաքական կայունության և սոցիալական երկխոսության սկզբունքների
պահպանման կարևորությունը՝ հիմնված երկրի քաղաքական կյանքի հիմ-
նական դերակատարների միջև գործընկերային և այլընտրանքային
սկզբունքների վրա: Ամենակարևոր հարցերի շուրջ փոխզիջումների և փոխ-
համաձայնության հասնելու դեպքում հնարավորություն կլինի բավականին
արդյունավետորեն շարժվել դեպի քաղաքական արդիականացման ընդհա-
նուր նպատակի իրականացում՝ ժամանակակից մրցակցային պետությանը
և հասարակությանը բնորոշ արժեքներով և առաջնահերթություններով պե-
տության կայացում (*Бактыбаева 2020, Петренко, Варламов, Лещенко
2020*): Նախկին փորձը ցույց է տվել, որ քաղաքակրթական և պատմամշա-
կութային արժեքներին խորթ լիբերալ-դեմոկրատական սկզբունքների
արագ ներմուծման փորձերը վարչարարական արդիականացման ճանա-
պարհով առաջացրել են անհաղթահարելի ներքին հակասություններ երկրի
զարգացման նպատակների և միջոցների միջև, քանի որ երկրում գերակա-
յում են ավանդական հասարակության կարծրատիպերը: Հետևաբար, ավե-
լի արդյունավետ է թվում այն մոտեցումը, երբ ավանդական հասարակու-
թյան աստիճանական հարմարումը ցիվիլիարխիկ կառուցակարգերին
կատարվում է խառը՝ վարչարարական-լիբերալ արդիականացման ճանա-
պարհով:

Գրականության ցանկ

- **Freedom House** (2019) “Freedom in the World – Kyrgyzstan Country Report.” Accessed February 25, 2021. <https://freedomhouse.org/country/kyrgyzstan/freedom-world/2019>.
- **Freedom House** (2020) “Freedom in the World – Kyrgyzstan Country Report.” Accessed February 25, 2021. <https://freedomhouse.org/country/kyrgyzstan/freedom-world/2020>.

6. Քաղաքական անկայունության գործոնները Ղրղզստանի համակարգային կերպափոխումների պայմաններում

- **Vakulchuk, Roman and Alexander Knobel** (2018) “Impact of non-tariff barriers on trade within the Eurasian Economic Union.” *Post-Communist Economies* 30(4): 459-481.
- **Бактыбаева, Айжан Н.** (2020) “Терроризм в СНГ: узбекский джихадизм. исламское движение Узбекистана”. *Постсоветские исследования* 3(4): 304-314.
- **Белобров, Юрий Я.** (2019) “Военно-политическая кооперация государств в форматах СНГ и ОДКБ на современном этапе”. *Вестник Дипломатической академии МИД России. Россия и мир* 3 (21): 6-23.
- **Воробьев, Павел С.** (2019a) “ИГИЛ как угроза национальной безопасности Кыргызской Республики”. *Вестник Кыргызско-Российского Славянского университета* 19(11): 153-158. DOI:10.26104/NNTIK.2019.45.557.
- **Воробьев, Павел С.** (2019b) “Реализация права на жилище в Кыргызской Республике в соответствии с международным правом”. В сборнике: Актуальные проблемы современного международного права. материалы XVI Международного конгресса «Блищенковские чтения»: в 3 частях. Российский университет дружбы народов: 196-202.
- **Голодова, Жанна Г. и Юлия С. Ранчинская, Елена Ю. Горохова** (2019) “Анализ предпосылок согласования аспектов денежно-кредитной политики в странах ЕАЭС”. *Дайджест-финансы* 24 ((2) (250)): 207-220.
- **Жунушова, Сайкал О.** (2018) “Влияющие на нестабильную религиозную ситуацию в Кыргызстане в современных условиях”. *Вестник Бишкекского гуманитарного университета* 2 (44): 109-112.
- Интернет-портал СНГ (2019) “В Бишкеке прошел саммит ОДКБ”, ноябрь 28. Дата доступа: 26.02.2021. <https://e-cis.info/news/568/84824/>.
- **Ионова, Елена** (2019) “Экономические и политические проблемы Киргизии”. *Россия и новые государства Евразии I (XLII)*: 74-87. DOI:10.20542/2073-4786-2019-1-74-87.
- **Исмаилов, Кубат А.** (2019) “Консолидация кыргызстанского общества в контексте взаимодействия институтов государства и гражданского общества”. *Наука, новые технологии и инновации Кыргызстана* 7: 162-164.
- **Карасартов, Канат М.** (2018) “Развитие регионов как залог стабильности экономики Кыргызской Республики”. *Экономика. Управление. Образование* 3 (6): 60-63.
- **Качкын, Кызы Гульназ** (2018) “Социально-обеспечительное законодательство ЕАЭС: проблемы формирования”. *Вестник Международного Университета Кыргызстана* 1 (34): 109-114.
- **Курамаева, Эльмира Д.** (2018) “Некоторые вопросы денежно-кредитной политики Национального Банка Кыргызстана”. *Известия Иссык-Кульского форума бухгалтеров и аудиторов стран Центральной Азии* 4-2 (23): 29-36.
- **Майтдинова, Гузель М.** (2019) “Реализация национальной стратегии Таджикистан-2030 в геополитической динамике Центральной Азии”. *Таджикистан и современный мир* 1 (64): 169-183.

- **Мальшева, Дина Б.** (2018) “Политические процессы в Постсоветской Центральной Азии”. *Контуры глобальных трансформаций: политика, экономика, право* 11(3): 36-52.
- МИД Кыргызской Республики (2018) “О сотрудничестве Кыргызской Республики в рамках ОДКБ”, сентябрь 9. Дата доступа: 26.02.2021. <https://mfa.gov.-kg/ru/osnovnoe-menyu/vneshnyaya-politika/mezhdunarodnye-organizacii/odkb/o-sotrudnichestve-kyrgyzskoy-respubliki-v-ramkah-odkb>.
- **Морозов, Андрей Н.** (2018) “Конституционное отражение общепризнанных принципов и норм международного права”. *Журнал российского права* 7 (259): 33-45.
- **Нурматов, Темирбек А.** (2019) “Интеграционные процессы в центральной азии: история и генезис”. *Вестник дипломатической академии министерства иностранных дел Кыргызской республики им. Казы Дикамбаева* 11: 98-112.
- **ПА ОДКБ** (2021) “Международные наблюдатели ПА ОДКБ начали работу в Кыргызской Республике со встречи с Министром иностранных дел”. Парламентская Ассамблея Организации Договора о коллективной безопасности, апрель 9. Дата доступа: 25.02.2021. <https://paodkb.org/events/mezhdunarodnye-nablyudateli-pa-odkb-nachali-rabotu-v>.
- **Пазилов, Бекболот К. и Жолборс Ж. Жоробеков** (2019) “Европейское направление внешней политики Кыргызской Республики”. *Наука, новые технологии и инновации Кыргызстана* 3: 216-222. DOI:10.26104/NNTIK.2019.45.557.
- **Петренко, Елена С. и Артур В. Варламов, Юлия Г. Лещенко** (2020) “Экономическая безопасность России в процессе интеграции в Евразийский экономический союз”. *Экономические отношения* 10(4): 1191-1210.
- **Рысалиева, Мира Ш.** (2020) “Основные пути совершенствования местных налогов в Кыргызской Республике”. *Актуальные вопросы современной экономики* 4: 174-181.
- **Савинов, Леонид и Наталья Скорых** (2019) “Политические и экономические факторы развития Кыргызстана”. *Журнал политических исследований* 3 (4): 75-84.
- **Саякбаева, Айганыш А. и Гулбарчын А. Джоробекова** (2021) “Формирование инвестиционного климата как важный фактор развития экономики”. *Актуальные вопросы современной экономики* 2: 208-216.
- **Филькевич, Игорь А.** (2020) “Система антикризисных мер в рамках ЕАЭС”. *Развитие территорий* 4 (22): 73-79. DOI:10.32324/2412-8945-2020-4-73-79.
- **Холодков, Вячеслав М. и др.** (2019) “Евразийский экономический союз: проблемы развития и отношение к ЕАЭС в Центральной Азии”. *Проблемы национальной стратегии* 1 (52): 9-57.
- **Чибухчян, Сурен С.** (2019) “Евразийский экономический союз: цифры и показатели”. *Логистика* 12 (157): 46-50.

7. ԵԱՏՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՄԻՋԵՐԿՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Քաղաքական համակարգի կայունության վրա ազդող գործընթացների զարգացումը տարբեր երկրներում ընթանում է ուրույն սցենարով և առանձնահատկություններով: Եվ չնայած այդ սցենարների ինքնատիպությանը՝ հետխորհրդային տարածքի պետությունների փոխակերպման գործընթացներում, այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել մի շարք օրինաչափություններ և ընդհանրություններ: Այդպիսիք են, օրինակ՝ ընտրական գործընթացները և դրանց հետևանքով քաղաքական իրավիճակի սրացումներն ու քաղաքացիական անհնազանդությունների ալիքների աճը, հեղափոխությունները կամ դրանց փորձերը, որոշ երկրներում նաև հեղափոխությունների երկրորդ ալիքի առաջ գալը, իշխանությունների երկարակեցությունն ու լեգիտիմության անկումը և այլն: Այդ օրինաչափությունների վերհանմամբ եզրակացնում ենք, որ դրանք անխուսափելի են և անցումային գործընթացին հատուկ հաջորդական փուլեր են, որոնք մի դեպքում կարող են առավել հանդարտ ընթանալ, մեկ այլ դեպքում՝ խիստ և վտանգավոր «սրացումներով» դրսևորվել: Կայունության ճգնաժամը հատկապես վրա է հասնում, երբ այդ «սրացումների» ժամանակ քաղաքական էլիտան փորձում է վերացնել ոչ թե պատճառը, այլ հետևանքը:

Գծապատկեր 1-ում ներկայացված են ԵԱՏՄ անդամ երկրների Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի միջերկրային վերլուծության 2019 թ. արդյունքները, ըստ որոնց՝ քաղաքական կայունության ամենաբարձր ցուցանիշն ունի Բելառուսը (12,8 միավոր): Բելառուսին հաջորդում է

Հայաստանը՝ 10 միավորով, իսկ Ղազախստանը զբաղեցրել է երրորդ տեղը՝ փոքր միավորային տարբերությամբ (9,5): Վերջին երկու հորիզոնականներում են Ղրղզստանն (4) ու Ռուսաստանը (-9,9)՝ այն տարբերությամբ, որ վերջինիս արդյունքները շարունակվում են գտնվել բացասական տիրույթում:

Գծապատկեր 1
**ԵԱՏՄ անդամ պետությունների Քաղաքական համակարգի կայունության
ինդեքսը (2019 թ.)***



Ստացված տվյալների համաձայն՝ Բելառուսը, Հայաստանը, Ղազախստանը և Ղրղզստանն ունեն կայունության միջին, իսկ Ռուսաստանը՝ ցածր մակարդակ: Տարբեր հակամարտություններում Ռուսաստանի ներգրավվածությունը, արևմտյան երկրների հետ հարաբերությունների լարվածության աճը, տնտեսական պատժամիջոցները, կոռուպցիան, քաղաքացիական անհնազանդությունները և նմանատիպ այլ բացասական գործոններ շարունակաբար ազդում են Ռուսաստանի քաղաքական համակարգի կայունության վրա: Այս առումով նշենք նաև, որ քաղաքական իրավունքներն ու քաղաքացիական ազատությունների ոլորտում առկա հիմնախնդիրները ավելի են խորացնում քաղաքական կայունության վրա բացասական գործոնների ազդեցությունը:

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Քաղաքական համակարգի կայունության միջերկրային ինդեքսն արտահայտվում է -100-ից +100-ը միջակայքում ընկած համապատասխան միավորներով, որտեղ պետությունները որակվում են հետևյալ կերպ՝ [-100;-50]- անկայուն, [-49;0] – ցածր մակարդակի կայունություն, [1;49] – միջին մակարդակի կայունություն, [50;100] – բարձր մակարդակի կայունություն:

**7. ԵԱՏՄ երկրների քաղաքական համակարգի կայունության
ինդեքսի միջերկրային վերլուծություն**

Աղյուսակ 1

ԵԱՏՄ անդամ պետությունների ՔՀԿԻ-ն (2017, 2019 թթ.)*


Երկրներ	2019		2017
Բելառուս	12,8	↓	18,3
Հայաստան	10	↑	6,9
Ղազախստան	9,5	↓	21,7
Ղրղզստան	4	↑	2,7
Ռուսաստան	-9,9	↓	-9,3

Համեմատելով ԵԱՏՄ անդամ պետությունների ՔՀԿԻ-ի 2017 և 2019 թթ. տվյալները՝ տեսնում ենք, որ բոլոր երկրների մոտ 2019 թվականին անկում է գրանցվել, բացառությամբ Հայաստանի և Ղրղզստանի: Հատկանշական է Ղազախստանի ՔՀԿԻ-ի նկատելի անկումը, որի պարագայում այն 21,7 միավորից նվազել է 9,5 միավորի (տե՛ս Աղյուսակ 1): Քաղաքական կայունության այս աստիճանի անկումը պայմանավորված է Ղազախստանում քաղաքացիական անհնազանդությունների աննախադեպ աճով: Խոսելով Բելառուսի և Ղազախստանի քաղաքական համակարգերի կայունության մասին՝ պետք է նշել, որ կենտրոնացած գործադիր իշխանությամբ երկրներում քաղաքական իրավիճակի վերահսկողությունը կատարվում է ավտորիտար որոշ մեխանիզմների կիրառմամբ (*Tusalem 2015 Gerschewski 2013, Mesquita et. al. 2003*): Եթե այդ մեխանիզմների գործարկումը ուղեկցվում է նաև սոցիալ-տնտեսական ոլորտում որոշակի դրական արդյունքների ձեռքբերմամբ և պահպանմամբ, ապա կայունության ապահովման հնարավորությունները առավել նկատելի են դառնում, ինչը և արդիական է Բելառուսի ու Ղազախստանի պարագայում: Այնուամենայնիվ, ավտորիտար մեխանիզմների գործադրումը կայունության պահպանման ուղղությամբ ունի նաև ռիսկերի որոշակի չափաբաժին: Քաղաքականության ոլորտում գործող սահմանափակումներն ու ճնշումները կուտակային ազդեցություն են ունենում հասարակության վրա, որը որոշ ժամանակ անց կարող է պայթունավտանգ իրավիճակների հանգեցնել:

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները: ՔՀԿԻ-ի 2017 թվականի միջերկրային վերլուծության արդյունքների մասին ավելի մանրամասն տե՛ս (*Aleksanyan 2018, 297-299*):

Գծապատկեր 2

ԵԱՏՄ անդամ պետությունների ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսը
(2019 թ.)*



Հայաստանի միավորային աճը Քաղաքական համակարգի կայունության ինդեքսում պայմանավորված է քաղաքական գործոնների դրական ազդեցությամբ: Գծապատկեր 2-ում պատկերված են ԵԱՏՄ անդամ պետությունների քաղաքական կայունության Քաղաքական գործոնների ինդեքսի ցուցանիշները: Համաձայն հաշվարկված տվյալների՝ վերոնշյալ վարկանիշային աղյուսակում Հայաստանը 9,7 միավորով առաջատար դիրքերում է: Հայաստանին հաջորդում է Բելառուսը, որի ցուցանիշները ևս դրական տիրույթում են (3,9): Ղազախստանը (-0,4) և Ղրղզստանը (-3,3) բացասական ցուցանիշներով զբաղեցրել են երրորդ և չորրորդ հորիզոնականները համապատասխանաբար: Շատ մեծ միավորային տարբերությամբ վերջին տեղում է հայտնվել Ռուսաստանը (-33,7): Սա նշանակում է, որ Ռուսաստանի քաղաքական կայունության վրա ամենամեծ բացասական ազդեցությունն ունեն հենց քաղաքական գործոնները:

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

**7. ԵԱՏՄ երկրների քաղաքական համակարգի կայունության
ինդեքսի միջերկրային վերլուծություն**

Աղյուսակ 2

**Քաղաքական գործոնների ինդեքսի փոփոխականներն ու դրանց արժեքները
(Հայաստան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, 2019 թ.)⁴¹**

Ք_գ-ի փոփոխականները	Հայաստան	Ռուսաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան
1. ՕՈՆ (% ՀՆԱ)	1,9	1,9	2,0	1,9	3,3
2. Տնտ. ազատության ինդեքս (0-100)	70,6	61	61,7	69,6	62,9
3. Քաղաքական իրավունքների ինդեքս (7-1)	4	7	7	7	5
4. Քաղաքացիական ազատ. ինդեքս (7-1)	4	6	6	5	4
5. Կոռուպցիայի ընկալման ինդեքս (0-100)	42	28	45	34	30
6. Հակամարտության առկայություն (0,1,2)	1	1	0	0	1
7. Քաղաքացիական անհնազանդ. (0-5)	1,9	4,1	3,2	3,9	2,5

ԵԱՏՄ անդամ պետությունների Ք_գ-ի փոփոխականներին (տե՛ս Աղյուսակ 2) անդրադառնալով՝ նշենք որ օտարերկրյա ուղղակի ներդրումների 2019 թ. ամենաբարձր ցուցանիշն ունի Ղրղզստանը (3,3 ՀՆԱ%): Մնացած պետությունների ներդրումների ցուցանիշը, ըստ ՀՆԱ-ում ունեցած մասնաբաժնի, գրեթե նույնն է:

Միևնույն ժամանակ, «Տնտեսական ազատության ինդեքսի»* (ՏԱԻ) լա-

⁴¹ Հաշվարկների հիմք են հետևյալ աղբյուրները՝ 1 - <http://data.worldbank.org/indicator>, 2 - <http://www.heritage.org/index/>, 3, 4 - <http://www.freedomhouse.org>, 5 - <http://www.transparency.org>, 6, 7 – գնահատված է հեղինակների/հետազոտողների կողմից (մուտքը՝ 18.02.21):

* «Տնտեսական ազատության ինդեքսը» գնահատվում է «Հերիթիջ» հիմնադրամի և «Ուոլ Սթրիթ» օրաթերթի կողմից՝ ըստ 12 գործոնների՝ արտահայտված 0-100 միավորային սանդղակով, որտեղ 0-ից 49,9 գնահատական ստացած երկրները «տնտեսապես ճնշված» են, 50-ից 59,9-ը՝ «հիմնականում անազատ», 60-ից 69,9-ը՝ «չափավոր ազատ», 70-ից 79,9-ը՝ «հիմնականում ազատ», իսկ 80-ից 100-ը՝ «ազատ»: 2019 թ. ՔՀԿԻ-ի հաշվարկների համար հիմք է ընդունվել 2020 թ. ՏԱԻ-ին, քանի որ այն ընդգրկում է 2018 թ. հուլիսի 1-ից մինչև 2019 թ. հունիսի 30-ն ընկած դեպքերին վերաբերող ցուցանիշները: Տվյալ փոփոխականն ընդգրկվել է քաղաքական գործոնների կազմում, քանի որ այն արտահայտում է օրենսդրության կառուցվածքն ու սեփականության իրավունքների երաշխիքները, դատական համակարգի արդյունավետությունը և համարվում է քաղաքական կայունության և ժողովրդավարության կարևոր ցուցանիշներից մեկը:

վագոյն ցուցանիշն ունի Հայաստանը (70,6), որին փոքր միավորային տարբերությամբ հաջորդում է Ղազախստանը (69,6): Համաձայն ՏԱԻ-ի այդ ցուցանիշի՝ Հայաստանը «հիմնականում ազատ» երկրների շարքում է, իսկ ԵԱՏՄ անդամ մյուս պետությունները՝ «չափավոր ազատ»: Ավելին՝ Հայաստանը աշխարհի ուսումնասիրված 180 երկրների շարքում 34-րդ տեղում է, իսկ Եվրոպական տարածաշրջանի 46 երկրի շարքում զբաղեցրել է 18-րդ տեղը (*Miller, Kim, Roberts 2020, 5, 62, 89, 118-119*):

Ք_{ԳԻ}-ի փոփոխականներից Հայաստանը ԵԱՏՄ անդամ պետությունների շարքում լավագույն ցուցանիշներն ունի (4 միավոր) նաև «Ազատության տան» Քաղաքական իրավունքների ինդիկատորից: Ռուսաստանը (7), Բելառուսն (7) ու Ղազախստանը (7) գրանցել են ինդեքսի վատթարագույն ցուցանիշները, ինչը վկայում է, որ այս երկրների մոտ քաղաքական իրավունքների ոլորտը խնդրահարույցներից է: Կազմակերպության «Ազատությունն աշխարհում» զեկույցի⁴² մյուս՝ Քաղաքացիական ազատությունների ինդիկատորով Հայաստանը Ղրղզստանի հետ արձանագրել է լավագույն ցուցանիշը (4 միավոր): Քաղաքական իրավունքների և Քաղաքացիական ազատությունների միջինացված ցուցանիշներով Հայաստանը (4) և Ղրղզստանը (4,5) «մասնակի ազատ» երկրներ են, իսկ Ռուսաստանը (6,5), Բելառուսն (6,5) ու Ղազախստանը (6)՝ «անազատ» (*Freedom House 2020*):

ԵԱՏՄ անդամ երկրների շարքում Կոռուպցիայի ընկալման ինդեքսի⁴³ (ԿԸԻ) ամենաբարձր ցուցանիշը Բելառուսինն է (45), որին հաջորդում է Հայաստանը՝ 42 միավորով. վերջինս 7 միավորով բարելավել է իր ցուցանիշը նախորդ տարվա համեմատ: ԿԸԻ-ի նվազագույն ցուցանիշն ունի Ռուսաստանը (28) (*Transparency International 2019*):

⁴² «Ազատությունն աշխարհում» 2020 թ. զեկույցը անդրադառնում է 2019 թ. իրադարձություններին: Ձեկույցի Քաղաքական իրավունքների և Քաղաքացիական ազատությունների ինդեքսը գնահատվում է 1-ից մինչև 7 միավորային սանդղակով, որտեղ 1-ից 2,5 գնահատական ստացած երկրներն «ազատ» են, 3-ից 5-ը՝ «մասնակի ազատ», 5,5-ից 7-ը՝ «անազատ»:

⁴³ «Կոռուպցիայի ընկալման ինդեքսը» գնահատվում է 0-100 բալային համակարգով, ընդ որում՝ 0-ն համապատասխանում է լիովին կոռումպացված երկրներին, 100-ը՝ կոռուպցիայից լիովին ձերբազատվածներին:

7. ԵԱՏՄ երկրների քաղաքական համակարգի կայունության ինդեքսի միջերկրային վերլուծություն


Ինչ վերաբերում է ԵԱՏՄ անդամ երկրներում քաղաքացիական անհնազանդությունների ալիքներին* (տե՛ս Աղյուսակ 2), ապա պետք է նշել, որ 2019 թ. ամենահանգիստ իրավիճակն այդ առումով Հայաստանում էր: 2018 թվականի հեղափոխությունից հետո, որն ուղեկցվեց քաղաքացիական անհնազանդությունների մեծ, սակայն խաղաղ ալիքով, 2019 թ. կարծես իրավիճակը հանդարտվել էր, և բողոքի ու ցույցերի քանակը զգալիորեն նվազել էր նախորդ տարիների համեմատությամբ: Այս առումով տեղին է նշել, որ 2018 թվականի սոցիալական անհանգստությունների բարձր մակարդակի խաղաղ բնույթը հնարավոր դարձրեց քաղաքական համակարգի կայունության վրա նվազագույն ցնցումներով իրականացնել հեղափոխությունը: Հարկ է ընդգծել, որ կայունության պահպանման տեսակետից իրավիճակը շատ ավելի ռիսկային կարող էր լինել: Միևնույն ժամանակ 2019 թվականին Ռուսաստանում, Բելառուսում և Ղազախստանում նկատվում է քաղաքացիական անհնազանդությունների ալիքների բարձրացում, որն իշխանությունները փորձում են հանդարտեցնել ու վերահսկել տարբեր եղանակներով, այդ թվում նաև ուժի կիրառմամբ:

Մեկ այլ՝ քաղաքական համակարգի կայունության տեսակետից կարևոր գործոնի՝ հակամարտության առկայության մասին խոսելիս պետք է նշել, որ տարածաշրջանն առանձնանում է կոնֆլիկտայնության բարձր մակարդակով, իսկ ԵԱՏՄ անդամ պետություններից բոլորը, բացառությամբ Բելառուսի և Ղազախստանի, ունեն խնդիրներ սահմանակից պետությունների հետ կամ այս կամ այն կերպ ներգրավված են հակամարտության տարբեր գոտիներում:

* Գնահատվում է հետազոտողների կողմից՝ «Քաղաքացիական անհնազանդություններ» փոփոխականի միջոցով 0-5 սանդղակի շրջանակներում, որտեղ 0-ն քաղաքացիական անհնազանդությունների իսպառ բացակայությունն է, 5-ը՝ դրանց առավելագույն քանակը՝ ընդհուպ հեղաշրջումներ և հեղափոխություններ: Գնահատումը ներառում է սահմանված ժամանակահատվածում ցույցերի, գործադուլների, սոցիալական անկարգությունների քանակը, այդ թվում՝ նաև քաղաքական ձերբակալությունների ու սպանությունների դեպքերը:

Գծապատկեր 3

ԵԱՏՄ անդամ պետությունների ՔՀԿԻ-ի Սոցիալական և Տնտեսական գործոնների ինդեքսները (2019 թ.)*



Դիտարկելով ՔՀԿԻ-ի Սոցիալական և Տնտեսական գործոնների ինդեքսը (տե՛ս Գծապատկեր 3)՝ նկատելի է, որ մասնավորապես ՍԳԻ-ում առաջատարի դիրքերը շարունակաբար պահպանում են Ղազախստանն (40,9) ու Բելառուսը (40,6), որը պայմանավորված է Զինի ինդեքսի և աղքատության մակարդակի ցածր ցուցանիշներով: Միևնույն ժամանակ Հայաստանը 23,1 միավորով ՍԳԻ-ի վարկանիշային աղյուսակում զբաղեցրել է վերջին հորիզոնականը՝ զբաղվածության ամենացածր և աղքատության ամենաբարձր ցուցանիշների պատճառով (տե՛ս Աղյուսակ 3):

Տնտեսական գործոնների ինդեքսում առաջատար դիրքերում են Բելառուսն (-9,8) ու Ռուսաստանը (-10): Հայաստանը -15,3 միավորով երրորդ հորիզոնականում է: ՏԳԻ-ի նվազագույն ցուցանիշն ունի Ղրղզստանը (-17,2)՝ շնչային ՀՆԱ-ի և տնտեսության վարկավորման նվազագույն ցուցանիշների պատճառով (տե՛ս Աղյուսակ 3): Հատկանշական է, որ ԵԱՏՄ անդամ պետությունների շարքում Ղրղզստանն ունի սովերային տնտեսության ամենա-

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

**7. ԵԱՏՄ երկրների քաղաքական համակարգի կայունության
ինդեքսի միջերկրային վերլուծություն**

ցածր մակարդակը, այն դեպքում, երբ մյուս երկրները գրեթե հավասար ցուցանիշներ են գրանցել (*Medina & Schneider 2019*):

Աղյուսակ 3

**Սոցիալական և Տնտեսական գործոնների ինդեքսի փոփոխականներն ու դրանց արժեքները
(Հայաստան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, 2019 թ.)⁴⁴**

S_{գր}-ի և U_{գր}-ի փոփոխականները	Հայաստան	Ռուսաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան
1. ՀՆԱ 1 շնչի հաշվով, \$ (գնողունակության համարժեքով ճշգրտված)	14220	29181	19943	27444	5471
2. Արտաքին առևտրաշրջ. (% ՀՆԱ)	91	49	133	64	103
3. Տնտեսության վարկավորում (% ՀՆԱ)	65	71	40	35	20 ^a
4. Գնաճ (%)	1,4	4,5	5,6	5,2	1,1
5. Ստվերային տնտեսություն (% ՀՆԱ) ^a	34,5	36,5	37,5	35,8	29,0
6. Բյուջեի պրոֆիցիտ/դեֆիցիտ (% ՀՆԱ)	-1,0	1,8	2,4	-1,8	-0,1
7. ՄՋՀ (0-1)	0,776	0,824	0,823	0,825	0,697
8. Իրական աշխատավարձ (\$, գնողունակության համարժեքով ճշգրտված)	1154	1722	1479	1298	1018
9. Զբաղվածության մակարդակ (%)	46	59	61	66	56
10. Աղքատության մակարդակ (%)	26,4	12,3	5	4,3	20,1
11. Ջինի ինդեքս (0-1) ^a	0,344	0,375	0,252	0,275	0,277
12. Հանցագործությունների քանակը (1000 շնչի հաշվով)	9,1	13,8	9,4	13,1	6,4

⁴⁴ Հաշվարկների հիմք են հետևյալ աղբյուրները՝ 1, 2, 3, 9, 11 - <http://data.world-bank.org/indicator>, 4 - <https://www.imf.org/>, 5 - www.cesifo-group.org/wp, 6, 8, 10, 12 - Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալներ, 7 - <http://hdr.undp.org>: a – 2019 թ. որոշ տվյալների բացակայության դեպքում հաշվարկներում օգտագործվել են տվյալ աղբյուրի նախորդ տարվա/տարիների տվյալները (մուտքը՝ 25.02.21):

Եզրակացություններ

ՔՀԿԻ-ի 2019 թվականի միջերկրային վերլուծության ինդեքսի տվյալներն ամփոփելով՝ նշենք հետևյալ եզրահանգումները.

- ԵԱՏՄ անդամ պետությունների շարքում Քաղաքական համակարգի կայունության ամենաբարձր ցուցանիշն ունի Բելառուսը, որը -100-ից +100-ը միավորային սանդղակում ստացել է 12,8 միավոր: Հայաստանը 10 միավորով երկրորդ հորիզոնականում է, իսկ քաղաքական կայունության ամենացածր ցուցանիշն ունի Ռուսաստանը (-9,9): Բելառուսը, Հայաստանը, Ղազախստանը և Ղրղզստանն ունեն քաղաքական համակարգի կայունության միջին մակարդակ, իսկ Ռուսաստանը՝ ցածր:
- ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսում լավագույն ցուցանիշը Հայաստանինն է (9,7): Ք_{ԳԻ}-ի ամենացածր ցուցանիշն արձանագրել է Ռուսաստանը (-33,7), որն ունի նվազագույն արդյունքները Տնտեսական ազատության և Կոռուպցիայի ընկալման ինդեքսներում, Քաղաքական իրավունքների և Քաղաքացիական ազատությունների ինդիկատորներում, ինչպես նաև նշված տարում գրանցվել է քաղաքացիական անհնազանդությունների ամենաբարձր մակարդակը:
- Ղազախստանն (40,9) ու Բելառուսն (40,6) ունեն լավագույն ցուցանիշները Սոցիալական գործոնների ինդեքսներում: Հայաստանը ԵԱՏՄ անդամ պետությունների շարքում ունի Ս_{ԳԻ}-ի ամենացածր միավորը (23,1)՝ աղքատության ամենաբարձր և զբաղվածության ամենացածր համեմատական ցուցանիշներով պայմանավորված:
- Տնտեսական գործոնների ինդեքսում լավագույն ցուցանիշները արձանագրել են Բելառուսն (-9,8) ու Ռուսաստանը (-10): Հայաստանը (-15,3) երրորդ հորիզոնականում է, իսկ Ղազախստանն (-17) ու Ղրղզստանը (-17,2) փոքր միավորային տարբերությամբ վարկանիշային աղյուսակի վերջին տեղերում են:

Գրականության ցանկ

- **Aleksanyan, Arusyak** (ed.) (2018) Political Stability of Newly Independent Countries under Conditions of Modernization (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova), Yerevan: YSU press, 328 p.
- **Freedom House** (2020) “Freedom in the World 2020. A Leaderless Struggle for Democracy.” Accessed February 20, 2021. <https://freedomhouse.org/report/freedom-world/2020/leaderless-struggle-democracy>.
- **Gerschewski, Johannes** (2013) “The three pillars of stability: legitimation, repression, and co-optation in autocratic regimes.” Democratization, 20(1): 13-38.
- **Medina, Leandro & Friedrich Schneider** (2019) “Shedding Light on the Shadow Economy: A Global Database and the Interaction with the Official One”, CESifo Working Papers.
- **Miller, Terry, Anthony B. Kim & James M. Roberts** (2020) “2020 Index of Economic Freedom.” Heritage Foundation and the Wall Street Journal. Accessed February 25, 2021. https://www.heritage.org/index/pdf/2020/book/index_20-20.pdf.
- **Shkel, Stanislav & Eduard Gareev** (2015) “Durability of the Authoritarian Regimes: The Role of Procedural Factors.”
- **Transparency International** (2019) “Corruption Perceptions Index 2019.” February 25, 2021. <https://www.transparency.org/en/cpi/2019/index/nzl>.
- **Tusalem, Rollin F.** (2015) "Democracies, Autocracies, and Political Stability". International Social Science Review Vol. 90, No. 1: 1-40.
- **UNDP** (2020) “Human Development report 2020. The next frontier: Human development and the Anthropocene.” Accessed February 27, 2021. <http://hdr.undp.org/sites/default/files/hdr2020.pdf>.

ԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԲԱՌԵՐԻ ՑԱՆԿ

Ա

ադապտացիա, 33, 34

Ադրբեջան, 13

Ազատության տուն (Freedom House), 16, 21, 22, 27, 35, 38, 39, 92, 94, 102, 107

Ազատությունն աշխարհում, 16, 21, 102
ազգային անվտանգություն, 29, 41, 45, 51, 71, 74, 79, 84, 86

Ազգային վիճակագրական ծառայություն, 15, 16, 17, 105

ազդեցություն, 12, 16, 23, 25, 27, 30, 31, 37, 38, 40, 44, 46, 47, 49, 50, 51, 55, 64, 70, 74, 82, 84, 87, 90, 91, 93, 98, 99, 100

Ակ ժոլ, 79

ակտիվ հակամարտություն, 23

աղքատության մակարդակ, 7, 17, 18, 20, 104, 105

Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ԱՄՆ), 7, 16, 17, 24, 36, 44, 50, 51, 52, 66, 82, 91

ԱՄՆ դոլար, 16, 17, 24, 36, 52, 66, 91

Անկախ պետությունների

համագործակցություն (ԱՊՀ), 7, 67, 74
անկայուն կայունություն, 77, 84

անկայունություն, 10, 40, 51, 86

անվանական աշխատավարձ, 24

Անվտանգության խորհուրդ (ԱԽ), 7, 78, 79, 80

անվտանգություն, 7, 13, 29, 34, 38, 41, 44, 45, 51, 52, 54, 59, 64, 65, 66, 67, 71, 74, 79, 84, 86

անցնցում, 37

անցումային, 12, 42, 49, 53, 55, 68, 97

անցումային գործընթաց, 97

անցումային շրջան, 12, 49, 68

անցումային պետություն, 42

անցումային փոխակերպում, 12

անցումային քաղաքական համակարգ, 53, 56

անցումային քաղաքական վարչակարգ, 55

աշխարհառազմավարական, 59, 60, 61, 64

աշխարհառազմավարական վեկտոր, 61
աշխարհառազմավարություն, 9, 59, 62, 63

աշխարհաքաղաքական, 12, 59, 60, 61, 64, 65, 71, 82, 93

աշխարհաքաղաքական գործընթաց, 59, 71

ապակայունացում, 26

ապրանք, 24, 68

առաջընթաց, 12, 13, 84, 87

առևտրաշրջանառության ծավալ, 7, 17, 20

ավտորիտար, 26, 27, 33, 87, 99

ավտորիտար քաղաքական համակարգ, 26

Ատամբան, Ալմադբեկ, 92

Անունների և հիմնաբառերի ցանկ

արդիականացում, 13, 40, 56, 63, 65, 76, 77, 83, 84, 87, 93, 94

արդիականություն, 42

Արևելյան գործընկերություն (ԱԷԳ), 7, 64, 65, 69, 70

արհմիություն, 7, 49, 50, 76, 80

արտահերթ ընտրություններ, 34, 77, 79, 80, 81, 82

արտաքին քաղաքական օրակարգ, 9, 29, 34, 38

արտաքին քաղաքականություն, 34, 59, 61, 64, 67, 86

Բ

բազմակարծություն, 21

բազմակուսակցական

դիսֆունկցիանալություն, 47

բազմակուսակցական համակարգ, 46, 70, 83

բարեփոխում, 54, 56, 65, 68, 78, 88

բարձր մակարդակի կայունություն, 26

Բելառուս / Բելառուսի Հանրապետություն (ԲՀ), 7, 9, 13, 14, 53, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 97, 98, 99, 100, 101, 102, 103, 104, 105, 106

Բերթելսմանի հիմնադրամ, 22

բյուջեի դեֆիցիտ, 7

Գ

գլոբալացում, 44, 55

գնահատական, 20, 21, 23, 35, 92, 101, 102

գնաճ, 7, 17, 20, 105

գնողունակություն, 24, 105

գործադուլ, 23, 103

գործիք, 18, 33, 64, 70

գործիքակազմ, 41, 69, 70

Դ

դինամիկ քառու, 49

Ե

եկամուտ, 23, 24, 27

ենթահինդեքսներ, 14, 15, 25

Եվրասիական, 4, 18, 42, 46, 49, 52, 55, 59, 61, 63, 64, 74, 77, 84

Եվրասիական ինտեգրում, 42, 46, 52, 55

Եվրասիական տնտեսական միություն (ԵԱՏՄ), 3, 4, 7, 10, 12, 13, 14, 15, 46, 52, 60, 66, 67, 74, 82, 86, 97, 98, 99, 100, 101, 102, 103, 104, 106, 116

Եվրասիական քաղաքացիական երկխոսություն, 49

Եվրասիականացում, 42, 56

Եվրասիականություն, 64

Եվրոպական, 4, 5, 11, 15, 18, 52, 55, 59, 61, 63, 64, 65, 67, 70

Եվրոպական միություն / Եվրամիություն (ԵՄ), 7, 11, 12, 13, 44, 50, 51, 60, 64, 65, 69, 70, 71, 80, 82

Եվրոպականացում, 56

Զ

զանգվածային լրատվության միջոցներ (ԶԼՄ), 7, 16, 22, 49

զբաղվածության մակարդակ, 7, 17, 19, 44, 105

զեկույց, 21, 102

Է

էթնիկ հակամարտություն, 93

էթնոքաղաքական կոնֆլիկտ, 77

էներգետիկ անվտանգություն, 44, 45

էներգետիկ ռեսուրսներ, 68

Ը

ընդդիմադիր կուսակցություն, 49, 70
ընդդիմություն, 65, 81
ընտրական գործընթաց, 12, 21, 97
ընտրական իրավունք, 82
ընտրանի, 40, 42, 45, 46, 48, 49, 55, 56,
60, 61, 63, 64, 75, 77, 78, 83, 86
ընտրություններ, 32, 34, 35, 45, 46, 47,
48, 77, 79, 81, 82

Թ

Թուրքիա, 13
Թրանսփարենսի ինթերնեշլ, 16, 21,
35, 36, 91, 92

Ժ

ժողովրդավարական գործընթաց, 26, 27
ժողովրդավարացում, 26, 65, 93
ժողովրդավարություն, 11, 16, 21, 25, 35,
48, 101

Ի

ինդիկատոր, 16, 17, 102, 106
ինտեգրացիաների ինտեգրում, 64
ինտեգրացիոն գործընթաց, 64, 77
ինտեգրում, 4, 18, 59, 63, 64, 66, 70, 71,
90
ինքնիշխանություն, 13, 42
իշխանության կուսակցություն, 46
իշխանության հերթափոխություն, 12, 26
իշխանություն, 12, 16, 18, 22, 26, 27, 30,
31, 32, 33, 34, 42, 45, 46, 47, 48, 49,
50, 55, 56, 61, 65, 68, 69, 70, 77, 78,
81, 82, 83, 86, 88, 92, 97, 99, 103
Իստոն, Դեյվիդ, 31, 32, 33

իրական աշխատավարձ, 7, 17, 19, 24,
105

իրավական պետություն, 64
իրավունք, 8, 16, 19, 20, 21, 26, 27, 35,
42, 69, 78, 79, 81, 82, 88, 92, 93, 98,
101, 102, 106

Լ

լեգիտիմություն, 18, 27, 34, 48, 49, 88, 97
լիբերալ-դեմոկրատական, 47, 94
Լիբերալ-դեմոկրատական
կուսակցություն, 47

ԼԽ

խորհրդարան, 46, 47, 77, 78, 79, 83
խորհրդարանական ընտրություններ, 34,
47
խորհրդարանական խմբակցություն, 47
խորհրդարանական կուսակցություններ,
46, 54, 86
խորհրդարանական մեծամասնություն,
47, 49

Կ

կայուն անկայունություն, 77
կայուն զարգացում, 26, 44, 62, 71, 77, 90,
93
կայունության ինդեքս, 14, 25, 41
կայունության ճգնաժամ, 97
կայունության ցածր մակարդակ, 27
կայունություն, 4, 8, 9, 11, 12, 13, 14, 18,
19, 25, 26, 27, 29, 30, 31, 33, 35, 37,
41, 43, 45, 55, 56, 60, 61, 64, 65, 68,
74, 75, 80, 81, 84, 87, 88, 90, 91, 97,
98, 99, 100, 103, 106
կայունություն-անկայունություն, 9, 45

Անունների և հիմնաբառերի ցանկ

կառավարող ընտրանի, 40, 45, 46, 48, 49, 55, 56, 60, 61, 63, 64, 75, 76, 77, 78, 83, 86, 88
Կառավարության ծրագիր, 34, 39
կառավարության որոշում, 34, 39, 71
կառավարություն, 20, 21, 39, 46, 47, 49, 63, 67, 71, 77, 79, 83, 90, 92
Կոմունիստական ժողովրդական կուսակցություն, 80
կոնսոցիալ, 94
կոնֆլիկտ, 23, 27, 33, 77, 103
կոնֆլիկտային իրավիճակ, 23, 33
կոռուպցիա, 13, 22, 35, 45, 69, 77, 83, 91, 92, 93, 98
Կոռուպցիայի ընկալման ինդեքս (ԿԸԻ), 7, 16, 19, 21, 22, 35, 92, 101, 102
կոռուպցիոն ռիսկ, 22
կուսակցական կառուցվածք, 46
կուսակցական համակարգ, 46, 49, 87
կուսակցաշինություն, 71, 87
կուսակցություն, 18, 31, 40, 46, 47, 49, 70, 71, 79, 80, 86, 87

Հ

հակաընտրանի, 55
հակակոռուպցիոն միջոցառումներ, 22
հակակոռուպցիոն քաղաքականություն, 45, 55, 83
հակամարտության առկայություն, 7, 16, 19, 23, 101
հակամարտության բացակայություն, 23
Համաբելառուսական ժողովրդական ժողով (ՀԺԺ), 7, 63
համագործակցություն, 12, 13, 31, 41, 42, 44, 51, 52, 54, 55, 59, 63, 65, 66, 67, 70, 71
համախառն ներքին արդյունք (ՀՆԱ), 7, 16, 17, 20, 23, 52, 101, 104, 105
Համաշխարհային բանկ (ՀԲ), 15, 16, 17, 22, 36, 91

համաշխարհային ռազմականացման ինդեքս (ՀՌԻ), 52, 53
համեմատական վերլուծություն, 14
Հայաստան (ՀՀ), 4, 7, 9, 11, 13, 14, 29, 30, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 52, 53, 98, 99, 100, 101, 102, 103, 104, 105, 106
հայեցակարգ, 64, 90
հանցագործություն, 17, 19, 69
հասարակական կազմակերպություն (ՀԿ), 21, 40, 80, 92
հավաք, 23, 81, 82
Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ), 7, 52, 53, 54, 67, 71, 74
հեղաշրջում, 12, 23, 27, 103
հեղափոխություն, 12, 23, 34, 97, 103
հետընթաց, 12
հետխորհրդային երկրներ, 12, 18
Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպություն (ՆԱՏՕ), 7, 52, 53, 54

Ղ

Ղազախստան / Ղազախստանի հանրապետություն (ՂՀ), 7, 9, 13, 14, 53, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 81, 82, 83, 84, 93, 98, 99, 100, 101, 102, 103, 105, 106
Ղազախստանի ժողովրդավարական ընտրություն, 81
Ղազախստանի ժողովրդի վեհաժողով (ՂԺՎ), 7, 79
Ղրղզստան, 10, 13, 14, 53, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 98, 99, 100, 101, 102, 104, 105, 106

Ճ

ճգնաժամ, 12, 27, 33, 36, 45, 52, 54, 65, 82, 84, 97
ճնշում, 54, 69, 99

Մ

ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, 17, 23
մասնակցություն, 21
Մարդկային զարգացման համաթիվ (ՄԶՀ), 7, 17, 19, 23, 105
մարդու իրավունքներ, 26, 42, 69, 88, 92, 93
մարդու իրավունքներ և ազատություններ, 42, 88
Մեկ գոտի, մեկ ճանապարհ (ՄԳՄՃ), 7, 82
միավոր, 21, 24, 26, 30, 35, 41, 53, 60, 75, 88, 92, 98, 99, 100, 101, 102, 104, 106
Միացյալ ազգերի կազմակերպություն (ՄԱԿ), 7, 17, 23
Միութենական պետություն, 59, 61, 66, 67, 71
միջազգային անվտանգություն, 67
միջազգային կազմակերպություն, 15
միջազգային հարաբերություններ, 4, 5, 11, 45, 51, 53, 59, 60
միջակայք, 24, 26, 30, 41, 60, 75, 88, 92, 98
միջերկրային ինդեքս, 26
միջերկրային վերլուծություն, 10, 13, 14, 23, 24
միջին մակարդակի կայունություն, 26
միջկուսակցական կապեր, 71
միջկուսակցական պայքար, 50
մոդել, 13, 15, 16, 18, 21, 22, 23, 24, 27, 31, 32, 42, 51, 61, 64, 67, 77

Ն

Նազարբան, Նուրսուլթան, 77, 78, 79, 80, 81
նախագահ, 40, 42, 45, 47, 48, 50, 51, 63, 66, 70, 71, 77, 78, 79, 80, 81, 82, 83, 92
նախագահական ընտրություններ, 45, 79
նախագահի որոշում, 79
ներերկրային ուսումնասիրություն, 15
ներերկրային վերլուծություն, 14, 24
ներուժ, 18, 34, 50, 59, 60, 66, 71
ներքաղաքական գործընթաց, 31
ներքաղաքական օրակարգ, 29, 30
նորմալացված արժեքներ, 24, 25
Նուր Օտան, 79, 81

Շ

շարժում, 31, 42, 48, 49, 82
շուկայական տնտեսություն, 77, 93

Ո

որոշում, 31, 32, 33, 34, 39, 46, 63, 71, 79, 80, 83, 87

Չ

չափում, 22, 23, 24

Պ

պասիվ հակամարտություն, 23
պատերազմ, 30, 38
պարադիգմ, 59
Պարեկապահակային ծառայություն (ՊՊԾ), 7, 30
պետական իշխանության ճյուղեր, 78

Անունների և հիմնաբառերի ցանկ

պետական իշխանության մարմին, 16, 32, 41, 42, 61, 71

պետական իշխանություն, 16, 32, 41, 61, 71, 78

պետականություն, 45, 60, 63, 87, 88

պետություն, 4, 7, 12, 13, 14, 15, 22, 23, 27, 35, 40, 41, 42, 44, 45, 49, 51, 52, 54, 61, 63, 64, 66, 67, 68, 71, 75, 79, 81, 84, 86, 87, 88, 92, 94, 97, 98, 99, 100, 101, 102, 103, 104, 106

Պուտին, Վլադիմիր, 45, 47

Ջ

Ջինի ինդեքս, 7, 17, 20, 24, 104, 105

Ռ

ռազմական ակտիվ գործողություն, 23

ռազմական ծախսեր, 52

ռազմական տեխնիկա, 51

ռազմականացման ինդեքս, 53

ռազմավարական, 51, 59, 63, 64, 66, 67, 68, 74, 83

ռազմավարական գործընկերություն, 51, 66

ռազմավարություն, 38, 46, 47, 48, 51, 52, 61, 63, 64, 67, 71, 77

ռիսկ, 22, 38, 44, 48, 55, 56, 65, 66, 71, 90, 99, 103

ռուս-ամերիկյան հարաբերություններ, 51

Ռուսաստան / Ռուսաստանի Դաշնություն (ՌԴ), 7, 9, 13, 14, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 59, 61, 64, 65, 66, 67, 68, 71, 82, 98, 99, 100, 101, 102, 103, 104, 105, 106

Ռուսաստանի անկախ արհմիությունների դաշնություն (ՌԱԱԴ), 7, 50

Ս

Սահմանադրական խորհուրդ (ՍԽ), 8, 78, 80, 81

սահմանադրական կարգ, 41, 42

Սահմանադրություն, 45, 77, 79, 80

սանդղակ, 21, 23, 24, 26, 27, 35, 92, 101, 102, 103, 106

սանդղակավորում, 14

Սենատ, 77

սեփականության իրավունք, 16, 20, 101

սոցիալական անկարգություն, 23, 103

Սոցիալական գործոնների ինդեքս (ՍԳԻ), 8, 14, 25, 37, 43, 62, 76, 89, 104, 105, 106

սոցիալ-տնտեսական ճգնաժամ, 93

սպառնալիք, 29, 30, 34, 35, 41, 55, 67, 75, 84, 86

ստվերային տնտեսություն, 8, 17, 20, 104, 105

Վ

վարկանիշային աղյուսակ, 100, 104, 106

վարկանիշավորում, 15

վարչակազմ, 43

վարչակարգ, 42, 55, 56, 87, 88

վերլուծություն, 4, 16, 23, 46, 93, 97, 99, 106

վերկուսակցականություն, 48

վիճակագրություն, 23

Վրաստան, 13, 54

Տ

տարածաշրջանային ինտեգրում, 13, 18

տարածաշրջանային հակամարտություն, 51, 64

տարածաշրջանայնացում, 42

տարածաշրջանի երկրներ, 12

**ԵԱՏՄ երկրների քաղաքական կայունության մարտահրավերները.
Քաղաքական գործոնների ինդեքսը**

տեղական ինքնակառավարման
մարմիններ (ՏԻՄ), 8, 16, 42, 47, 71,
74, 76, 86

Տնտեսական ազատության ինդեքս
(ՏԱԻ), 8, 16, 19, 20, 101, 102

տնտեսական առաջընթաց, 13

Տնտեսական գործոնների ինդեքս (ՏԳԻ),
8, 15, 17, 25, 37, 43, 62, 76, 89, 104,
105, 106

տնտեսական ճգնաժամ, 12, 84, 93

տնտեսության վարկավորում, 17, 20, 104,
105

Տոկան, Կասիմ-ժոմարտ, 77, 79, 80, 81,
83

տուրբուլենտություն, 9, 12, 59

տվյալ, 4, 15, 16, 17, 21, 22, 23, 24, 35, 36,
37, 43, 52, 53, 62, 76, 89, 90, 91, 92,
98, 99, 100, 105, 106

տվյալների նորմալացում, 21, 22, 23, 24

Ց

ցիվիլիարխիկ, 47, 49, 63, 94

ցնցում, 31, 34, 90, 103

ցույց, 23, 92, 103

ցուցանիշ, 16, 20, 21, 22, 23, 24, 35, 36,
38, 42, 44, 48, 55, 75, 83, 88, 91, 92,
97, 100, 101, 102, 104, 106

7, 93

Ու

Ուկրաինա, 13, 54

ուկրաինական ճգնաժամ, 65, 82

Փ

փափուկ ուժ, 42

փոխլրացման քաղաքականություն, 71

փոփոխական, 15, 16, 18, 19, 20, 22, 23,
24, 35, 101, 102, 103, 105

Ք

քաղաքական արդիականացում, 76, 93

քաղաքական գործընթաց, 12, 46, 56

Քաղաքական գործոնների ինդեքս (ՔԳԻ),
4, 8, 14, 15, 25, 30, 35, 37, 38, 41, 42,
43, 48, 50, 60, 62, 75, 76, 77, 80, 88,
89, 91, 93, 100, 101, 102, 106

քաղաքական իրավունքներ, 8, 11, 16, 19,
21, 35, 92, 98, 101, 102, 106

Քաղաքական իրավունքների ինդեքս, 8,
16, 19, 21, 101

Քաղաքական իրավունքների ցուցանիշ,
21

քաղաքական կայունություն, 4, 11, 12, 13,
15, 16, 18, 21, 22, 23, 25, 27, 29, 31, 34,
36, 38, 40, 42, 48, 49, 50, 55, 56, 60,
61, 62, 63, 74, 84, 88, 90, 91, 93, 94,
97, 98, 99, 100, 101, 106

քաղաքական համակարգ, 10, 12, 18, 25,
26, 27, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 38,
41, 43, 45, 46, 47, 48, 49, 53, 55, 56,
59, 68, 69, 70, 74, 75, 77, 81, 83, 84,
86, 87, 90, 93, 94, 98, 103, 106

Քաղաքական համակարգի կայունության
ինդեքս (ՔՀԿԻ), 4, 8, 9, 11, 12, 13, 14,
15, 16, 18, 19, 20, 21, 25, 30, 35, 37, 41,
42, 43, 48, 49, 50, 60, 62, 75, 76, 88,
89, 97, 99, 100, 101, 104, 106

Քաղաքական համակարգի կայունության
ներերկրային ինդեքս, 26

քաղաքական համակարգի կայունություն,
10, 12, 18, 19, 29, 30, 38, 41, 45, 47,
48, 53, 59, 68, 74, 86, 90, 94, 98, 99,
103, 106

քաղաքական համակարգի տեսություն,
33

քաղաքական մշակույթ, 87

Անունների և հիմնաբառերի ցանկ

քաղաքական փոխակերպում, 49, 75
քաղաքական օրակարգ, 29
քաղաքացի, 22, 26, 42, 47, 49, 63, 79, 86
քաղաքացիական ազատություններ, 8,
16, 19, 21, 35, 92, 98, 102, 106
Քաղաքացիական ազատությունների
ինդեքս, 8, 16, 19, 21, 92, 102
Քաղաքացիական ազատությունների
հարցաշար, 21
քաղաքացիական անհնազանդություն, 8,
12, 16, 19, 23, 27, 29, 30, 33, 42, 48,
55, 69, 70, 75, 77, 81, 82, 97, 98, 99,
101, 103, 106
քաղաքացիական գիտակցություն, 63
Քաղաքացիական հասարակության
կազմակերպություն (ՔՀԿ), 8, 42, 46,
49, 55, 63, 69, 70, 76, 78, 82, 86, 87,
88
քաղաքացիական հասարակություն, 11,
31, 41, 42, 43, 48, 49, 61, 63, 65, 69,
70, 86

քաղաքացիավարական, 42, 50, 54, 82,
88
քաղաքացիավարություն, 48

Օ

օտարերկրյա ուղղակի ներդրումներ
(ՕՈՆ), 8, 16, 19, 22, 36, 44, 66, 80,
90, 91, 101
օրակարգ, 4, 29, 31, 34, 38, 54, 66
օրենք, 13, 21, 26, 32, 79
օրենքի գերակայություն, 13, 21, 26

Ֆ

ֆինանսական ճգնաժամ, 52
ֆինանսական շուկա, 67
ֆինանսատնտեսական ճգնաժամ, 36

ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

**ԵԱՏՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ**

ARUSYAK ALEKSANYAN, ASHOT ALEKSANYAN

**POLITICAL STABILITY CHANGES IN THE EEU
COUNTRIES: POLITICAL FACTORS INDEX**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Լ. Ավետիսյանի

Տպագրված է «ԼԻՄՈՒՇ ՍՊԸ»-ի տպարանում:
ք. Երևան, Դ. Մայրան 45:

Ստորագրված է տպագրության՝ 18.06.2021:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 7,25:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանական գործիքակազմը հնարավորություն է տալիս կատարելու հիմնարար, խորքային և համալիր ուսումնասիրություններ թե՛ ներերկրային, թե՛ միջերկրային մակարդակներում:

Աշխատության նպատակն է գնահատել ԵԱՏՄ երկրների ՔՀԿԻ-ի Քաղաքական գործոնների ինդեքսի միտումները ներերկրային վերլուծության մակարդակում, ինչպես նաև կատարել համեմատական վերլուծություն ըստ դիտարկվող երկրների կայունության ինդեքսի և դրա առանձին ենթահինդեքսների:

Աշխատանքը ՔՀԿԻ-ի մեթոդաբանության կիրառմամբ հերթական և շարունակական ուսումնասիրությունն է:

Արուսյակ Ալեքսանյանը քաղաքական գիտությունների թեկնածու է, ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ամբիոնի դասախոս:

Աշոտ Ալեքսանյանը քաղաքական գիտությունների դոկտոր է, ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի դասախոս և փորձագետ, քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի պրոֆեսոր: